

ՍՈՒՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ծ  
Կ

**ԳԵՎՈՐԳ ՉՄՇԿՅԱՆ**

ԵՐԵՎԱՆ  
1960

A  $\frac{ii}{3752}$

792(47925)(0929524յան)

Հ | Հարությունյան, Ա.

Զ. Զ.

32.804.




АРМЯНСКОЕ ТЕАТРАЛЬНОЕ ОБЩЕСТВО  
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ ХУДОЖЕСТВЕННО-  
ТЕАТРАЛЬНЫЙ ИНСТИТУТ

---

СУРЕН АРУТЮНЯН

**ГЕОРГ ЧМШКЯН**

(Мыслитель и публицист)

---

ИЗДАНИЕ АРМЯНСКОГО ТЕАТРАЛЬНОГО ОБЩЕСТВА  
ЕРЕВАН 1960

ՍՈՒՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

792(47.925)(092 ՁՏԷԿՆԵՐ)

Հ

ԳԵՎՈՐԳ ՉՄՇԿՅԱՆ

(Տեսաբան և հրատարակիչ)

A  $\frac{11}{3752}$









## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Գևորգ Չմշկյանը հանրագիտական դեմք է: Նրան ծնեց 1860—ական թվականների դարաշրջանը:

Հին՝ ավատական հասարակության և նրա կուլտուրայի հոգևարքի, անկման և նոր՝ բուրժուական հասարակության ծննդի և կաղմավորման դարաշրջանը, միաժամանակ, դեմոկրատական լայն խավերի սոցիալական ու ազգային ինքնագիտակցության արթնացման դարաշրջանն էր, աշխարհիկ և առաջավոր ոգով զարգացող կուլտուրայի նշանավոր էպոխան: Երևան եկող և դրսևորվող սոցիալ-դասակարգային հակասությունների մեջ դեմոկրատիան, քաղաքի և գյուղի լայն խավերի շահերն արտահայտող հասարակական այդ ուժը, իր վրա վերցրեց ինչպես ֆեոդալական ինստիտուտների և գաղափարախոսության, այնպես և բուրժուական նոր ինստիտուտների և փողի թագավորության, առևտրի ու վաշխի իրականության քննադատության դերը:

Գ. Չմշկյանի բաղմակողմանի գործունեության մեջ արտացոլվեց նոր կազմավորվող աշխարհիկ կուլտուրան, նա արտահայտեց նրա պահանջները և ընդառաջեց 1860-ական թվականների դարաշրջանի պրոգրեսիվ խնդիրներին:

Նույն այդ դարաշրջանի մղումով Չմշկյանը նետեց իրեն հասարակության լայն շրջանների վրա գաղափարապես և դեմոկրատական-սոցիալական մտածողությանը ներգործելու հոգևոր կուլտուրայի այնպիսի մի կարևոր բնագավառ, որպիսին թատրոնն էր, բացահայտելով իր տաղանդն այդ

արվեստի բոլոր ճյուղերում: Նա և՛ դերասան է, և՛ ռեժիսոր-  
թատերական մանկավարժ, թատրոնի ասպարիզում հասա-  
րակական գործիչ ու թատրոնի կազմակերպիչ, դրամատուրգ-  
գրող, և հայ թատրոնի ռեպերտուարը ստեղծող ու հարստաց-  
նող, դրամատիկական երկերի թարգմանիչ և դրամատիկա-  
կան գրականության օտար օրինակները ազգային միջավայրը  
փոխադրող-հեղինակ:

Զարմացնում է, անշուշտ, այն, որ Գևորգ Չմշկյանը, շրս-  
տանալով մասնագիտական կրթություն, հայ թատրոնի բեմի  
վրա շատ արագ կերպով խոշոր հռչակ ձեռք բերեց և իբրև  
դերասան հանդիսացավ ազգային-ռեալիստական շկուլայի  
հիմնադիր դեմքերից մեկը: Ծիշտ է, սկզբնական շրջանում,  
նա ելույթ է ունենում պատմական ողբերգությունների ներ-  
կայացումներում. Գալֆայանի, Կարենյանի, Հեքիմյանի,  
Քերզյանի պիեսներում ևս նա առաջատար դերասան էր:  
Սակայն անցնում են ողբերգություններով համբավված  
օրերը: Չմշկյանը նույնքան արագ շրջադարձ է կատարում  
դեպի ռեալիզմը, խորապես ըմբռնելով ռեալիստական ուղ-  
ղության պատմական՝ անհրաժեշտությունը: Այժմ նրա հա-  
մար սկզբունքային մեծ նշանակություն են ստանում ամենից  
առաջ Սունդուկյանի դրամատուրգիան, ապա նաև թատերա-  
գիրներ Տեր-Գրիգորյանը, Փուլինյանը, Պատկանյանը: Նա  
կերտում է սոցիալական անանցանելի ուժի և նշանակության  
հերոսական կերպարներ հայ ռեալիստական թատրոնի ռե-  
պերտուարում և տալիս է այդ արվեստի բարձր օրինակը:  
Քայց նրա դերացանկը վերին աստիճանի ընդարձակ է, նրա,  
որպես արտիստի, դիտարկող լայն է: Ռուսական դասական  
դրամատուրգներ և գրողներ՝ Գրիբոյեդովը, Պուշկինը, Սուխո-  
վո-Կորյուինը, Օստրովսկին, հանձին Չմշկյանի, ունեցել են  
իրենց ակտիվ պրոպագանդիստին հայ իրականության մեջ:  
Դերասան Չմշկյանը մեծապես նպաստել է Շեքսպիրի, Մո-  
լիերի, Գոլդոնիի, Շիլլերի, Հյուգոյի, Դյումայի ժողովրդակա-  
նացմանը հայ թատրոնի բեմից: Ի վերջո, նա դրել է այն  
հիմնաքարերը, որոնց վրա պետք է բարձրանար հայ թատրո-  
նի ապագա շինությունը:

Գևորգ Չմշկյանը (հայտնի իրողութիւնն է) խոշորագույն գեր է կատարել հայ պրոֆեսիոնալ նոր թատրոնի պատմութեան մեջ նաև իբրև կազմակերպիչ: Պոռշյանի ու Ամերիկյանի հետ, ապա և Ամերիկյանի հետ, անջատվելով Պոռշյանից, հետագայում ինքն անձամբ, առանց Ամերիկյանի, անդուլ պայքար է մղել հայ դերասանական ուժերը համախրելու, նրանց աճեցնելու, նրանց ունակութիւններն ու տաղանդը բացահայտելու գործում: Հայ նոր դերասանական խումբը կրել է Չմշկյան-Ամերիկյան անունը, շատ հախած՝ Չմշկյան անունը, որն իր կնիքն է դրել 1860-ական, 1870-ական և հետագա տարիներին հայ թատերական կյանքի վրա: Իբրև կազմակերպիչ, Չմշկյանը հաղթահարել է բազմաթիվ խոշընդոտներ և նույնքան տաղանդավոր է եղել, որքան որպես դերասան-արվեստագետ և տեսաբան ու հրապարակախոս: Նա շատ դերասանների խորհրդատուն էր և բարեկամը, նրա գործունեութիւնից ու կյանքից անբաժան են Ամերիկյանը, Ս. Մանդինյանը, Ք. Արամյանը, Ս. Մատինյանը, Ա. Սուքիասյանը, Ա. Մանգինյանը, Ս. Չմշկյանը. նաև նրան ենք պարտական, որ Կովկասում երևաց արևմտահայ դերասանների մի ամբողջ խումբ, որի մեջ Պ. Աղամյանը:

Գ. Չմշկյանը խորապես ըմբռնել է գրականութեան, տպագիր խոսքի, տպարանական գործի կազմակերպման խիստ մեծ անհրաժեշտութիւնը հայ գեմոկրատական կուլտուրայի զարգացման ասպարիզում: Նա Սունդուկյանի ու հրատարակիչ Հ. Էնֆիճյանի հետ կազմակերպում է հայ գրամատիկական գրականութեան տպագրութիւնը Կովկասում, ինքը ևս գրում է պիեսներ, արձակ գործեր, գրակորում է իրեն այնպիսի մի բարդ ասպարիզում, ինչպիսին է եղել թատրոնի տեսութիւնը և թատրոնի հրապարակախոսութիւնը:

Իհարկե, Գևորգ Չմշկյանի հոգևոր ստեղծագործութեան մեջ առաջատար նշանակութիւն է ունեցել դերասանը և նրա կյանքը բնաւ վրա: Սակայն դրան հավասար, Չմշկյանի գործունեութեան առավել աչքի բնկնող աշխարհը թատրոնի էսթետիկան էր, թատրոնի տեսութիւնը, թատերական քննադատութիւնը և հրապարակախոսութիւնը: Նա թողել է տեսա-

կան մի ժառանգութիւն, որը գաղափարական շուշու է սփռում ոչ միայն իր, այլ ամենից առաջ այն սերնդի կյանքի վրա, որին պատկանել է ինքը, և որի ամենախոշոր ներկայացուցիչներն էին Սունդուկյանն ու Ամերիկյանը: Սունդուկյան, Ամերիկյան, Չմշկյան—ահա՛ այդ սերնդի հոգևոր հայրերը, որոնց բարձրացրած դրոշի տակ հավաքվեցին հայ նոր թատրոնի գործիչներ՝ նույն Ս. Մանդինյանը, Ք. Արամյանը, Ս. Չմշկյանը, Ա. Սուբխասյանը, Ս. Մատինյանը, Ա. Մանդինյանը, հետագայում՝ նոր դեմքեր, մի քանի սերունդ:

Սունդուկյանը, Ամերիկյանը, Չմշկյանը և նրանց սերունդն էր, որ հաստատեց ռեալիզմը հայ դրամատուրգիայում, բեմի վրա և տեսութեան մեջ, պայքարեց ղեմակրատական իդեալների համար ազգային թատրոնում, հենարան ընտրեց ամենից առաջ ռուսական դասական դրամատուրգիան և թատերագիտական առաջավոր ռուսական միտքը, օգտագործեց արևմտասկզբայական դասական դրամատուրգիայի և թատրոնի փորձը, բարեկամութիւն ստեղծեց անդրկովկասյան ժողովուրդների գրական-թատերական գործիչների միջև, իր գեղարվեստական գործունեութեան մեջ արտացոլեց իրական կյանքի պատկերը, հայ թատրոնի հետագա արվեստագետներին դաստիարակեց ռեալիզմի ոգով:

Սունդուկյան-Ամերիկյան-Չմշկյան—հայ նոր թատրոնի այդ «տիրութիւնը»— ինքն էր ստեղծում ռեալիստական հայ դրամատուրգիան (Սունդուկյան), ինքն էր տալիս ազգային-ղեմակրատական թատրոնի կերտման օրինակը (Չմշկյան, Ամերիկյան), ինքն էլ ծնում էր այդ թատրոնի տեսութիւնը (Ամերիկյան, Չմշկյան), երկարատե և համառ պայքար էր մղում ռեալիզմի համար հատկապես տեսութեան մեջ (Չմշկյան):

Ամերիկյանը և Չմշկյանը լավ են արտացոլում Սունդուկյանին բեմի վրա: Ամերիկյանը և Չմշկյանը խորապես հիմնավորում են Սունդուկյանի անհրաժեշտութիւնը հայ իրականութեան և կուլտուրայի համար: Սունդուկյանը ծնում է իր դերասաններին՝ Ամերիկյանին ու Չմշկյանին: Չեւալորում է ազգային-ռեալիստական շկոլան դերասանական կատարո-

դական արվեստի մեջ. դա հենց Ամերիկյանի ու Չմշկյանի շկոլան էր: Սրանք հաստատում են Սունդուկյանին թատրոնում, կյանք են տալիս նրա դրամատուրգիային ու կերպարներին, նաև տեսականորեն իմաստավորում՝ ռեալիստական դրամայի, առհասարակ դրամատուրգիայի առաջնային դերը թատերական արվեստում:

Սունդուկյանը, Ամերիկյանը, Չմշկյանը «լրացնում են» միմյանց, բացահայտում միմյանց, բոլորը միասին՝ մի օրգանական ամբողջություն, լավագույն ձևով արտահայտում են ժամանակի պահանջները, դարգացնում հայ ժողովրդի կուլտուրայի նշանավոր մի բնագավառը՝ թատրոնը:

Գևորգ Չմշկյանի վրա, Ամերիկյանի հետ և նրա վաղաժամ մահվանից հետո, ընկավ ոչ միայն հայ նոր թատրոնի ղեկավարման, այլև նրա տեսութայն՝ մշակման ծանր, բայց խիստ շնորհակալ գործը — կովկասահայ իրականության մեջ:

Այդ տեսության մասին է խոսքն այս աշխատության մեջ: Պատմականորեն Գ. Չմշկյանի տեսական ժառանգությունը հաջորդում է Մ. Նալբանդյանի և «Հյուսիսսփայլի» ուղղութայն թատերագիտության ու թատերական քննադատությանը, իսկ սրանց նախորդը, ժամանակի իմաստով, Սարգիս Տիգրանյանն էր<sup>1</sup>: Մ. Նալբանդյանի թատերագիտությունը հանդիսացավ հայ ռեալիստիկ-դեմոկրատական մտքի արտահայտությունը թատերական արվեստի հարցերում:

Գևորգ Չմշկյանի տեսական ժառանգության՝ մեջ դրսևորվեց Մ. Նալբանդյանին անմիջապես հաջորդած հայ թատերագիտական միտքը, որն այլևս կապված է ազգային թատրոնի ավելի հարուստ պրակտիկայի հետ, արտացոլում է այդ պրակտիկայից բխող նոր խնդիրներն ու, թեև այն չի հասնում Մ. Նալբանդյանի ռեալիստիկ-դեմոկրատիզմին, սակայն՝ ամեն պարագայում կրթող կերպով պաշտպանում է

<sup>1</sup> Տե՛ս Ռ. Զարյան՝ «Պայքար ռուս դրամատուրգիայի համար հայ թատրոնում», Հայպետհրատ, Երևան, 1954 թ., էջ 57—74 և Ա. Արշարունի՝ «Հայ թատերագիտական մտքի պատմությունից» աշխատությունը, Հայկական ՍՍԻԻ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1956 թ.:

ռեալիզմը դրամատուրգիայում ու թատրոնում, խորացնում է պրոֆեսիոնալ թատրոնի տեսական հարցերի մշակումը, ստեղծում է թատերագիտական այնպիսի մի ժառանգություն, որը մերձեցնում է հայ թատրոնի միտքը Կ. Ս. Ստանիսլավսկու հռչակավոր սիստեմին:

Հրատարակելով «Միհրդատ Ամերիկյան» (1959 թվական) և «Գաբրիել Սունդուկյան» (1960 թվական) մենագրությունները, ներքին պահանջ զգացի գրել նաև «Գևորգ Չմշկյան» ներկա աշխատությունը, նվիրելով այն երախտավոր գործչի աչքա՛ն արժեքավոր տեսական ժառանգությանը և հրապարակախոսությանը:

---

## ԱՌԱՋԻՆ ԳՐՈՂԸ

Իր իսկ վկայութեամբ, Գևորգ Չմշկյանը ծնվել է 1837 թվականին, Թբիլիսիում: «Մշո աշխարհից» է գաղթել նրա պապը իր «ամբողջ ցեղի» հետ<sup>1</sup>: «Մշո աշխարհից» է գաղթել նաև Միհրդատ Ամերիկյանի հայրը: Մենդավայրում որմնադիր-արհեստավոր Չմշկյանը Թբիլիսիում դառնում է կաթողիկոսի «փոքրավորը», ապա և քահանա, որի ընտանիքում էլ ծնվում է Գևորգը: «Միշտ դեպի Հյուսիս», այսինքն դեպի Ռուսիա, Ռուսաստան — այս է եղել Չմշկյան «ամբողջ ազգատոհմի» գաղթականության նշանաբանը: Գ. Չմշկյանը մի առանձին ոգևորությամբ է մտաբերում իրենց ազգատոհմի այդ ավանդը և իր կյանքով ու գործունեությամբ կարծես ձգտել է մարմնավորել նրա ներքին իմաստը, ընդգծել իր հոգևոր կապը Ռուսաստանի ու ռուսական կուլտուրայի հետ: Նրա կրթության ու մտավոր աճելության հանգամանքները ևս այդ են ապացուցում:

Վրաստանը, Թբիլիսին արդեն միացել էին Ռուսաստանին: Պատմական խոշորագույն այդ ակտի բարերար արդյունքներն ակնառու փաստ էին հասարակության կյանքում: Ծիշտ է, դարասկզբին տիրացուները խեղդում էին մանուկների

<sup>1</sup> Գևորգ Չմշկյան, «Իմ հիշատակարանը», տեքստը պատրաստեց և ծանոթագրեց, առաջաբանով Ս. Ա. Մելիքսեթյանը, Հայկական ՍՍԻ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1953 թ., էջ 4: Այսուհետև՝ Չմշկյան, «Իմ հիշատակարանը» և էջը:

բնական ձգտումները, լեցնում նրանց միտքը սնոտիապաշտություններով, բայց Գևորգ Չմշկյանին մենք հանդիպում ենք ոչ միայն ֆալսիֆակայի «հերոսների» շրջանում, նաև Ներսիսյան դպրոցում; որից հեռանալով նա, ինչպես ինքն է գրում, «բստ ցեղական ավանդության» շտապում է դեպի Հյուսիս — «այդ ավետյաց երկիրը»<sup>1</sup>:

Մեծ խզում առաջ եկավ պատանի և երիտասարդ Գևորգի իդեալների և շինովնիկական-աղայական, վաշխառու-վաճառականների իրականություն միջև: Պետերբուրգը և Մոսկվան խանդավառում էին նրան, նա հիացած է իր առջև բացված հեռանկարներով, սակայն այլ էր նրա ապագան տնօրինելու կոչված մարդկանց վերաբերմունքը: Նա ճաշակեց անտարբերություն դառնությունը, նրա դեմ փակեցին Պետերբուրգի ու Մոսկվայի ուսումնական հաստատությունների դռները և նա արտասուքն աչքերին վերադարձավ ծննդավայր: Սակայն Գևորգն արդեն տիրապետում էր ուսերեկին, ուսերենի օգնությամբ սովորում ու վերջապես ավարտում է Քրիլիսիի Հողաշափական ուսումնարանը և դառնում պաշտոնյա — «ուժ տարվա ընթացքում (1854—1862) պատեչով Կովկասի և Անդրկովկասի քաղաքների և գյուղերի մեծ մասը... միշտ զգալով... երիտասարդական գործունեության աննպատակ էությունը»<sup>2</sup>: Հողաշափական ուսումնարանում սովորելու տարիներին էլ Չմշկյանը մասնակցություն է ունենում ընտանեկան-աշակերտական ներկայացումներին («Շկոլի վարժապետ», «Ռուս նալատորմի պապը» պիեսներում), ապրելով իր մեջ արթնացած առաջին սերը դեպի թատրոնը<sup>3</sup>:

Գևորգ Չմշկյանը դեռևս ո՛չ դերասան է և ո՛չ, մանավանդ, թատրոնի տեսարան, բայց նրա մեջ արդեն եռում է այդ արվեստին նվիրվելու կիրքը. նա տրվում է ինքնազարգացման, կարդում է և անվերջ կարդում, շատ արագ է աճում նրա միտքը, թատերական Քրիլիսին նրան մղում է դեպի գործունեություն և ահա՛ — 1863 թվականին, հայ նոր թատրոնի

<sup>1</sup> Չմշկյան, «Իմ հիշատակարանը», էջ 6:

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 17:

<sup>3</sup> Նույն տեղը:

զարթոնքի նշանավոր այդ տարին, «փառահեղ շինումնիկ», շարժումներով ու կոկարգով Չմշկյանը կանգնում է Քաղաքացիական թատրոնի առաջ, ուր հունվարի 3(15)-ին տրվում էր «Արշակ Բ» և «Դալալ Ղազո» նրկայացումը միևնույն երեկոյին: «Այդ ներկայացումից հետո ես վճռեցի... ի՞նչ եք կարծում, ի՞նչ... նվիրել ինձ թատրոնին, մեկ կողմ թողնելով իմ փայլուն կոկարգս ու զնդզնգան շարժումներս», — գրում է Չմշկյանը<sup>1</sup>:

Այսպես սկիզբ առավ Չմշկյանի կյանքը թատրոնում ու բեմի վրա, այստեղից բոլորովեց նրա մեջ տեսական միտքը, որը զարգացավ հայ թատրոնի պրակտիկայի հետ, վերջինիս թելադրանքով, ապա և աղղեց նրա վրա, ղեկավար դեր խաղաց այդ պրակտիկայի հարստացման գործում:

Բոլորովին պատահական չէ, որ նորաստեղծ հայ թատրոնի պաշտպանությունը և նրա ծրագրի մշակումը, մասնավորապես առաջին շրջանում, մի անհատի գործը շղարձավ, այլ մի ամբողջ կոլեկտիվի, համախոհ մարդկանց գործը, որոնք բմրանեցին և հասկացան ինչպես իրենց օրերի պահանջը, այնպես և իրենց դերն ու անելիքն այդ օրերին:

Ի՞նչ գլխավոր խնդիրներ ծագեցին Չմշկյան-Ամերիկյան խմբակի առաջ:

Ամենակարևոր, ամենակենսական խնդիրը՝ հոգևոր կուլտուրայի զարգացման նոր ուղիների հարցն էր, այդ կուլտուրայի հետ և՛ թատրոնի նոր ուղիների, նրա աշխարհականացման, արմատական վերանորոգման պրոբլեմը:

Սրանից բխում էին բոլոր մյուս հիմնական հարցերը — արդյոք ընդունեն՞լ հին, պատմական, պատմա-կրոնական թեմատիկան և հին, գրաբար, կիսա-գրաբար լեզուն գրամատուրգիայում և բեմի վրա, թե՞ մերժել այն, մերժել նրանց գաղափարախոսների հետադիմական դրույթները:

Առաջացավ երկու «պարտիա» (ժամանակի տերմինն է), — առաջացան հնի և նորի ուղղութիւնները: Նոր ուղղութիւնը գլուխ կանգնեցին թատրոնում Ամերիկյանը և Չմշկյանը:

<sup>1</sup> Չմշկյան, «Իմ հիշատակարանը», էջ 21:

ներ: Նոր ուղղութիւնն էլ, հենարան ընդունելով Սունդուկյանին, նաև Տեր-Գրիգորյանին, Փռուխյանին, հիմնովին վերափոխեց թատրոնի ռեպերտուարը, ամեն շանք գործադրեց մտեցնելու թատրոնը արդիականութեանը և իրականութեանը, սոցիալական կյանքի պրոբլեմներին, պայքարեց փողի գերիշխանութեամբ ստեղծված ալյանդակ երևույթների դեմ, բեմի վրա պատկերեց «Հասարակի», ժողովրդի ողբերգական կացութիւնը և արտահայտեց նրա բողոքն ու ցասումն ընդդեմ տիրող բուրժուական խավերի: Չմշկյան-Ամերիկյան ուղղութիւնը, պրակտիկայում և տեսութեան մեջ լուծում է ոչ միայն այս պրոբլեմները, նաև դրանց սերտորեն առնչվող կատարողական նոր արվեստի մշակման, ռեալիստական թատրոնի, ռեալիստական խաղաոճի ստեղծման, հանդիսականի, թատրոնի պահպանման, նրա գոյութեան խնդիրները:

Չմշկյան-Ամերիկյան ուղղութեան քաղաքացիական ու գաղափարական խիզախ ոգին ակնհայտ է: Ակնհայտ է նաև նրա ապրած ծանր դրաման այն դաժան ու անհավասար պայքարի պայմաններում, որ մղում էր այդ ուղղութիւնն իր սկզբունքային դիրքերի համար ինչպես ավատական գաղափարախոսութեան, այնպես և բուրժուազիայի էգոիզմի, նրա ստեղծած գեհնիկ շահի մտայնութեան ու հոգեբանութեան դեմ:

Գևորգ Չմշկյանի մտավոր զարգացման ինքնաբերութեամբ իրեն իսկ՝ հեղինակի կողմից, տրված է բավական տարածուն կերպով, նաև, ցավոք սրտի, ոչ կայուն հասկացութիւններով: Կարևորը, սակայն, նրա մտավոր զարգացման ոգին է, հայացքների հետևողական այն ընթացքը, որ ապրել է նա և որով ոչ միայն հարել, այլ զգալի շարժով նպաստել է դեմոկրատական էսթետիկայի զարգացմանը թատերական արվեստի տեսութեան մեջ: Չմշկյանը գրում է.— «Ես կատարյալ ուսումնական էի: Կարդում էի Բելլինսկի և մեկ քանի ժամանակից հետո անցա դեպի Բոբլը, որից իմացա, որ ես սաստիկ կոսմոպոլիտ պիտի լինեմ և հենց այդ ժամանակներում վրա հասավ Լյուիսի ուսական թարգմանութիւնները, և ես սովորեցի, որ շինովնիկական փորումս շատ դժ-

վարությամբ են պատրաստվում իմ կերած հյութերի խառնուրդները, որոնցից գոյանում են մաղձ և արյուն: Մեկ խոսքով՝ սարսափելի ուսումնական և գիտնական շինովնիկ էի»: Նա մեկ անգամ ևս տալիս է «Բեկինսկի, Բոբլ, կուխս» անունները<sup>1</sup>:

Չմշկյանը տրամադրված էր իրեն կոսմոպոլիտ համարել և այդ ա՛յն պարագայում, երբ նա իր շուրջը տեսնում էր թանձր գույներով արտահայտվող ազգային պահպանողականություն, ազգային ընդերքի և կեղևի հավերժ պահպանման սեփական մի շնորհից, ազգային սահմանափակություն, նաև ազգայնական սնապարծության քարոզ, երկրի, ժողովրդի կյանքի, նրա կուլտուրայի հետամնացության առկայության դեպքում:

Չմշկյանի «կոսմոպոլիտիզմը» հօդս է ցնդում հայ թատրոնի հետ շփվելուց հետո, հայերեն առաջին ներկայացումը դիտելու գիշերը: Նա ասում է.— «Ուսումնական կոսմոպոլիտս մտա հայկական թատրոն և զգացի, որ հայ եմ: Հայտնի բան է, ևս նույն ժամին թեև շատ ամաչում էի իմ հայ լինելուցս, նամանավանդ, որ դա իմ համազգակից ինստիտուտկաների համար «զզվելի» էր, բայց այն բոլորին երջանիկ էի իմ ծագումովս»<sup>2</sup>: Կարելի է համարձակ կերպով պնդել, որ Չմշկյանի թվացյալ ու կարծեցյալ «կոսմոպոլիտիզմը» ազգային պահպանողականության դեմ նրա ասյրած քննադատության արդյունք էր, որի հիմքում, սակայն, կար և զարգանում էր նրա իսկական հայրենասիրությունը և դեպի հարազատ ժողովուրդն ունեցած ճշմարիտ սերը, միացած նաև մյուս ժողովուրդների՝ ռուս, վրաց, ադրբեջանցի և այլ ժողովուրդների հանդեպ տածած նրա սիրուն: Նա վերստին տալիս է Բեկինսկու անունը, այս անգամ խանդավառված այն մեկնաբանությամբ, որ գտել էր նա Բեկինսկու մոտ Շիլլերի «Ավագակների» մասին»<sup>3</sup>: Մի այլ առիթով Չմշկյանը խոստովա-

<sup>1</sup> Չմշկյան, «Իմ հիշատակարանը», էջ 18:

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 19:

<sup>3</sup> Նույն տեղը, էջ 102:

նում է, որ ինքը հայրենասեր է և այս ինքնաբերական թացարձակ ճշմարտություն էր<sup>1</sup>:

Ինքնավատահույսյան անկեղծ պահերին, նաև իր գործունեության ու ամբողջ կյանքի օրինակով, իր տեսական ժառանգության էությունը Չմշկյանը հաստատում էր այն միտքը, որ նա ամենից առավել շահով պարտական է եղել Բելիսկուն, 1860-ական թվականների ռուս մտավոր շարժմանը, ռուս գրականությանը: 1865 թվականի հունիս ամիսը, Ամերիկյանի և Մանդինյանի հետ դեպի Ղարաբաղ և Հայաստան կատարելիք ճանապարհորդությունը վերհիշելիս, Չմշկյանը չէր մոռանում մտաբերել, որ նա հենց այդ ժամանակ, այդ տարիներին տոգորված է եղել «ռուսաց գրականության ուղղությունով», նրա «իդեալական (գաղափարական) ուղղությունն է պատկանելի»<sup>2</sup>: Ծիշտ չէր ռուս գրականության բաժանումը ռեալական և իդեալական (գաղափարական) ուղղությունների միջև: Չմշկյանը պետք է նկատեր, որ ռեալիզմն ու գաղափարախոսությունը միաձուլվել են: Կարևորը տվյալ դեպքում այն էր, որ Չմշկյանը բարձրանում էր ռուսական հոգևոր կուլտուրայի յուրացման ճանապարհով, նրա ուժեղ ազդեցության տակ էր, երբ 1864—1865 թվականներին, Ամերիկյանի և Մանդինյանի, ապա Ամերիկյանի, Մանդինյանի ու Սուբիասյանի հետ, միացյալ ուժերով հանդես էր գալիս արդեն մամուլում, նրանց հետ ստորագրում էր իրենց դերասանական ընկերության ընդհանուր պլատֆորմը և ծրագիրը, կազմակերպում գաղափարական այն առաջին գրոհը, որը Մ. Նալբանդյանից ու «Հյուսիսամիայից» հետո, կովկասյան պայմաններում խոշոր նշանակություն ունեցավ հայ ռեալիստական թատրոնի ուղին մատնանշելու գործում<sup>3</sup>: Տեսական առումով, նաև Չմշկյանի կողմից ստորա-

<sup>1</sup> Չմշկյան, «Իմ հիշատակարանը», էջ 103:

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 44:

<sup>3</sup> Չմշկյան—Ամերիկյան ընկերության անդամների կողմից միացյալ շարժած այդ փաստաթղթերի մասին տե՛ս տողերիս հեղինակի «Միհրդատ Ամերիկյան» մենագրությունը, էջ 52—53 և 72—74: Հայկական թատերական ընկերության հրատարակություն, Երևան, 1959 թ.:

զրված հայտնի Երեք-ի և Չորս-ի փաստաթղթերն ունեին սկզբունքային այն արժանիքը, որ ազգարարում էին նոր, ռեալիստական թատրոնի ծնունդը, որ հայ թատրոնը նրանք կապում էին քաղաքակիրթ ժողովուրդների թատերական կուլտուրայի հետ, հրաժեշտ էին տալիս կլասիցիստական, պատմական ողբերգությունների «պարտիային» ու ռեպերտուարին, պաշտպանում էին արդիականութունն արտացոլող դրամատուրգիան ու ռեպերտուարը, անկախություն էին հաստատում, անկախություն՝ վաճառականի և բուրժուազի փողի քսակից, այն ստորացուցիչ վիճակից, որի մեջ դնում էր արվեստագետին աշխարհի քսակն ու նրա տիրոջ արհամարհանքը դեպի նույն արվեստագետը:

Տեսական այս առաջավոր ելակետները միանգամայն համապատասխանում էին կյանքի նոր պահանջներին, որոնց հետևանքով էլ ստեղծվող հայ նոր թատրոնի ռեպերտուարը մտան Օստրովսկու, Սուխովո-Կորեյլինի, Հյուգոյի երկերը և հող էր նախապատրաստվում Շեքսպիրի ու մանավանդ Սունդուկյանի համար:

Չմշկյան—Ամերիկյան դերասանական ընկերության գաղափարական-տեսական պայքարի առաջին քայլերը ցույց էին տալիս, որ, թեև ծանր գնով, ռեակցիայի դեմ մարտնչելու բոլորովին անհավասար պայմաններում, սակայն հաստատապես ու աննահանջ, Չմշկյանը և ընկերությունը կանգնել էին ճիշտ ճանապարհի վրա:

1864—1865 թվականներին տրված գաղափարական-տեսական պայքարի առաջին դրոհից հետո նկատում ենք, որ Չմշկյանը գործում է այլևս ինքնուրույն որպես տեսաբան, հանդես է գալիս սեփական անունից, իբրև ուրույն մտածող, միայն իր ստորագրությամբ:

Տեսական այս անկախ գործունեությունը բնավ չէր նշանակում, թե նա՝ Չմշկյանը դուրս է գալիս ժամանակի մթնոլորտից, դավաճանում է ռեալիզմին, ռեալիզմի էսթետիկային: Բոլորովին ո՛չ: Նրա մտքի հասունությունը վկայող այդ գործունեությունն ապացուցում է նրա հավատարմությունը ռեալիզմին և էսթետիկական առաջավոր իդեալներին:



ՐՈՒՐԺՈՒԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ —  
ԹԱՏՐՈՆԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՏԵՂԾՄԱՆ ՀԻՄՔ

Ինչու՞ զոհարերել կյանքը թատրոնին, ի՞նչ նպատակ ունի թատրոնը, ի՞նչն է դեպի թատերական արվեստն ունեցած անձնուրաց սիրո աղանդը: Այս հարցը տալիս է իրեն ամեն մի մտածող արվեստագետ, տվել է և Չմշկյանը: Պարզ և որոշ է, որ Չմշկյանը սիրել է տեսությունը ո՛չ տեսության համար: Իրականությունը, կենդանի կյանքը ճանաչելու և հասկանալու դժվարին գործում տեսությունը վստահելի միջոց էր և Չմշկյանն օգտագործում է տեսությունը հենց իրականության ճանաչողության, իսկ ճանաչելուց հետո նաև նրա քննադատության համար: Այո՛, այդպես: Չէր ծնվի ո՛չ դերասան, ո՛չ գործիչ և ո՛չ տեսաբան Չմշկյանը, եթե ծնված չլիներ կենդանի կյանքը ճանաչելու նրա կիրքը, և այդ աղնիվ կիրքը անհրաժեշտություն չդարձներ իրականության քննադատությունը — բեմի միջոցով, տեսության միջոցով:

Գևորգ Չմշկյանի (և նրա սերնդի) առաջ կանգնած էր հետամնաց, տգիտության մեջ խարխափող մի հասարակություն, որը ինքն իր ներսում տառապում էր սոցիալական-դասակարգային հակասություններով, որին սպառնում էր նաև ցարիզմի վարած ասիմիլյատորական քաղաքականությունը և հայ բուրժուազիայի գիշատիչ հոգեբանությունը՝ փող դիզելու նրա կործանարար պրակտիկայով:

Ինքը՝ Չմշկյանը, հետադարձ հայացք նետելով 1850—

1860-ական թվականների իրականութան վրա, վերհիշելով անցյալը, ապա և գնահատական տալով այդ իրականությանը, քաղմիցս նկարագրել է հասարակական կյանքի այս մոայլ պատկերը. «...մեռած և գոլորշիով պատած, թմրության մեջ ընկղմված, բթամիտ քաղաքացիներու մաշված կյանք...»<sup>1</sup>:

Այդ «թմրած հասարակության մեջ»<sup>2</sup> նա առանձնապես ընդդռում է «կեղտի մեջ թաղված բուրժուազիայի» տիպը, նկատել է տալիս, որ իրականությունը «ժանրաբեռնված» (Չմշկյան) էր «հին ապականված հայ բուրժուազիայի ներկա կյանքով»<sup>3</sup>:

Չմշկյանը ծաղրում էր թատրոնի դահլիճը մտնող շուկայի և ցարական ապարատի «հերոսներին»՝ ու ամեն տեսակ բախտախնդիր... հաստաքիթ, հաստափոր, բարակափոր, խիտամազ, սերտամազ և այլ զանազան տեսակ վաճառականների, շինուլնիկների և անհայտ գործունեության տեր մարդկանց, այն «սոնիշկաներին, լիզաներին, կեկեկներին, անիշկաներին, Սուսաննա Իվանովնաներին», որոնք կյանքի տերերն էին, որոնց համար արվեստը և թատրոնը, այն էլ հայկական ներկայացումը արհամարհանքի առարկա էին<sup>4</sup>: Իրական կյանքում, օրինակ, Գանձակ քաղաքում, Չմշկյանը դիտել է «... մեռելություն քոլորի շուրջը, ստրկության մեջ խեղդված ժողովուրդ և նորա վերա տիրապետող քեզերի հալածող ու մաշող ուժը»<sup>5</sup>: Բուրժուազիայի ստեղծած հասարակության մեջ, նրա կառույցած իրականության մեջ Չմշկյանը լավ է տեսել «այդ մարմնի ամբողջության զզվելի և գարշելի մասերը», Սուսաննայի նկարագրած զամբախովներին իրեն կողմից հռչակելով «հասարակության դահլիճներ»<sup>6</sup>:

<sup>1</sup> «Մշակ», 1875 թ., № 41:

<sup>2</sup> «Մեղու Հայաստանի», 1884 թ., № 81:

<sup>3</sup> Նույն տեղը:

<sup>4</sup> Չմշկյան, «Իմ հիշատակարանը», էջ 20:

<sup>5</sup> Նույն տեղը, էջ 45:

<sup>6</sup> Նույն տեղը, էջ 78:

Հարցը միայն այն չէր, որ Չմշկյանը լայն ճանապարհ է բացել Սունդուկյանի առաջ բեմի վրա, այլև իր կողմից վերախմբատալորել է այն իրականությունը, որ արտացոլվել էր դրամատուրգի երկերում, հաճախ իր մտքի սուր սլաքներն ուղղելով իրական կյանքի դեմ, կյանքում թագավորող սոցիալական շարիքի դեմ:

Չմշկյանը իրավացի և խոր դժգոհություն է հայտնել այն քննադատներից, որոնք Սունդուկյանին լավ չէին հասկանում, չէին քննադատում դրամատուրգի երկերում երևան եկող իրականությունը վերաբերող ծանրակշիռ պրոբլեմները, օրինակ, նրանք հաշիվ չէին տալիս իրենց, որ «էլի մեկ զոհ» մեջ արտացոլվել է ոեալ կյանքին հասցեագրված այնպիսի մի կարևոր հարց, որպիսին էր «հին սերնդի հարստահարող ճնշումը նոր սեփնդի վերա»<sup>1</sup>:

Դերասան և քննադատ Չմշկյանն ինքը շատ լավ էր ճանաչում իրականությունը, և մինչև գրիչն իր ձեռքը վերցնելը, նրա աչքերի առաջ կանգնած կենդանի կյանքն արդեն իսկ դաշրույթ էր առաջ բերում նրա մեջ:

Բնորոշ է այն, որ նա կյանքի մասին իր խոհերն ու դատողությունները շարադրելիս երկփեղկված է տեսնում հասարակությունը, սոցիալապես շերտավորված: Բուրժուա տերմինը նրա հոգվածներում շատ որոշակի սոցիալական իմաստ ունի. դա միայն ունեւոր խավը չէ, այլև դահիճ, այլև հարքստահարող, որին արվեստի մեջ պետք է պատկերել ոչ վերացականորեն, հայեցաբար, բայց անպայման կոնկրետ և ակտիվ վերաբերմունք ցույց տալով նրա հանդեպ, վիրահատական դանակը հասցնելով նրա սրտին, անդամահատելով նրա զարշկի մարմինը: Մաղձ և արյուն է կաթում բուրժուայից, նա արդեն իսկ բազմաթիվ զոհեր է տարել կյանքից — այսպես էր դատում Չմշկյանը: «Հալածել հայ բուրժուայի սերընդին»<sup>2</sup>, — այսպես էր ասում նա, յուրատեսակ «թարգմանելով», յուրովի և ճիշտ քննելով Սունդուկյանի գեղարվեստ

<sup>1</sup> Չմշկյան, «Իմ հիշատակարանը», էջ 85:

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 78:

տական միտումը: Դորքուլյուրովի մտքերի այս արձագանքը, սամադուրականութեան-վաճառականութեան, տիրող սոցիալական շարիքին ընդդեմ ուղղված մեծ քննադատի-քաղաքացու այս կոչը հայ իրականութեան մեջ բարեբեր հող էր գտել և իր որոշակի արդյունքն էր տալիս, ազգային միջառայրում այն ուղղելով ազգային բուրժուազիայի դեմ:

Չմշկյանը ցավ ի սիրտ արձանագրում էր և այն իրողութիւնը, որ «հասարակութուն», «հասարակական կարծիք» հասկացողութիւնները ոտնահարված են, կամ ավելի ճիշտ կլինեն ասել դրանք չկան: «Դուք զարմանում եք, ես այդ զգում եմ, բայց քամբախտաբար այդ իրողութիւն է...», — գիմեկով ընթերցողին գրում էր Չմշկյանը և ասա, իր օրերի հասարակական կյանքի մասին զայրույթով խոսելով, նույնիսկ նիհիլիստորեն տրամադրված, շահազանցրած բացականշում էր. «...հայերս... բազկանում ենք շնչին, ողորմելի մարդիկներից, կազմում ենք շնչին, ողորմելի խմբիկներ, առանց գաղափարի, առանց նպատակի և ամեն մեկ այդ խմբիկը բաժանված է մյուսից թե յուր հասկացողութեան և թե իր գործի անշափ տարածութիւնով...»: «Ողորմելի կյանք...» — զայրալի գրում էր Չմշկյանը<sup>1</sup>: Նա սխալվում էր, երբ բացասական գծեր և արատներ էր վերագրում «ամբողջ հայութեանը». այդպիսի միասնական հայութիւն իրականում գոյութիւն էլ չունենր, սակայն նա իրավացի էր, երբ տեսնում էր, որ թագավորող սոցիալական շարիքի պայմաններում ևս-ը թագավորող ուժ է դարձել: «Մենք, — ասում է նա, — ամեն շանք գործ ենք դնում, ամեն բան ոտի տակ առնել միայն թե մեր ևս-ը փայլի»<sup>2</sup>:

Ժողովրդական թատրոնի գաղափարը հետապնդող Չմշկյանը, Պեկոյի անկեղծ և խանդավառ դերակատարը, ունենր այն երազանքը, որ դեմոկրատական խավերը դաստիարակվեն բարձր գաղափարներով, հենց նրանց պետք է դուրս բերել ծանր մթնոլորտից, ազատել այնպիսի արատներից, որ մտել են կենցաղը — արբեցողութիւնից, մոլութիւնից, դա-

<sup>1</sup> «Մշակ», 1876 թ., № 5:

<sup>2</sup> «Նոր դար», 1887 թ., № 95:

տարկաշրջութիւնից և այլ տխուր երևույթներից, որոնք կան, որոնք իրապէս չեն անբաժան ևն մարդկանց կյանքից <sup>1</sup>:

Որքան ճիշտ էր նկատել իրական կյանքի տխուր երևույթները նույն Չմշկյանը, երբ գրում էր.— «Ամենքը կհամաձայնալեն, որ Թիֆլիզի հայերից հազարավոր գործակատարներ կան, որոնք իրենց ազատ ժամանակը, որ զխաւորապիս զիշերններով է լինում, անց են կացնում Թիֆլիզի մեջ վերջին ժամանակ բազմացած այգիներում... Այդ այգիներին և զրանց նման տեղերում հարյուրավոր երիտասարդներ դատարկում են իրենց գրպանները և միևնույն ժամանակ փշանում են բարոյապես: Արդոյք ավելի լավ չէ՞ր լինի, որ այդ երիտասարդները մի որևէ 70 կ [ոպեկ] վճարեին և օգտակար կերպով իրենց ժամանակը թատրոնի մեջ անցկացնեին: Հարյուրավոր մանր վաճառականներ և արհեստավորներ կան, որոնք իրենց գործը վերջացնելուց հետո կամ թղթախաղով են զբաղված լինում և ռուբլիներ տանուլ տալիս, կամ այս կամ այն հյուրանոցում և պանդոկում անողորմաբար ոչընչացնում են Կախեթու գինին: Կամ չէ՞ր լինի արդոյք, որ զրա փոխարին այդ մարդիկ թատրոն գային: Այդ շրջանների մարդկանց կանայք, աղջկերքը և մայրերը բամբասանքներով և փողոցներում կուլիլով են անցկացնում իրենց ժամանակը, արդոյք լավ չէ՞ր լինի, որ զրանք ևս կարողանային թատրոն այցելել: Այսպիսի օրինակներ հարյուրներով կարելի է բերել, բայց սրանք էլ բավական են» <sup>2</sup>: Կենցաղային էին արդոյք Չմշկյանի նկատած այդ ողբերգական երևույթները, հասարակութեան լայն խավերի ծանր ու խավար կյանքի հարյուրավոր ու հազարավոր այդ փաստերը: Չարիքի արմատը նույնն էր— կապիտալի ստեղծած իրականութիւնը: Դարձյալ «էլի մեկ զոհի» առնչութեամբ, վաճառականների հին սերնդի կիտած «աղբանոցում» էր տեսնում Չմշկյանը «հոգեվարք մի վիճակ», հոգևարքի մեջ էր դիտում նույն այդ սերնդին, որը ծնել է, հակառակ իր կամքին, «եվրոպական հասկացողութեան տեր սերունդը»,— այսինքն բուրժուազիայի

<sup>1</sup> «Մեղու Հայաստանի», 1874 թ., № 20, հոդվածն անստորագիր է:

<sup>2</sup> «Մշակ», 1882 թ., № 217, ստորագրված է՝ Թատրոնասեր:

մի նոր խավը, բայց նա էլ «ապականել է հայութունը յորջանց միշաներով, կոլաներով, վոլդեմարներով ու հազար ու մեկ շրջմոլիկներով, որոնք շռայլելով հորից թողած հարստութունը, այցելում են ամեն տարի արտասահման դանազան կորոլինաներ որսալու համար...»<sup>1</sup>։ Չմշկյանը դատափետում էր բուրժուազիայի հին սերունդը, նա դատափետում էր նաև նրա «նոր»՝ եվրոպականացած սերունդը։

Իրականության քննադատության մեջ Գևորգ Չմշկյանը ելակետ ուներ և՛ հասարակության ընդհանուր մտայլ պատկերը, և՛ փողի, և՛ կապիտալի «հերոսներին», և՛, ինչպես տեսանք, դեմոկրատական լայն խավերի ապրած ծանր վիճակը։ Կարևորն այն է, որ նա, որպես արվեստագետ և մտածող հաշտ չէր այդ իրականության հետ, ծնկի չէր եկել նրա առաջ, գլուխը չէր խոնարհում նրանց, որոնք թագավորող սոցիալական շարիքի սրայմաններում դահիճների դեր էին կատարում։ Քննադատության մեջ Չմշկյանի համակրանքը կյանքի զոհերի կողմն էր։ Թող որ նա ընդարձակ շարադրություններ չի թողել իրականության քննադատության մասին։ Այդ կարգի ամենաընդարձակ «շարադրանքը» նրա արտիստական կյանքն էր բեմի վրա։ Սակայն՝ այստեղ հիշատակված նրա մտորումներն ու խոհերը, իրականության հանդեպ նրա ունեցած քննադատական վերաբերմունքը վկայող դատողություններն ու վերլուծումները ցույց են տալիս, որ նա իր տեսական կառուցումների մեկնակետը համարել է ամենից առաջ կյանքը, կյանքի պահանջները, որ նա տեսությունք է գրադվել, որովհետև որոնել է կյանքի առաջադրած առեղծվածների պատասխանը։ Հստակ երևում է, որ բուրժուական իրականության քննադատությունը դարձել է թատրոնի տեսության հիմքը։ Թե իրականության քննադատության և թե տեսական հայացքների մեջ Չմշկյանը, անշուշտ, ռևոլյուցիոն մտածող չէր։ Նա վախճանական եզրակացությունների չէր հանգում։ Իր էվոլյուցիայի մեջ նույնիսկ չափավոր է և զուսպ։ Բայց անուրանալի է նրա հայացքների դեմոկրատական ընդհանուր ոգին, նրա ձգտումը-ծառայել ռեալիստական և դեմոկրատական թատերական արվեստին։

<sup>1</sup> «Մեղու Հայաստանի», 1884 թ., № 83։

«ՀԱՅ ԹԱՏՐՈՆԻ ԳԱՂԱՓԱՐԸ»

Գևորգ Չմշկյանը, — բուրժուական իրականության քննադատը, — օժտված էր նաև իրերի, երևույթների, թատրոնի ստեղծման ու զարգացման անհրաժեշտության զաղափարն ըմբռնելու խոր մտածողությամբ: Ճիշտ է, նա երբեմն, սակավ անգամ, թատրոնի առաջացումը հայ իրականության մեջ բացատրում է ազդեցությամբ, օրինակ, Կ. Պոլսի հայկական ներկայացումներով, որոնք իբր զրդեղ են թատրոն ստեղծել նաև կովկասահայության միջավայրում<sup>1</sup>: Նման մի գործոն, — ազդեցությունը — նշանակություն ունի, սակայն այն չէ, որ կարող է թատրոն ստեղծել: Այս դեպքում Չմշկյանը հեռանում էր արվեստի առաջացման ճիշտ մեկնարանությունից: Բայց ուրանալ չի կարելի, որ նա, ըստ մեծի մասի, թատրոնի ստեղծումը, ավելի ճիշտ, նրա վերականգնումը ուսուհայ իրականության մեջ բացատրում է պատմական անհրաժեշտությամբ, տրամաբանական զարգացմամբ և ոչ երբեք պատահականորեն: Նա գրում է. — «Ամեն տեղ, ամեն հասարակության մեջ, երբ ծնում է որևիցե մեկ զաղափար, նա սկզբում խորթ է թվում ամենքին, շատ անգամ հալածվում է ամենքից, բայց եթե նորա սկզբունքները ուժեղ են, եթե այդ զաղափարի մեջ լինում է կյանք, նա պատերազմում է ամեն տեսակ հալածանքների և նախապաշարմունքների դեմ և

<sup>1</sup> Տե՛ս «Մշակ», 1875 թ., № 41 և «Մեղու Հայաստանի», 1884 թ. № 81:

վերջը հասնում է յուր նպատակին՝ այն է, որ իրագործվում է և դառնում է հասարակության համար անհրաժեշտություն, այսինքն հասարակ իրողություն:

Ահա ինչի համար, համոզված լինելով, որ հայ թատրոնական գաղափարը նմանապես այն հաստատ և ուժեղ գաղափարներից մինն է, որ պատերազմելով երկար ժամանակ զանազան հալածանքների և նախապաշարմունքների դեմ, սկսված 1860 թվականից, իրագործվելով օրըստօրե Քիֆլի-զի Քաղաքական թատրոնի բեմի վրա, չէ մեռնում, այլ ընդհակառակը, օրըստօրե ուժեղանում է, որոշելով յուր համար ունակերտուար, մշակելով նոր դերասաններ և դերասանուհիք, ահա ինչի համար ասում եմ ես, համոզված եմ, որ այդ գաղափարը ուժեղ գաղափար է և ունի յուր մեջ իրագործվելու համար հաստատ հիմունքներ»<sup>1</sup>:

Նորի, նոր գաղափարի կենսունակության շմշկյանական այս հիանալի րմբունումը տեսարանին թույլ է տվել պնդելու, որ «ներկայումս թատրոնը համարյա դարձել է հայ հասարակության համար պահանջողություն, որովհետև, ինչպես հայտնի է ընթերցողին մեր նախընթաց հոդվածից, անպաշտպան, առանց գումարի, լոկ «հայ-թատրոն» անունով, նա, այնուամենայնիվ, օրըստօրե քայլափոխում է դեպի առաջադիմություն, ուղղելով իր անցյալ սխալները, զգուշանալով, որքան կարելի է, ապագայումն էլ շտիպալիլ, թե նյութական, թե արվեստական կողմից»<sup>2</sup>:

Չմշկյանը համոզված է եղել, որ «հայ-թատրոնի գործը մեր մեջ դեռևս գաղափարական մի գործ է, ինչպես մեր գրականությունը...»<sup>3</sup>:

Հետաքրքրական է Չմշկյանի և ա'յն միտքը, որ թատրոնի գաղափարը հետզհետե դարձել է «արդեն հացի խնդիր» — այսինքն իրականություն, անխուսափելի և անհրաժեշտ.

<sup>1</sup> «Մշակ», 1873 թ., № 48. «քաղաքական» — տեքստում. Ս. 2:

<sup>2</sup> «Մշակ», 1873 թ., № 51:

<sup>3</sup> «Նոր դար», 1893 թ., № 78, «Հին թատրոնասեր» ստորագրությամբ:

ինքն էլ գրում է. — «Երբ մի բան դառնում է կենսական խնդիր, ուրեմն նա դառնում է արդեն հասարակական պահանջ»<sup>1</sup>:

Քատրոնը, որպես կյանքի համար անհրաժեշտ մի գործոն — այնքան խոր և Չմշկյանի էությունը համակող միտք է եղել, որ նրա պահպանումը նա համարել է հասարակական գործ. — «Այդպես, ուրեմն, — հայտարարում է Չմշկյանը, — ինչպես պարզ երևում է, հայ թատրոնի բեմը դարձել է այնպիսի անհրաժեշտ սրահանջ հայ հասարակության համար, որ ոչ թե միայն մեղք է, այլև ամոթ հայության համար, եթե նա չկարողանա հարատև պահպանել այդ ազգօգուտ գործը»<sup>2</sup>:

Ի՞նչ է թատրոնի նպատակը և կոչումը:

Հայ նոր թատրոնի կազմակերպման բովով անցած Գևորգ Չմշկյանը, այդ արվեստին իր կյանքը և տաղանդը նվիրաբերած հռչակավոր արտիստը, թատրոնի դերը որոշել է այսպես. — «Հայ թատրոնը ի սկզբանե ունեցել է երեք որոշ ծանրակշիռ նպատակ՝ տարածել մոռացության տված մայրենի լեզուն հայ հասարակության մեջ, ծավալել նրա մեջ ընդհանուր քաղաքակրթության սկզբունքները, թե՛ թարգմանական, թե՛ ինքնուրույն պիեսների միջոցով և ծառայել ազգային բարեգործական նպատակներին»<sup>3</sup>. Նույն այս միտքը նա հայտնում է 1897 թվականից առաջ — 1889 թվականին՝ բեմից քարոզել լուսավորություն և ուրիշ դարձյալ բարեգործական բարձր գաղափարներ<sup>4</sup>: թատրոնը նաև մասնագիտություն է տալիս դերասանին, պետք է պահպանի և նրա գոյությունը: Ի վերջո, ինչպես գրում է Չմշկյանը, — «Ամենքին հայտնի պիտի լինի, որ այսուհետև հայ թատրոնը դադարեց լուի գաղափար լինելուց, և դառել է արդեն իրողություն, գործ, որը բացի իր քաղաքակրթական նպատակներն

<sup>1</sup> «Արշալույս», 1905 թ., № 56:

<sup>2</sup> «Արձագանք», 1897 թ., № 128:

<sup>3</sup> Նույն տեղը:

<sup>4</sup> «Արձագանք», 1889 թ., № 38:

առաջ տանելուց, միջոց է դառնել և դերասանի օրվան ապրուստը հայթայթելու»<sup>1</sup>։

«Քաղաքացիական պահանջ»<sup>2</sup> դարձած թատրոնի նպատակը Չմշկյանը վերստին համարել է «քաղաքակրթական և ազգային օգտավետությունը»<sup>3</sup>։ Հենց այդպիսի մի թատրոն, ըստ Չմշկյանի, պետք է արտացոլի իր բեմի վրա անցյալը, ներկան՝ իր լավ և վատ կողմերով։— «Վաթսունական թվականներին բեմը,— գրում է նա,— դուրս գալով յուր նեղ շրջանակից, ձգտում է հանդիսանալ իբրև մի քաղաքակրթական միջոց՝ լուսավորություն տարածելու հայ հասարակության մեջ, ցույց տալով նորան ազգի անցյալը, ներկա կյանքի լավ և վատ կողմերը, թե ինքնուրույն և թե եվրոպական գրվածքների միջոցով»<sup>4</sup>։ Չմշկյանը չէր խզում թատրոնի քաղաքակրթական դերը նրա բարոյական կոշտմից, մարդու կրթությունը նրա բարոյական դաստիարակությունից։

Դժվար չէ հասկանալ, որ թատրոնի նպատակների ու խնդիրների շմշկյանական ըմբռնումները պայմանավորված են եղել իր ապրած օրերով, երբ թատրոնն, ըստ Չմշկյանի, պետք է նպաստեր և նպաստել է ազգային ինքնագիտակցության արթնացմանն, ազգի կազմավորմանը, հասարակության լուսավորության գործին։ Թատրոնը կոշված է եղել պայքարել տգիտության դեմ, լույս տարածել, տարածել նոր գաղափարներ, քաղաքակրթել մարդուն և հասարակությունը։ Լուսավորիչ թատրոնի միտքը, լուսավորական նպատակներ ունեցող թատերական արվեստն, ըստ Չմշկյանի, դարձյալ անհրաժեշտ գործոն էր ժամանակի պահանջներն իրագործելու համար։

Սակայն Գևորգ Չմշկյանը երբեք էլ վերացական լուսավորիչ չի եղել։ Նա թատրոնի լուսավորական խնդիրները կապել է ունալ իրականության պատկերման գաղափարի հետ,

<sup>1</sup> «Մշակ», 1887 թ., № 116։

<sup>2</sup> «Տարազ», 1908 թ., № 2, էջ 11։

<sup>3</sup> «Մեղու Հայաստանի», 1881 թ., № 228։

<sup>4</sup> «Արձագանք», 1887 թ., № 21։

իսկ ներկան նույնպէս շի անշատել անցյալից: Ինչպէս անցյալ կյանքի լավը նա ուզում էր լուծել նոր կյանքի լավի մեջ, այնպէս էլ անցյալի պատկերումը նա լուծում էր ներկա կյանքի պատկերման մեջ: Սակայն ունալ իրականութեան և իր ապրած արդիականութեան արտացոլման գործը Չմշկյանը համարում է թատրոնի գլխավոր խնդիրը, արդիականութեան մեջ որոնելով և արդիականութեան արտացոլմամբ նւատակ ունենալով ցույց տալ կյանքի լավ թե վատ կողմերը: Չմշկյանի համար միասնական խնդիր էր կյանքի դրականի որացասականի պատկերումը բեմի վրա, ըստ որում նրա լուսավորականութեանը ստանում էր և ստացել է ընդգծված սոցիալական բովանդակութուն: Ահա նրա այդ խոհերը.— «1860 թվականների ժամանակամիջոցում երևացավ հայ թատրոնի գաղափարի ինքնագոյութունը, նա հրապարակ դուրս եկավ յուր «Շուշանիկներ», «Վարդան» և այլ ներկայացումներով և հետո պահանջեց—թողնել մեռած հայութեան շինծու ոգիները և ղննել հայերի ներկա կյանքը: ...Ժամանակը յուրն էր պահանջում. նա պահանջում էր հայութեան կենդանի պատկեր, կենդանի տիպարներ: Եվ, ահա, այդ հիսունական թվականը ծանրաբեռնված հին ապականված հայ բուրժուազիայի ներկա կյանքով, մյուս կողմից, դիտելով նոր սերնդի մեջ առավել լավ ապագա, ձգտումն դեպի լուսավորութուն, գաղափարների նորութուն, պետք է, որ սթափվեր և լուծեր հայութեան լավը նորութեան լավի մեջ, անշատեր այդ երկու միացած մարմնից փտածը, ապականվածը, թե՛ հին և թե՛ նոր սերնդից գոյացած:

Եվ ահա, այդ ինքնազոր ժամանակը երևան հանեց մի փոքրիկ ընկերութուն, որը և հիմնեց թատրոնական բեմը Թիֆլիզում»:

Թատրոնի «կրթողական կոչումն» էր պատճառը, որ «հարկավոր եղավ թողնել հին անօգուտ պատմական հիշողութունները, դադարել զանազան շուշանիկներ բեմ հանելուց, այլ պարապել ներկա հայ կյանքի լավ թե վատ կողմերով»<sup>1</sup>:

<sup>1</sup> «Մեղու Հայաստանի», 1884 թ., № 81:

Թատրոնի այս գաղափարը մոռացնել է տալիս նույնիսկ հին ժամանակը. «Անցյալը մեռավ,— գրում էր Չմշկյանը,— ներկան ուժեղ լոկոմոտիվի նման քաշեց ծանր երկաթուղու գնացքը, հասարակությունը վազեց հայերեն ներկայացումները, ծափահարեց, դմալվեց...»<sup>1</sup>:

Այստեղ մենք հասնում ենք այն կետին, որտեղից սկիզբ են առնում Գ. Չմշկյանի մտքերը և տեսական դատողությունները Թատրոնի ռեպերտուարի վերաբերյալ: Պատմականությամբ հագեցած նրա հայացքների մեջ որոշակի կերպով երևան է գալիս ռեպերտուարի ուղղության ռեպերտուարի պաշտպանության միտքը, ա՛յն դրամատուրգիայի պաշտպանության գաղափարը, որի մեջ արտացոլված է արդիականությունը, արդի կենդանի Պյանըր և կենդանի մարդու բնավորությունը:

Միայն բարձր գաղափարայնության Թատրոնի գործիչը և տեսաբանը կարող էր մտածել այնպես, ինչպես մտածել է Չմշկյանը, գրելով, որ «ռեպերտուարը ամենաանհրաժեշտ և գլխավոր բանն է Թատրոնական գործում...»<sup>2</sup>: Կա լավ ռեպերտուար, կլինի լավ Թատրոն և ընդհակառակը:

Գևորգ Չմշկյանը ռեպերտուարի հետ էր կապում Թատրոնի հիմնական նպատակների իրականացումը և Թատերական արվեստի բարոյա-էսթետիկական խնդիրների կենսագործումը: Այս առումով խիստ հետաքրքրական են նրա խոսք հայացքները, արտահայտված ռեպերտուարի առնչությամբ, որոնք ցույց են տալիս տեսաբանի կողմից կառուցված նրա Թատերագիտական կուռ կոնցեպցիան: «Ամեն զարգացած Թատրոնական բեմ ունի որոշ նպատակի համար համեմատյուրյան հաճախող հանդիսականներ և որոշ ռեպերտուար,— գրում է Չմշկյանը: Միայն կա Թատրոնական բեմ, որ ծառայում է լոկ քաղաքակրթական, ուրեմն և բարոյական նպատակի, կա բեմ, որի համար Թատրոնական ներկայացումները միջոց են միայն փող վաստակելու:

<sup>1</sup> «Մշակ», 1875 թ., № 41:

<sup>2</sup> «Արձագանք», 1894 թ., № 20. ստորագրված է «Հին դերասան»:

Առաջին բարձր նպատակին ծառայում են շատ քիչ թատրոններ, նաև այն երկրներում, ուր թատրոնական բեմը, զբրկրված լինելով քննադատության հսկողությունից, ծառայում է լուրջ ամբոխի դյուրագրգիռ պահանջներին:

Թեև ճշմարիտ է, որ ամեն մեկ երկրում թատրոնական ներկայացումները սկսում են յուրյանց գոյությունը, ծառայելով նախ ամբոխի ձգտումներին, բայց ընդունակ քաղաքակրթական ազդությունների մեջ այդ ձգտումները նրբանալով հետզհետե, պահանջում են և առավել իմաստալի բեմական ներկայացումներ:

Մեկ կողմը թողնելով ուրիշ առավել քաղաքակիրթ եվրոպական ազդությունները, վերցնենք, օրինակ, մեր հայերիս, վերաբերյալ դեպի թատրոնական պահանջը:

Մենք, թե՛ թիֆլիսցիքս և թե՛ պոլսեցիք սկզբում՝ 1860 թվականներին, հրապուրվում էինք և ղմայլվում որևիցե «Արշակ», «Շուշանիկ», «Վարդան» և այլ սոցա նման խառնափնթոր ազգային թատրոնական ներկայացումներով և գուցե ունեինք իրավունք, որովհետև ամեն տեղ այդ տեսակ ներկայացումներից է ստացել յուր գոյությունը թատրոնական բեմը:

Այս բոլորիս մենք, համեմատաբար զանազան աշխարհիս երեսին կորած ազգերի հառաջադիմության, կարող ենք պարծանքով ասել, որ մեր «Արշակ», «Վարդան» և այլն ծնել են մեզ համար եվրոպական թատրոնի ապագա, այսինքն՝ ամբոխի ձգտումները քաղաքակրթվելով հետզհետե դիմում են դեպի նրբությունը. օրինակ, ա՛ խայտառակ «Արշակ», «Վարդան» և այլն եվրոպացրեց Սրապիոն Հեքիմյանը յուր ազգասիրության իմաստով լի «Սամել», «Արտաշես և Սաթեհիկ» և «Վահրամ» ողբերգություններով. բ. Խորեն-Նարեկ (այժմ Լուսինյան) ստեղծեց անիմաստ, բայց զաղափարաձև «Ա՛լաֆրանկան», հատկանիշ Պոլսի հայ էֆենդիների տիպարների մոլեռանդությանը դեպի ֆրանսիական սրբիկայությունը և գ. հանգուցյալ բժիշկ Տեր-Գրիգորյանց և Գաբրիել Սունդուկյանց, որ ստեղծեցին առանձին բուն ռեալական շկոլա՝

հայ մարդուն ցույց տալու յուր բոլոր մարդկային թիֆլիզցու հային սեփական թերությունները:

Հետևաբար, թատրոնն այցելող սկզբում ամբոխը, զարգանալով օրըստօրե և փոխելով յուր ամբոխական ճաշակը, պահանջում է թատրոնից հասարակական քաղաքակրթական սկզբունքներ, և միշտ ձգտում է դեպի նորություն:

Այդ ժամանակամիջոցը անվանում է ռեակսիոնական դրություն, այնպիսի մեկ փոփոխական դիրք, որի հետևանքը կարող է լինել ձգտումն դեպի թատրոնական քաղաքակրթական նպատակի կատարելագործությունը կամ նորան հակառակ ուղղություն՝ քաղաքի բարոյական անկումն:

Սորանից տաս տարի առաջ մենք դադարեցինք բավականանալ մեր պատմական հերոսների ծամուկելով բեմի վերա, կրելով նրանց ճակատին լոկ «Վարդան», «Արշակ», «Վասակ» և այլ անուններ, մենք շուգեցինք այլևս տեսնել մեր բեմի վերա շինծու հերոսները, մենք կամենում ենք շոշափել կենդանի մարդիկ, թող այդ մարդիկը կրեն ինչ տեսակ ուղղւմ է անուններ, թող մեկը Վարդան լինի, մյուսը Վասակ... միայն մարդիկ լինեն:

Եվ ահա՛, ներկա լուպիս մեր թատրոնական բեմը քայլ առ քայլ առաջ գնալով հասել է արդին այն կետին, որտեղից մի սխալ քայլ դարձյալ առաջ անելը կարող է նորա անցյալի գործունեությանը և ապագայի հույսերը բոլորովին կործանել:

Եթե թատրոնի առողջ նպատակն է ցույց տալ բեմի վերա կենդանի մարդիկ, այդ չէ նշանակում ցույց տալ մեզ այնպիսի անձնավորություններ, որ թեև կենդանի պատկերներ են, բայց նորանց գործունեությունը պիտի լինի շինծու, արվեստական, աչքեր շրջանող, կիրքը գրգռող, ինչպես ձեռքնում է մեզ բոլոր Պոլսի ռեպերտուարը, շատ քիչ բացառությամբ:

Թատրոնի նպատակը պիտի լինի ցույց տալ կենդանի մարդու պատկերներ նոցա թուլություններովը և արժանավորություններովը, որ պետք է անցկացնել հանդիսականների աչքի առաջ յուր քնական մարդկային դեպի լավը և վատը

ձգտողական անցքերով և այդ անելու համար այժմյան թատրոնական վսեմ արհեստագիտությունը շունի կարոտություն դիմելու դաշույնի, ատրճանակի և թույնի օգնության, որովհետև երբ մեկ թատրոնական խաղի բնաբանը առողջակազմ է, բնական է հետևարար կան նորա մեջ և լոժիֆ, առողջ միտք, հիմնված ժամանակի պահանջման վերա»<sup>1</sup>:

1860-ական թվականների պայմաններում ռեպերտուարի պրոբլեմը ծայր աստիճան սուր պրոբլեմ էր: Հասարակական կյանքի և դադափարախոսության մեջ կատարվող էական տեղաշարժի ուժեղ ներգործության տակ ռեպերտուարի խնդիրը դառնում է թատրոնի զաղափարական-սոցիալական և էսթետիկական ուղղության խնդիր: Եվ Չմշկյանը, Ամերիկյանը, նրանց Լնկերությունը շատ ճիշտ դիրքավորվեցին ամենաարմատական այդ հարցի նկատմամբ, վերջ ի վերջո, վճռականապես վտարելով հայ բեմից պատմական թեմատիկան, կլասիցիստական ուղղությունը, առանց այն էլ թույլ, անարվեստ պատմական ողբերգությունները:

Գ. Չմշկյանի խոստովանություններ, ռեպերտուարի առեղծվածը լուծելիս նրան օգտակար խորհուրդներ է տվել հայտնի տեսաբան-գեղագետ Ստ. Պալասանյանը, որը և մատնանշել է նրան թատրոնի և դրականության, ինչպես նաև ազգային լեզվի միմյանց հետ ունեցած փոխադարձ կապը: «Այդպես, օրինակ,— վկայում է Չմշկյանը,— նորա (Ստ. Պալասանյանի Ս. Հ.) հետ խորհրդակցելուց հետո, մենք, իմ բնկերներս համախոհություններ, վճռեցինք թողնել անիմաստ հայ ողբերգական ներկայացումները և դիմել եվրոպական ընտիր պլեխանների թարգմանությանը»<sup>2</sup>:

<sup>1</sup> «Մեղու Հայաստանի», 1881 թ., № 252. ընդգծումը բնագրում:

<sup>2</sup> «Արձագանք», 1889 թ., № 13: Ստ. Պալասանյանի գեղագիտական հայացքների մասին՝ տե՛ս Ս. Ս. Թովմասյան, «Ստ. Պալասանյանի գեղագիտական հայացքները» գիրքը, Հայկական ՍՍԻ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1959 թ.: Չմշկյանի և Պալասանյանի գրույցների հետևանքով Չմշկյան—Ամերիկյան դերասանական խմբի ռեպերտուարն են մտել «Սեր և նախապաշարմունք», «Թուղթ խաղացողի կյանքը», «Վենետիկի վաճառականը», ապա նաև «Էդնանին»: Տե՛ս նաև «Իմ հիշատակաբանը», էջ 41:

Գեոևս Թարգմանական: ղեպերտուարն էր Չմշկյան—Ամե-  
րիկյան ընկերության ուշադրության առարկան, որովհետև  
նոր ուղղության, ղեպիստական ուղղության հայ դրամա-  
տուրգիան նախնական քայլեր էր անում, այն վողկիլներից  
էր բաղկացած, և, շնայած նրանց կարևոր դերին, Թատրոնի  
կայուն և լուրջ ղեպերտուարի հիմք դառնալ շէին կարող:  
Չմշկյանը հասկանում էր այս ամբողջ իրադրությունը, երբ  
գրում էր. «Մեր ընկերությունը որոշել էր հեռանալ փտած,  
անիմաստ և անհասկանալի ողբերգական պիեսաներից և  
կազմել եվրոպական հասկացողության և ճաշակի համեմատ  
նոր ղեպերտուար: Այդ ժամանակ հայ բեմը (բացի Տեր-Գրի-  
գորյանի «Ժլատ», Փուղինյանի «Դալլալ Ղաղո», Սունդուկյա-  
նի «Գիշիրվան սարբը խեր է» պիեսաներից) ո՛չ տեղական և  
ո՛չ Թարգմանական պիեսաներ բեմ դուրս շէր հանել»<sup>1</sup>:

Հանրահայտ է, որ Մ. Ամերիկյանը սկզբունքային վեճ է  
մղել հետադիմական հայացքների պաշտպան Ա. Երիցյանի  
դեմ<sup>2</sup>: Այդ վեճը դադափալական պայքար էր՝ հանուն ղեա-  
լիզմի, ընդդեմ կեղծիքի դրամատուրգիայում, ղեպերտուա-  
րում և բեմի վրա: 1860-ական Թվականներին մղված այդ  
պայքարին համամիտ էր Չմշկյանը, եթե 1873 թվականին  
նա կարծեք շարունակում է իր համախոհ ընկերոջ վեճը նույն  
Երիցյանի դեմ՝ «Կավկազ» լրագրում սրա տպագրված «Հայ  
բեմի պատմությունը» հոդվածաշարքի առիթով: Գ. Չմրշկ-  
յանը ևս ծաղրում է Ա. Երիցյանի «Արուսյակ» ողբերգու-  
թյունը, որը ծաղրել էր Ամերիկյանը.— «Այդ երևելի ողբեր-  
գության միջի գործող անձինքները, հագնված ղանաղան  
խաշակիր ասպետների հագուստներով, դուել դուրս գալով  
միմյանց հետ կուվա ձորերում, մեռնում են բեմի վերա  
անհետևանք, Թողնելով իրանց հնարող հեղինակին լալագին  
տխրության մեջ: Իմ միտս է նաև այն անցքը,— պատմում է  
Չմշկյանը,— որ երբ կրկնությունների ժամանակ Արուսյակի  
դեր կատարող տ. Սոփիո Մելիք-Նազարյանցը, տեսնելով որ

<sup>1</sup> Տե՛ս Չմշկյան, «Իմ հիշատակներ», էջ 33:

<sup>2</sup> Տե՛ս «Մեղու Հայաստանի», 1866 թ., № 10:

վերջին արարվածի մեջ բոլոր գործող անձինքը մեռնում են և նա մնում է միայն բեմի վերա, անորոշ դրուժյան մեջ, հարցրեց ռեժիսոր պ. Մ. Աղաբեգյանցից.—

— Ես ի՞նչ անեմ, պ. Աղաբեգյանց, երբ բոլորը մեռնում են...

— Ըշտե դուն ալ մեռի՛ր, աման,— որտայ պ. ռեժիսորը<sup>1</sup>:

Այնքան սուր էր պատմական ողբերուժյունների նկատմամբ ունեցած քննադատական վերաբերմունքը, որ, հակասելով երբեմն ինքն իրեն, ոգևորված Սունդուկյանի միայն «Գիշերվան սաբրը խեր է» և Տեր-Գրիգորյանի «էս էլ քի մոցիբլութին» վոդևիլներով, Չմշկյանը հայտարարում էր, որ այդ վոդևիլներն էլ «որոշեցին և վճռեցին հայ թատրոնի կենդանության ապագան»<sup>2</sup>:

1860-ական թվականների գործիչն ու մտածողը — Չմշկյանը, հիրավի, շտապում էր, նա ցանկանում էր արագացնել հայ նոր թատրոնի ռեպերտուարի վերակառուցումը և արդեն իսկ թաղում էր հին ուղղությունն ու հին ռեպերտուարը.— «Թատերգական և ողբերգական ուղղությունը փախավ հայ թատրոնական բեմից,— այժմ գոհ աղաբարարում էր Չմշկյանը: «Խաթարալայից» հետո, «Նինոյի նշնվիլը», «Էլի մեկ դոհ» և այլն, արձանացան հայ թատրոնի բեմի վերա և կարդացին ողբաշարժ ռեպիտեմը հայ թատերգական ուղղությանը»<sup>3</sup>:

Ըստ Չմշկյանի, ռեպերտուարի պրոբլեմը լուծեցին Սունդուկյանը և Տեր-Գրիգորյանը.— «Ժամանակը և նորա անհաղթ պատմական պահանջմունքը,— գրում է նա,— հարուցեց Թիֆլիզի մեռած և գոլորշիով պատած, թմրության մեջ ընկղմված, բթամիտ քաղաքացիներու մաշված կյանքից երկու ուժեր խեղճ հայ թատրոնի համար, ինքնուրույն հաջ

1 «Մշակ», 1873 թ., № 23, Այս մասին տե՛ս նաև Չմշկյան, «Իմ հիշատակարանը», էջ 32:

2 «Մշակ», 1875 թ., № 41:

3 Նույն տեղը

թատրոնի փառք, հանճարավոր-տաղանդավոր ուժեր. այդ ուժերն էին «Խաթարալայի» հեղինակը, պ. Սունդուկյանցը և «Նինոյի նշնվիլ» պիեսայի հեղինակը, հանգուցյալ Տեր-Գրիգորյանցը»<sup>1</sup>:

Այստեղից Չմշկյանը անցնում է հայ նոր դրամատուրգիայի ծագման, դարգացման երևույթներին, տալիս է նրանց գնահատականը և նկատում, թե ի՛նչ է ռեալիստական հայ դրամատուրգիայի առաջադիմության ընթացքը:

---

<sup>1</sup> «Մշակ», 1875 թ., № 41:

ՌԵԱԼԻԶՄԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵԱԼԻԶՄԻ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ՍՈՒՆԳՈՒԿՅԱՆ

Արդյո՞ք Չմշկյանը միշտ այն համոզմունքին էր, որ Սունգուկյանն ու Տեր-Գրիգորյանը համազոր երևույթներ են հայ թատրոնի ռեպերտուարում: Իհարկե, ո՛չ: Նա տարբերություն է տեսել արդիական թեմատիկայի երկերի միջև, որոնք կարող էին ռեպերտուարում լինել, որոշակի դեր խաղալ թատրոնի կյանքում, սակայն նրանք կունենային տարբեր որակ, տարբեր՝ բարձր կամ ցածր արժանիքներ: Գրվատելով Սունգուկյանի հետ նաև Տեր-Գրիգորյանին, Չմշկյանը նկատի է ունեցել վերջինիս դրամատուրգիայի արդիական նյութը և, ըստ երևույթին, այն, որ Տեր-Գրիգորյանն ավելի շնորհալի էր, քան ժամանակի մյուս դրամատուրգները, որոնք նույնպես վողեիլներ էին հորինում: Չմշկյանը մի անգամ այսպես է գրել. «...տաղանդավոր հեղինակ Մ. Տեր-Գրիգորյանը...»<sup>1</sup>: Նա կրկնում է իր այդ գնահատականը, հայ թատրոնում նրա անունը վերստին դնելով Սունգուկյանի անվան կողքին<sup>2</sup>: Մ. Տեր-Գրիգորյանի մեջ Չմշկյանը տեսել է ինքնուրույն դրամատուրգիայի զարգացման գործում նրա մատուցած ծառայությունը, նաև այն, որ հայ թատրոնի համար

<sup>1</sup> Չմշկյան, «Եմ հիշատակարանը», էջ 27:

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 77:

այդ հանգամանքը իր ժամանակ ղեկավար նշանակութիւնն է ունեցել: Տալով Սունդուկյանի և Տեր-Գրիգորյանի անունները, Չմշկյանը նորից այսպիսի մեծ ընդհանրացում է անում.— «Կարծես ինքը բնութիւնը, կամ ժամանակի պահանջը դուրս հանեց խորին քնի մեջ ընկղմված հասարակութիւնից այս դրամատիկական տաղանդներին, որ զօքա ցույց տան աշխարհին, թե ինչքան ուզում է մեկ ազգութիւն թուլացած, ուժից ընկած լինի, երբ նորա մեջ եղել է պատմական կյանք, կարող է հրբեմն արթնանալ և զործել արագութեամբ, վերանորոգելով քնի մեջ անհրկուժացած կենսական ուժը:

Մինչդեռ դոցա երեւալը, ոչ ոք չէր կարող կարծել, թե այդ քնած և մոռացված հասարակութեան մեջ կա շունչ և կյանք, կան ինքնուրույն, դեռ ձեռք չմխած մարդկութեան տիպեր, թե այդ հայ հասարակութիւնը կազմում է մեկ ամբողջ մարմին, որ ունի յուր գլուխը, ձեռքերը, ոտները, յուր պակասութիւնները և յուր առաքինութիւնները»:<sup>1</sup>

Ավելին ասել դժուար է: Բայց, ահա և «դատաստանը»: Չմշկյանը սկսում է համեմատել Սունդուկյանին Տեր-Գրիգորյանի հետ: Համեմատութիւնից հանված եզրակացութիւնն այն է, որ ամբողջ առավելութիւնն անցնում է Սունդուկյանի կողմը: Նա այնքան տարբերութիւն է տեսնում երկուսի միջև, որքան տարբեր են ռեալիզմն ու նատուրալիզմը, որքան տարբեր են մի հսկա լեռ և մի բլուր:

Այդ տարբերութիւնն զգացող Չմշկյան-տեսարանն ու քննադատն սպառնացնում էին, որ ռեալիզմը բոլորովին այլ որակ է, քան կարելի է կարծել, նկատի ունենալով Մ. Տեր-Գրիգորյանի պիեսները: Ռեալիզմի խոր ըմբռնումը ցույց էր տալիս Չմշկյանի մտքի թռիչքը և այն, որ Չմշկյանի կողմից ռեալիզմի ըմբռնումն արդեն մի շատ որոշակի սխտեմ է և տեսականորեն մտածված ու գիտակցված: «Խաթարալան» ու «էլի մեկ զոհ» նկատի ունենալով, Չմշկյանը գրում էր.— «Երբ Թիֆլիզի հայ հասարակութիւնը... տեսավ... այս

<sup>1</sup> Չմշկյան, «Իմ հիշատակարանը», էջ 77:

Գարասիմ Յակովլիչներին և Սերգեյ Տարասիչներին, նա ապ-  
շեցավ, առաջ ծիծաղեց նոցա երևույթական՝ կոմիզմի վերա-  
Քայց երբ տաղանդավոր հեղինակի անդամահատման դանա-  
կի տակից հետզհետե սկսեց երևալ կոմիզմի տակ պահված՝  
փտած, բայց կենդանի և շորս կողմը սարսափ տարածող  
ուժը, զարհուրեցավ, սթափվեցավ և տեսավ, որ շատ ուշ է  
արթնացել. փտած ուժը արդեն թաղվել է, և դեռևս գուցե  
շատ տարիներ պիտի թաղե յուր այլանդակ լեշի տակ հազա-  
րավոր դեռահաս ուժեր»<sup>1</sup>:

Զմշկյանի այս տողերը հաճախ են հիշվել, սակայն քիչ է  
ասվել, թե ինչ խոշոր իմաստ են պարունակում նրանք իրենց  
մեջ:

Սունդուկյանի արտացոլած դարը և ժամանակը անմիջա-  
կանորեն զգացած ու ապրած Զմշկյանը տեսնում էր այն և՛  
սեփական աչքերով, նաև իր ստեղծագործական երևակայու-  
թյամբ: Նա, որպես դերասան, կատարել էր Միքայելի («էլի  
մեկ զոհ»), Մասիսյանցի («Խաթարալա»), Պեպոյի և այլ դե-  
րեր Սունդուկյանի պիեսներում: Սունդուկյանական ռեպեր-  
տուարի և ուղղության արտիստ ու ռեժիսոր էր նա, ամբող-  
ջապես ներծծված Սունդուկյանով: Իբրև տեսարան ու քննա-  
դատ, Զմշկյանը շարադրում էր իր ողջ զգացողութունը, ողջ  
ըմբռնումը, ասվելացնելով դրան այն միտքը, որ Սունդուկ-  
յանը խոշոր ընդհանրացումների դրամատուրգ է, իսկ ռեա-  
լիզմի հատկանիշը գաղափարական ու գեղարվեստական այդ  
ընդհանրացումն է: Զմշկյանին ևս քաջածանոթ սոցիալական  
նույն իրականությունը, ըստ նրա, Սունդուկյանի երկերում  
գտել էր իր շատ խոր արտահայտությունը: Ոչ էմպիրիկորեն  
տրված, ոչ մակերեսային եղանակով նկարագրված, այլ «զըն-  
նողական» ու քննական բովով անցկացված իրականության  
պատկերն էր դա, որի մեջ արտացոլվել է նաև դրամատուր-  
գի աշխարհայացքը, նրա գաղափարական մեկնակետը: Ինքը՝  
Զմշկյանը այդ լավ է նկատել. «Երբ պ. Սունդուկյանը, պա-  
րապած յուր գեղարվեստական զննողությամբ, երբեմն լաց էր

<sup>1</sup> Զմշկյան, «Իմ հիշատակարանը», էջ 77:

լինում, երբեմն անողորմաբար հարվածում և մտրակում էր կեղտի մեջ խեղդված որոշ շրջանի հայ քաղաքացիներին, հանգուցյալ Տեր-Գրիգորյանը միևնույն ժամանակ ծիծաղում էր յուր փրփրալի ծիծաղով ասպարեղ հանած այդ Գարասիմ Յակուլիշների «քաշալ մայմուն»... Կարապետի վերա («էս էլ քի մոցիբլութիւն»): Պ. Սունդուկյանի Գարասիմ Յակուլիշը, Սաքոն և այլն, հանդիսականի առաջ ներկայանում էին հասարակության դահիճներ: Պ. Տեր-Գրիգորյանի Կարապետները («էս էլ քի մոցիբլութիւնում» և «Նոտորնակին — խոտորնակիում» և այլն) ձևանում էին խեղկատակներ, փտած մտքով և մարմնով հիմարներ: Մեկ-խոսքով, առաջինը զննում էր, երկրորդը՝ ծաղրում, մեկը վարհուրում էր այդ փտած ուժի ազդեցությունից, մյուսը ծիծաղելով դոցա վերա, նորանց հանդես էր բերում կենսական ամենածաղրալի հանգամանքների մեջ: Սունդուկյանը սարսափում էր հայ բուրժուալի սերընդից և հալածում էր նորան, իսկ մյուսը ծաղրելով այդ սերընդին, ոչինչ բանի տեղ չէր զնում նորան»<sup>1</sup>:

Տեսական առումով ժամանակի համար իսկական՝ գյուտ պետք է համարել Չմշկյանի այն դիտողությունը, որ ռեալիստական երկերում արտացոլված սոցիալ-հասարակական կյանքի մեծ բովանդակությունն արդեն իսկ գեղարվեստական երկի պահանջն է. «գեղարվեստական կետը», գեղարվեստական դրվածքի մեկնակետը կյանքի մեծ կտալն է և ոչ երբեք կյանքի ետնամուտքը: Եվ որպես դերասան Չմշկյանը միշտ զժողհեղ է «այդ աննշան և թույլ անձնավորությունների դերերը կատարելուց, ինչպիսին էին Տեր-Գրիգորյանի «Ժլատի» շգիտեմ մեկ ինչ իմաստով երիտասարդի և «Խաթաբալայի» մեջ (նույնիսկ Ս. Հ.) Մասիսյանի դերերը»<sup>2</sup>:

Աշխարհայացքը, հեղինակի միտքը, մտքի խորությունը, տեսադաշտը ճշմարիտ ռեալիզմի, գաղափարային արվեստի նույնքան կարևոր հատկությունն է, որքան կյանքի խոր ճա-

<sup>1</sup> Չմշկյան, «Իմ հիշատակարանը», էջ 77—78:

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 78—79:

նաշողությունը: Այդպես է մտածել Չմշկյանը, միաժամանակ, սրելով վարպետութեան խնդիրը, մեծապես արժեքավորելով վարպետութեան հանգամանքը: Նույն Միքայիլ Տեր-Գրիգորյանի կապակցութեամբ նա այսպիսի հետաքրքիր մտքեր էր արտահայտում և նոր զիտողություններ անում. «...հանգուցյալ Տեր-Գրիգորյանը երբեք երկար ու բարակ չէր մտածում պիեսա գրելու համար: Բավական է, որ նա ըմբռնի մի որևիցե գաղափար, մեկ իմաստ և իսկույն կառնէր գրիչը և երկու կամ երեք գիշերվա մեջ կգրեր ամբողջ մեկ պիեսա և կգրեր այնպես, որ ոչ ոք մեղանից չէր իմանալ երբեք, թե նա նոր բան է պատրաստում բեմի համար:

Նյութը գտնելուն պես, նա այլևս չէր աշխատում մշակել, կապել տեսարանը տեսարանի հետ գեղարվեստական պահանջի կամ բեմական արհեստի համեմատ:

Ես հավատացած եմ, որ, եթե հանգուցյալ Տեր-Գրիգորյանը, որի մեջ կար հարուստ բանաստեղծական հանճար, և, ըստ յուր բնութեան, գլխից մինչև ոտք պոետ էր միշտ, ամեն լավ թե վատ դրութեան մեջ հասկանում էր, գիտեր մարդ լինելու արժանավորությունը, այդ բառի վսեմ նշանակությունը, շտապեր յուր թատրոնական գրվածքներում հանդիսանալ իրեն գեղարվեստական պայմանները չպահպանող լոկ նկարիչ միայն, այլ աշխատեր յուր ամեն մեկ նկարած առարկայի վերա առավել երկար և առավել ծանր մտածեր, նորա գրվածքները չէին ունենալ յուր նմանը և նորա «կարապետները» և «խոսյինները» կմնային հավիտյան մեր աղքատիկ թե՛ գրականութեան, և թե՛ բեմի համար որպես անմահ տարալուսներ»<sup>1</sup>:

Գևորգ Չմշկյանը օրգանական է համարել դրամատուրգիայի և թատրոնի կապը, առաջնի զարգացման աստիճանով է պայմանավորել երկրորդի զարգացումը, բայց և նկատել է սովել թատրոնի խոշոր դերը դրամատուրգիայի առաջադիմութեան գործում: Այդպես է նա հասկացել նաև Սունդուկյանի պիեսների երևան գալը—թատրոնի և դրամատուրգիայի սերտ

<sup>1</sup> Չմշկյան, «Իմ հիշատակարանը», էջ 87—89:

բարեկամութեամբ. «Առանց թատրոնի հասցիվ թե գոյութիւն ունենային պ. Սունդուկյանի գրվածքները, որոնց նույնիսկ աշխարհ գալը թատրոնի դրամամբ է եղել»<sup>1</sup>:

Այս կապը, թատրոնի ու դրամատուրգիայի փոխըմբռնումը և փոխադարձ ներգործութիւնը դերասան, ռեժիսոր և քննադատ Չմշկյանին էլ դարձրել է Սունդուկյանի թատերգութեան տարեգիրը, որը «գրի» է առնում դրամատուրգի գաղափարական ու գեղարվեստական կյանքը թատրոնում՝ ամենից առաջ գրականութեան մեջ ու թատրոնի բեմի վրա ռեալիզմ տեսնելու համար: Օրինակները շատ են: Գեռ խոսք կլինի հայ թատրոնում Չմշկյանի և Սունդուկյանի գաղափարական ու էսթետիկական բարեկամութեան, նույնատիպ մտածողութեան մասին: Չմշկյանը հետեւել է նաև դրամատուրգ Սունդուկյանի կյանքին՝ ուրա և վրաց բեմերի վրա: Ռուսական բեմում «Պեպոյի» ներկայացման առթիվ, ահա, թե ինչ էր գրում Չմշկյանը, իր հետաքրքրութեան գլխավոր առարկան՝ դարձնելով այն, թե ռեալիստական կատակերգութեան ինչպե՞ս (ռեալիստորեն) է մարմնավորված բեմի վրա: Նա գրում է.

«Կյուրակե օրը, փետրվարի 13-ին, Թիֆլիզի Արտիստական ընկերութեան բեմի վրա ներկայացվեցավ ուսուցիչ լեզվով մեր պատկառելի թատերգակ Գ. Սունդուկյանցի լավագույն կատակերգութիւնը՝ «Պեպոն»:

Օտար լեզվով թարգմանված լինելն ամեն մի պիեսի համար ամենալավ փորձաքարն է, և պետք է ասել, որ շնայելով յուր բոլոր կենցաղական առանձնահատկութիւններին, շնայելով երկախոսութեանց աղ ու հոտի ուսուցիչ թարգմանելու անկարելիութեանը՝ «Պեպոն» ամենահաջող կերպով դիմացավ փորձութեանը: Բնավորութիւնների զարգացումը, գործողութեան կենդանութիւնը և հետզհետե սաստկացող հետաքրքրականութիւնը, ազնիվ աղքատութեան ու անպատկառ հարստութեան մաքառման հարատե գաղափարը «Պեպոյին» միշտ ժամանակակից լինելու արժանավորութիւնն են ընծայում:

<sup>1</sup> «Արձագանք», 1889 թ., № 38:

Պիեռի ներկայացումը փայլուն էր ըստ ամենայնի. քոլոր գերակատարները վերին աստիճանի սիրով էին վերաբերվել իրենց դերերին, այնպես որ խաղի ամբողջութան, բնական կարգ ու սարքի, զգեստների և գրիմի կողմից ոչինչ ավելի ցանկալու բան չէր մնացել:

Պ. Վոլսկին (Պեպո) անկեղծ զգացմունքի մի ահագին պաշար ցույց տվեց և պատվական կերպով պատկերացրեց այն ազնիվ ձկնորսների տիպարը, որ ըմբռնում է սրտի ամենանուրբ շարժումները: Կանանց դերեր կատարողներից ընդհանուր ուշադրություն գրավեց տ. Ստենյուկինան (Արուսյուն Ջիմզիմովի կինը), որը հիանալի ներկայացրեց պչրող, ունայնասեր կնոջ պատկերը, որը զուրկ չէ, սակայն, բնավորության գեղեցիկ հատկություններից. նա այդ ցույց տվեց այն տեսարանում, ուր հանդիմանում է յուր ամուսնուն Պեպոյի հասցրած անարգանքին անտարբերությամբ վերաբերվելուն համար:

Պ. Սեսկին (Ջիմզիմով) խիստ տիպարական մի բնավորություն ներկայացրեց. չէ կարող շնկատել, որ տեղ տեղ նա յուր առոգանությունը տեղականին էր նմանեցնում, որ մի ավելորդ քան է թարգմանական պիեսում, թեպետ հասկանալի է: Մենք կարծում ենք, որ նորա տեղ ամեն մեկն էլ նույն փորձությունը կարող էր ենթակա լինել: Սակայն այդ հանգամանքը բնավ չէր վնասում տպավորությանը: Լավ էր նաև պ. Պետրով (Գիբո), իսկ պ. Պախոմովը (Կակուլի) ապացուցեց, որ հիմնավորապես ուսումնասիրել է կինտոյի բնավորությունը:

Հասարակությունը հեղինակին բնավ կոչեց, բուն ծափահարություններով վարձատրեց նորան»<sup>1</sup>:

Ավելի ուշ, 1901 թվականին, Չմշկյանը տեղեկություն էր տալիս այն մասին, որ «Պեպոն» խաղացվել է թրիլիսիում 1874—1875 թվականներին, որ պիեսը թարգմանել է «ինքը պ. Սունդուկյանը և խմբագրել է պ. Օպոչինինը, այդ թարգմանությունը ներկա «Черноморский вестник»-ի խմբագիր

<sup>1</sup> «Արձագանք», 1894 թ., № 19:

պ. Արքենկնը, որը կատարում էր Կակուլու դերը, ռուս առաջնակարգ դերասան Ստրելսկու (Պեպո) հետ, տարավ յուր հետ Մոսկվա և այնտեղ խաղաց յուր օգտին»<sup>1</sup>։

Հայն արձագանք էին գտնում «Պեպոյի» ներկայացումները վրացերեն լեզվով։ Չմշկյանը կատարում է Պեպոյի դերը վրաց բեմի վրա։ «Պետք է ասած,— գրում է Չմշկյանը,— որ ես մեծ համակրանքով եմ վերաբերվում առհասարակ դեպրոլոր վրաց գործունենությունը»<sup>2</sup>։ Նա մասնակցում է և՛ «Էլի մեկ զոհի» վրացերեն ներկայացմանը՝ Բրիլիանտովի դերում։ Հայ և վրաց թատրոններում ռեալիզմի պրոպագանդի և պաշտպանության մի ցայտուն օրինակ էր սա, որ տալիս էր Չմշկյանը որպես դերասան և արձանագրում դրա նշանակությունը հարևան ժողովրդի թատրոնի կյանքում, որպես Սունդուկյանի տարեգիրը։

Անդրադառնանք հայկական օրինակներին, որոնց մասին կարևոր գրական-քննադատական փաստաթղթեր է թողել Չմշկյանը։ Այդ փաստաթղթերը նորից հուշեր են, նաև հոգվածներ «Խաթաբալայի», «Էլի մեկ զոհի», «Պեպոյի», «Քանդած օջախի», և «Ամուսինների» վերաբերյալ։

Չմշկյանի և Սունդուկյանի բարեկամությունը նախ և առաջ գաղափարական էր, նրանց միացնում էր հայ նոր թատրոնի ճակատագիրը։ Այդ էլ խոստովանել է Չմշկյանը. «Սունդուկյանի հետ ես կապված էի սերտ բարեկամական հարաբերություններով, հայ թատրոնի գաղափարի պատճառով։ Նա սիրում էր այդ գաղափարը, և համակրում էր նորան՝ այնքան, ինչքան երբեք չէր կարող սիրել մեկ ուրիշը, նորա կենսական թե պաշտոնական դրություն մեջ գտնվելով»<sup>3</sup>։ Չմշկյանը ծանոթ էր, գիտեր իր բարեկամի հոգու գաղտնիքները, նրանք ապրել և շնչել են միևնույն օդը։ Չմշկյանը բեմի Սունդուկյանն էր, Սունդուկյանը հանձին նրա ուներ իր հաստատ հենարանը թատրոնում։

<sup>1</sup> «Նոր դար», 1901 թ., № 76։

<sup>2</sup> Չմշկյան, «Իմ հիշատակարանը», էջ 107։

<sup>3</sup> Նույն տեղը, էջ 3։

Գևորգ Չմշկյանի կողմից Սունդուկյանին տրված գնահատականների ելակետը ռեալիզմն էր, ռեալիզմի գիտակցական պաշտպանութունը: Չմշկյանը, Սունդուկյանի ռեալիզմն արժեքավորելով, ինքն իր հերթին դատապարտում էր դրամատուրգի արտացոլած իրականութունը, վերին աստիճանի ակտիվ էր դեպի կյանքը, իր քննադատության մեջ էլ զարգացնում էր դրամատուրգի մտքերն ու գաղափարական տենդենցները: Չմշկյանը, այսպիսով, վերցնում էր իր վրա դրամատուրգի էության հրապարակախոս-մեկնաբանի դերը, հրապարակախոսական կիրք էր մտցնում իր գրական քննադատության մեջ: Քննադատության այդ տիպն էլ դաստիարակվում էր մեզանում ռուս լուսավորիչների օրինակով:

Սունդուկյան:—Չմշկյան մթնոլորտում կարող էր ծագել վաճառականությանը տրված Չմշկյանի բազմաթիվ բնորոշումներից նաև այս մեկը. «Մեր հարուստ հայ վաճառականների մեծ մասը միայն մեկ միջոց, մեկ ճանապարհ գիտեն փող վաստակելու, — դա է վաճառականութունը, որի նշանակութունը նորանց համար անբաժան է ամենածանր հարըստահարութունից»<sup>1</sup>: Ինչպես իրեն՝ Սունդուկյանի համար, այնպես էլ Ամերիկյանի և Չմշկյանի համար Զամբախովը, Զիմզիմովը դարձել էին հասարակ անուններ և կյանքի նմանօրինակ երևույթներին նրանք տալիս էին նույն այդ «կոշումը»: Դիտելով «Նամուս» (Արաքսյանի) ներկայացումը, Չմշկյանը, օրինակ, այսպես էր արձանագրում իր տպավորութունը. «Բավական է ինձ համար, կրկնում եմ, որ երիտասարդ անփորձ հեղինակը նկատել է մեր տարաբախտ կյանքի այդ կողմը, հասկանում է և սարսափում, տեսնելով, թե ինչպես նահապետական մաքուր ընտանիքում ոտ են դնում նոր սերնդի զամբախովներն ու զիմզիմովները՝ ծածկված համալսարանական դիմակի տակ»<sup>2</sup>: Ու, ընդհանրացնելով իրեն՝ Սունդուկյանի դրամատուրգիայի սոցիալ-հասարակական արժեքը, խիստ դրական վերաբերմունք ցույց տա-

<sup>1</sup> «Մշակ», 1874 թ., № 43:

<sup>2</sup> Արձագանք», 1896 թ., № 48:

լով նրա կողմից երևան բերված պրորլեմներին ու բնավորութ-  
յուններին, Չմշկյանը գտնում էր նրա մեջ, ահա, այս ներ-  
քին տրամաբանական կառուցվածքը. «...հեղինակը (Սոնն-  
դուկյանը. Ս. Հ.) յուր գործունեության սկզբում, «Քիշիբլան  
սարրը խեր է» կատակի մեջ, Օսկան Պետրովիչի տիպով ցույց  
է տալիս հին և նոր սերունդների կյանքի կոմիկական երևութ-  
ները. հետո «Խաթարալայի» մեջ նա արդեն բացատրում է  
Քարասիմ Յակուլիչներից և մասխյանցիներից բազկացած  
հասարակության կազմը, դուրս բերելով մեկի խաբերայության  
սխաեմը, մյուսի, այդ սխաեմի տակ ճնշվածի բացական-  
չություններն ու ննկարողությունը՝ մարտնչել ստույգան  
դեմ:

«էլի մեկ զոհի» տաղանդավոր հեղինակը, շարունակելով  
յուր դիտողությունը, արդեն որոնում է պատճառներ՝ թե  
արդյոք ինչու՞ հայ երիտասարդը անզոր է դիմադրելու հայ  
հին սերունդի սխաեմին, ինչու՞ զարգացած համալսարանա-  
կան Միքայելը, զինված լոգիկական դատողություններով,  
դարձյալ ընկճվում է հին սերունդի հզոր սոփիզմների ար-  
տահայտությունների ներքո: Եվ հետո, կարծես, դժվարանա-  
լով այդ հարցերը լուծել ունևոր հոր և նորանից կախված որ-  
դու մեջ, նա դիմում է ամբոխին և, ահա, նուրա շմարած կեն-  
սական գոյությունից հրապարակ է հանում ձկնորս Պեսպոյին  
ու նորա ուժեղ բուռնցքներով ապտակում է փտած, հին  
վաճառականության խարդախ սոփեստությունը: «Քանդած  
օջախում» հեղինակը որոնում է այդ հասարակության մեջ  
բոլոր տարակուսանաց նախապատճառը:

«...Մեր քանքարավոր հեղինակը մտել է նորերումս Թիֆ-  
լիզի հայության սալոնների դիմակավորված շրջանները և  
այնտեղից հրապարակ է հանել «Ամուսիններ» անունով, շորս  
արարվածով մի նոր պիեսա, որի մեջ երևալու է սալոնների  
թեթևալիկ, բայց դիմակավոր սերունդը, որի լծի տակ ճըն-  
շրվում է իսկական առաքինությունը և նուրբ հասկացողու-  
թյան տեր երիտասարդությունը»<sup>1</sup>:

<sup>1</sup> Չմշկյան, «Իմ հիշատակարանը», էջ 172: Ընդգծումներն իմն են. Ս. Հ.:

Չմշկյանի՝ Սունդուկյանին տրված այս բնութագիրը շատ ճշմարտություններ է պարունակում իր մեջ և կարևոր տեղ ունի դրամատուրգին նվիրված քննադատական գրականության մեջ: Չմշկյանը մեկ անգամ նույնիսկ բացականշել է. «Կեցցե Գաբրիել Սունդուկյանը և նրա հանճարը»<sup>1</sup>: «Գաղափարատեր դրամատուրգ», «բստ եվրոպական հասկացողության դրամատուրգ», իր ժամանակի «միակը»,— այսպես է ասում նրա մասին Չմշկյանը: Նա դիտել է տալիս և այն երևույթը, որ Սունդուկյանը ազդեցություն է ունեցել նաև հայ դրամատուրգիայի զարգացման հետագա ընթացքի վրա, գրելով թե «գավառների հայ երիտասարդության մեջ ծագում է մի նոր տենդային ձգտումն՝ հետևել Թիֆլիզին, նմանվել Թիֆլիզին, ստեղծել իրանց Տեր-Գրիգորյանները, Սունդուկյանները»: Օրինակը էմին Տեր-Գրիգորյանն էր<sup>2</sup>:

Չմշկյանը հարցը երբեմն տեղայնացնում էր, գրելով, թե Սունդուկյանի պիեսներում «կենսագրված է ամբողջ Թիֆլիզի հայերի կյանքը՝ յուր ուրախ թե՛ տխուր, լուրջ թե՛ ծիծաղա-

<sup>1</sup> Չմշկյան, «Իմ հիշատակարանը», էջ 176:

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 173: Եթե Չմշկյանը հիշում է էմին Տեր-Գրիգորյանին, ապա փաստերն ասում են, որ Ա. Արփիարյանը ևս խոստովանել է Սունդուկյանի ազդեցությունը: Պ. Պոռչյանը «Ցեցերը» նվիրել է Սունդուկյանին այսպիսի տողերով. «Այո՛, Գաբրիել՛, շփոթեմ զուգադիպությամբ, թե մի վերջին նախազգացությամբ «Ցեցերս» «Մուրճ» ամսագրի խմբագրության առաջարկությամբ գրեցի նույն ձևերը, նույն նշանավոր տարին, կրք լրանում էր քո 25-ամյա դործունեության շրջանը: Այդ ժամանակ հիշողությանս մեջ կենդանանում էին մեր անցյալ և փառավոր օրերը, ներկայանում էիր աչքիս զու քո վառվռուն թարմ երիտասարդությամբ և կարծես, առանց հետս խոսելու, խրախույս էիր տալիս՝ անընդհատ գրելու գրել: Ամիս ու կես տևեց սկսած օրիցս և ներկա կրկն ավարտվեցալ: Այնուհետև ինձ մնում էր լսել ներքին բուռն զգացմանս թելադրությանը՝ «Ցեցերս» նվիրել քո անվանը»: (Պերճ Պոռչյան, «Ներկերի ժողովածու», հ. 2-րդ, Հայպետհրատ, Երևան, 1953 թ., էջ 10: Տեքստը պատրաստեցին Ա. Իսահիկյան և Գ. Հովսեփյան): Գ. Սունդուկյանն ազդեցություն է ունենում նաև պրոլետարական դրամատուրգ Ա. Վարդանյանի վրա: Վերջինիս «Ուրվականներ» վեպերը՝ գրված 1913 թվականին և նվիրված Սունդուկյանի հիշատակին, դրա ապացույցն է:

շարժ տեսարաններով»<sup>1</sup>։ Այստեղ ճշմարտությունը չի անտեսված, սակայն նաև քիչ է ասել, որ միայն Քրիլիսիին էր Սունդուկյանի ստեղծագործության նյութը, երբ համանման երևույթներ և ամբողջ մի պատմաշրջան ապրել է ոչ միայն Քրիլիսիին, այլ նաև Անդրկովկասը, ապրել է ժողովուրդը, ապրել են ժողովուրդները, երբ թևակոխել են կապիտալի նախակուտակման դարաշրջանը, տեսել և տառապել են փողի գերխոսանության՝ ահավոր հակասություններով լի ֆալսիան։ Քրիլիսիի իրականությունից Սունդուկյանը դուրս է բերել այնքան նյութ, տվել է այդ նյութը գաղափարական ու գեղարվեստական այնպիսի ընդհանրացումներով, որ նա ընդունելի և գնահատելի էր նաև բոլոր այն վայրերում, ուր կային և գործում էին կյանքի նույն օրինաչափությունները։

Սակայն «Պեպոն» Չմշկյանի համար գլուխ գործոց էր, ու ոչ միայն ապտակ Ջիմզիմովին, այլ նախ և առաջ սոցիալական ցասման արտահայտություն։ Չմշկյանն էլ «սրտից բխած» երկ է համարել այն, որն անցել է դրամատուրգի «մտածմունքների, արյան, և ուղեղի միջոցով», պատկերել դեմոկրատական խավերի մարդկանց<sup>2</sup>։ Նվիրելով «Պեպոն» Չմշկյանին, Սունդուկյանն ինքն իր հերթին առաջաբանում պատմում էր, թե գաղափարական ինչ մթնոլորտում էր ծրնվում երկը և թե որպիսի ժողովրդասիրություն էր համակել նրան՝ կատակերգությունը ստեղծելիս։ Չմշկյանը ևս վկայել

1 Չմշկյան, «Իմ հիշատակարանը», էջ 171։ Դ. Դեմիրճյանը, հետաքրքրական մտքեր և խոհեր արձանագրելով Սունդուկյանի վերաբերյալ, նույնպես հակված է եղել կարծելու, որ նա շատ է տուրք տվել «սեղիին», իր նեղ միջավայրին։ Անգամ բարբառը նա այնքան որոշիչ տարր է համարել, որ գրել է, թե «լեզուն փոխելով «Պեպոն» կզառնար խորթ, կհնչեր կեղծ, անկենդան և կփչանար։ Որովհետև կփոխվեր նրա մի հատկությունը միայն, իսկ մյուսները մնալով իրենց սեղերում, ոչինչ չէին անի, քան ավելի ցայտուն կզարձենին գրական լեզվի անտեղի լինելը»։ (Դ. Դեմիրճյան, «Ներկերի ժողովածու», հ. 6, էջ 555, Հայպետհրատ, Երևան, 1958 թ.)։ «Պեպոյի» և առհասարակ Սունդուկյանի պիեսների վրացերեն ու ռուսերեն ներկայացումները ցույց են տվել, որ Սունդուկյանի լեզուն չի խանգարել ճանաչելու նրա մեծ բովանդակությունը։

2 Տե՛ս Չմշկյան, «Իմ հիշատակարանը», էջ 175։

է, թե ինչպես է քննարկել աշխատանքը, երբ Սունդուկյանը թելադրում, իսկ ինքը գրի էր առնում դրամատուրգի թելադրածը<sup>1</sup>։

Չափազանց արժեքավոր են Չմշկյանի այն տողերը, որոնցով նա վերապատկերել է «էլի մեկ զոհի» ժամանակը, պիեսի տարբեր տարբերակների առաջացման հանգամանքները, նորից շեշտելով Սունդուկյանի բժախնդրութունն ու խիստ պահանջկոտութունն իր հանդեպ<sup>2</sup>։ Չմշկյանը զայրույթով է բնութագրել «էլի մեկ զոհի»՝ իրականութունից պիեսը մտած բուրժուական տիպերին, որոնց Սունդուկյանը, ըստ Չմշկյանի, գտել էր «այս հայության (վաճառականության. Ս. Հ.) աղբանոցում, որտեղ հոգևոր հին սերունդը կամեցել է զոյութուն տալ մեկ ուրիշ լավ եվրոպական հասկացողության տեր սերնդի, աշխարհ է բերել հակառակ յուր կամբին շնչավորված սերունդ, որը անջատված հնից, երբեք չի կարող մոտենալ առողջական նոր սերունդին—Միքայելի և Անանու նմաններին»<sup>3</sup>։

Չմշկյանի համար, սակայն, պրոբլեմն այն էր, որ հին սերունդը՝ Սարգիս, Բրիլիանտով, Սալումե—ռեալիստներ են—կյանքի տերերը, իսկ Միքայելը և Անանին—իդեալիստներ—«գաղափարականացրած»՝ հեղինակի կողմից, այդ պատճառով թույլ և նահատակվող։ Չմշկյանը թերագնահատում էր Միքայելին՝ կասկածելով, թե որքան արմատ ունի այդ կերպարը կյանքում։

Սունդուկյան-դրամատուրգը Չմշկյան-տեսաբանի, Չմրշկյան-մտածողի ու քննադատի խոհերի մշտական առարկան է եղել։ Սունդուկյանն անցել է Չմշկյանի հոգևոր կյանքի միջով՝ նրա գործունեության սկզբից մինչև վերջ։ Դրամատուրգը տվել է նրան ռեալիզմի բարձր օրինակը։ Չմշկյանը պաշտպանել է ռեալիզմը, պաշտպանելով նախ և առաջ Սունդուկյանին։ Սունդուկյանի օրինակի վրա երևան եկան Չմշկյանի

1 Չմշկյան, «Իմ հիշատակարանը», էջ 95—96։

2 Նույն տեղը, էջ 84—86։

3 «Մեղու Հայաստանի», 1884 թ., № 53։

ըմբռնումներն ու տեսակետները՝ ռեալիստական արվեստի վերաբերյալ: Ռեալիզմի տեսութունը, ռեալիզմի պաշտպանութունը Չմշկյանը դրսևորել է, տասնյակ տարիների ընթացքում քննելով դրամատուրգի ստեղծագործությունը, ապա և այդ տեսությունը դրամատուրգիայից փոխադրելով բնմ:

Կրթոտ էր Չմշկյանը՝ իր համոզմունքների պաշտպանության մեջ, նաև նախանձախնդիր, որպեսզի զարգանա ինքնուրույն դրամատուրգիան և հաստատվի բարձր գաղափարայնության գիծը հայ թալարոնում: Նա օրինակ էր բերում և՛ վրաց թատրոնը, կոչ անելով յուրացնել նրա լավ փորձը: «Շեքսպիրը վրացերեն» հոդվածում, վերստին շարադրելով իր մտքերը թատրոնի վսեմ նշանակության մասին, Չմշկյանը «Վենետիկի վաճառականը» զնահատում էր, որպես «սքանչելի դրամա»՝ իրեն քաջ ծանոթ դեռևս 1860-ական թվականներից և, որի ներկայացման մեջ նա կատարել էր Շեյլոկի դերը: Այժմ, 1878 թվականին, նա «Վենետիկի վաճառականի» մասին գրում էր. «Արդարև, որ այդ պիեսայի իմաստը, երևելի և հանճարավոր իմաստ է, և որ ամեն մի թատրոնական բնմ առանց Շեքսպիրին ըմբռնելու չէ կարող իր գոյութունը ապահովված և արդյունավոր համարել...<sup>1</sup>: Հռչակավոր պիեսի գլխավոր թեման էլ Չմշկյանը համարել է «հրեայի սարսափելի դրությունը քրիստոնյաների շրջանում և նրա սաստիկ վրեժխնդրության ծարավը հագեցնելու նպատակը...»<sup>2</sup>:

Ներկայիս շեքսպիրագիտության տեսակետից սահմանափակ կարող է թվալ «Վենետիկի վաճառականի» շմշկյանական մեկնարանությունը: Սակայն Չմշկյանն ինքն իր ըմբռնումը դարձրել է համակրելի՝ հանդեպ ստորացված մի ժողովրդի, մյուս կողմից, Շեքսպիրին համարել է թատրոնի «պարտադիր» և անառարկելի դեմք:

Շեքսպիր և Մուրացան, Շեքսպիր և Քիշմիշյանց — անհա-

<sup>1</sup> «Մշակ», 1878 թ., № 56:

<sup>2</sup> Նույն տեղը:

մատեղելի անուններ էին, բայց նրանց «համատեղում էր» Չմշկյանը լոկ այն պատճառով, որ Մուրացանի «Ռուզան» դրաման և Քիշմիշյանցի «Օրիորդ Բերոյանց» կատակերգությունը նա դիտում էր ինքնուրույն թատերգության զարգացման տեսանկյունով, պաշտպանում էր երիտասարդ գրողների՝ նրանց բարոյական օգնություն ցույց տված լինելու համար, մասնավորապես կատակերգության մեջ տեսնելով արդիականության պատկերման առողջ ձգտումներ: «Եթե Քիշմիշյանցի տեղ մեկ սալոնական բթամիտ ժան կամ որևիցե մողայաձև հագուստում խեղդված Պետինկա կամ Սաշինկա լիներ հեղինակը, տարակույս չկա, որ դահլիճը լիքը կլիներ: Բայց որովհետև հեղինակը սովորում ծածկված մեկ ուսուցիչ Քիշմիշյանց է, իսկ դերակատարները հայ թատրոնի արտիստներ, *fi donc!*: Կտեսնե՞ն պատվելի բուրժուական Թիֆլիզի հասարակություն: Վերջի ծիծաղն է համեղ»<sup>1</sup>:

Չմշկյանին ոգևորել է այն, որ կատակերգության մեջ ծաղրված էր բուրժուական մտավորականությունը և պատկերված էր առաջավոր հայ կինը. — «...ինչո՞ւ ուրեմն չներենք մեկ քանի բեմական թերություններ նորածին հաղվազյուտ հեղինակի և խրախուսենք նորան հառաջ, քան թե մնանք անտարբեր և սպասենք, որ պոլսեցոց Պոլ-Ջոններից պիտի առաջ գա մեր ապագան:

Քաջալերվի՛ր տաղանդ խոստացող հեղինակ, մի՛ նայիր բո հայրենակիցներիդ անտարբերության, աշխատի՛ր, որ ցույց տաս մեզ ազնիվ օր. օր. բերոյանցների և սոֆիաների գործունեության հետևանքը» — եզրափակելով իր հոդվածը, գրում էր Չմշկյանը<sup>2</sup>:

Կրթոտ էր գրում Չմշկյանը նաև «Ռուզան» դրամայի հեղինակի առնչությամբ, ամենից առաջ ընդդժած լինելու համար նրա դեմոկրատական ծագումը, ապա նաև հարվածելու նույն բուրժուական հասարակությանը:

<sup>1</sup> «Մեղու Հայաստանի», 1881 թ., № 265: Ընդգծումն իմն է. Ս. Ը. Ֆրան.— թրած:

<sup>2</sup> «Մեղու Հայաստանի», 1881 թ., № 265:

Հետաքրքրական էր «Ռուզանի» համեմատությունը «Արշակ Բ», «Շուշանիկ», «Սամել» ողբերգությունների հետ, համարելով «Ռուզանը» կատարելագույն: Բայց Չմշկյանի միտքը, գլխավոր հարցը հեղինակն էր. «Հեղինակը մի պրիկաշչիկ է... fi done!»

Պրիկաշչիկ, մի գործակատար, մի աննշան, առանց անունի, առանց տիտղոսի... մի երիտասարդ համարձակվել է հրապարակ դուրս դալ և հանդգնել է գրել պատմական դրամա յուր նման դիպլոմ շունեցող դասակարգի երիտասարդական շրջանից և հայտնե՞լ է Թիֆլիզի հայ բու-մոնդին յուր անհերքելի գոյությունը... Շնորհավորանք պ. Մուրացանին— շարունակել աշխատել և կատարելագործել յուր գրիչը»<sup>1</sup>:

Գևորգ Չմշկյանը հմուտ խորհրդատու է եղել, երբ նկատել է, որ դրամատուրգները շեղվել են արվեստի ճանապարհից: Այսպիսի դեպքում նա պարտք է համարել միջամտել գործին և հանդես գալ բարեկամ քննադատի դերում: Դրա օրինակն է նրա գրախոսական հոդվածը, որը նա տպագրել է «Պարարդի աստղագետը» պիեսի և ներկայացման առիթով: Այդ հոդվածն էլ թող ընթերցողը դիտի իբրև «նախամուտք» Չմշկյանի թատերական հայացքները ուսումնասիրելիս:

Չմշկյանը կոչ էր անում «ունկնդիր լինել հասարակական կարծիքին և անկեղծ... դատողությամբ կրիտիկային, առանց որի ոչ մի հասարակական գործ չի կարող անսայթաք ընթանալ»<sup>2</sup>: Հոդվածում Չմշկյանն ասում է. — «Ինչպես երևում է, պպ. Սարգսրյանը և Վրույրը մեծ ջանք էին թափել հարմարեցնելու բեմի համար տաղանդավոր վիպասան Բաֆֆիի թարգմանությունը, բայց և այնպես այդ հարգելի դերասանները միայն «կարել» և «ձևել» են, առանց ենթարկելու իրանց աշխատությունը մի հիմնավոր կրիտիկայի:

Պետք է ասել, որ բեմը սիրում է սահուն ընթացք և եղելություն ճշգրիտ պատկերներ, որոնք հետևելով մեկը մյուսին,

1 «Մեղու Հայաստանի», 1882 թ., № 12, Տե՛ս նաև Վ. Պարտիզունի, «Մուրացան», Հայպետհրատ, Երևան, 1956 թ., էջ 311:

2 «Արձագանք», 1885 թ., № 106, ստորագրված է «Հին թատերասեր»:

վերջին պատկերով բացատրում են պիեսի բովանդակութեան գլխավոր նպատակը, իսկ հարգելի դերասանների այդ ծանր աշխատութեան մեջ պակասում են այդ երկու արժանավորութուններն ևս, էլ շնք խոսում անախրոնիզմի մասին:

Պիեսին սահուն ընթացք տալու համար պետք է խուսափել երկար դիալոգներից և մոնոլոգներից, որոնցից վերջինը ներկա թատրոնական գրվածքներում բոլորովին տեղ չունի, որովհետև մենախոսութունները խանգարում են գործողութեան արագ ընթացքին իրանց անտեղի և երկարուձիգ դատողութուններով, որոնք ձանձրութուն են պատճառում հանդիսատեսին՝ թմրեցնելով նորա երեակայութունը:

Ինչ վերաբերում է անախրոնիզմին, դա կայանում է նորանում, որ Փանահ խանը համարյա մի ակնթարթում, աստղագետի առաջարկութեամբ, ստեղծում է Շուշի քաղաքը և այնտեղից արդեն նվաճում է հայ մելիքներին, մնալով թե ինքը, թե նորան շրջապատող անձնավորութունները միևնույն հազուատներով և միևնույն հասակի մեջ, այն ինչ երեվելի Շուշին ստեղծելու համար հարկավոր են եղել մի քանի, գուցե և տասնյակ տարիներ:

Եթե «Ղարաբաղի աստղագետը» բեմի հարմարեցնող հարգելի պարոնները բարեհաճեն վերաբննել այդ պիեսը, ենթարկելով նորան խիստ կրիտիկայի, դրա շնորհիվ պիեսը մի ուրիշ նոր կերպարանք կարող է ստանալ. ևս համոզված եմ, որ «Ղարաբաղի աստղագետը» կմնա ընդմիշտ հայ թատրոնի աղքատիկ բեմի համար մի փայլուն զարդ:

Մի բան ևս, ինչպես ևս նկատեցի, ամեն մի դերասան՝ ով ինչ դեր ուղեցել է վերցրել է և պատրաստել է այնպես, ինչպես ինքն է կամեցել. սորանից երևում է, որ խմբի մեջ չկա մի հմուտ ռեժիսյոր, կամ եթե կա, նրան լսող չկա: Ռեժիսյորը միևնույնն է խմբի համար, ինչ որ հոգին մարմնի համար: Ռեժիսյորին չլսող դերասանը, նորա խորհուրդներին չհետևողը, երբեք կատարյալ դերասան չի կարող դառնալ և երբեք ապագա չի ունենալ:

Ինձ համար, զորօրինակ, անհասկանալի է, թե ինչո՞ւ պ. Վրույրը վերցրել է սիրահարի դերակատարութունը, բոլորո-

վին նորա մինչև այժմ կատարած դերերը ոչ մեկի նմանը չէ  
և չէ էլ կարող լինել:

Հետո, պարոն դերասանները շպետք է կմկման դերակա-  
տարութեան ժամանակ, այլ պետք է այնպես հաստատ իմա-  
նան դերերը, և քմբոնած լինեին նորա հոգին, որ շխանգարեն  
հանդիսատեսի իլյուզիան, որ իսկույն անհետանում է, երբ  
դերասանը սկսում է կմկմալ, աչքերը շոած հուշարարին նա-  
յելով:

Ահա իմ անկեղծ խորհուրդներս, որ ես սուրբ պարտք հա-  
մարեցի հաղորդել ՝ հարգելի նորակազմ դերասանական  
խմբին»<sup>1</sup>:



<sup>1</sup> «Արձագանք», 1895 թ., N 106. «Հին թատերասեր» Ընդդոմները  
բնագրում:

Այս մենագրութեան մեջ Գ. Չմշկյանի անստորագիր կամ ծածկանունով  
հոդվածները հիշատակված են ըստ «Իմ հիշատակարանը» գրքի բերվո-  
ղրաֆիայի:

## ՐԵՄԱԿԱՆ ՌԵՍԱԼԻԶՄԻ ՊՐՈՐԵՄՆԵՐԸ

Քեմը, բեմարվեստը, դերասանի վարպետության տեսական պրոբլեմները— այն բնագավառն էր, որտեղ Չմշկյանի միտքը գործել է ամենից ավելի լարված, ու նա որոնել է շատ անգամ, շատ բան, հայ իրականության մեջ չունենալով, կամ համարյա չունենալով իր նախորդը:

Եթե կլասիցիստական թատրոնը և այդ թատրոնի դերասանն արևմտահայության և արևելահայության մեջ գիտեր և ճանաչում էր իր տեսությունը և այն կիրառում էր գործնականորեն, ապա ռեալիստական թատրոնը և նրա դերասանը դեռ չուներ, դեռ չէր ստեղծված նրա տեսությունը. այն ծրնվում էր թատերական պրակտիկայի հետ միասին, պրակտիկայի համար, կլասիցիստական թատրոնի և խաղաոճի քննադատների ու հասկացողությունների դեմ մղված ծանր ու երկարատև պայքարում, այնքան երկարատև, որքան որ բեմական ռեալիզմի առաջացումից հետո էլ կլասիցիզմը թատրոնում նույնիսկ լիովին հաղթահարված չէր:

1860-ական թվականներին Գ. Չմշկյանի առաջ կանգնած պրոբլեմները պահանջում էին արագորեն լուծումն տալ նրանց, շտապել պատասխանել կյանքից ու թատրոնից եկող հրատապ հարցերին, տեր կանգնել այդ հարցերին, շտուսափել նրանցից, այլև գլխավորել նոր շարժումը՝ բեմի վրա ռեալիզմի հաղթանակն ապահովելու համար:

Մ. Նալբանդյանը, «Հյուսիսսփայլը» նույն այդ պրոբլեմ-

ներին պատասխանում էին ռեալիզմի տեսութեան ընդհանուր դրույթներով: Նալբանդյանը, «Հյուսիսափայլը» շտեման հայ պրոֆեսիոնալ թատրոնի ստեղծումը: Չմշկյանի հանդես գալուց հետո, արևմտահայ միջավայրում նույն պրոբլեմները ծագեցին Հակոբ Պարոնյանի առաջ: Պարոնյանն էլ իր հերթին կրակ բաց արավ ահավոր շափերով դրսևորվող կլասիցիզմի ու կեղծիքի դեմ բեմի վրա: Չմշկյանի հետ, նրա կողքին այդ պրոբլեմները շատ էին զբաղեցնում առանձնապես Մ. Ամերիկյանի միտքը:

Չմշկյանին՝ իրեն, բեմական ռեալիզմի պրոբլեմները զբաղեցրել են ամենից սովելի դործնական աշխատանքում, երբ ծնվել է Չմշկյան-Ամերիկյան դերասանական ընկերությունը, և ստեղծվում էին այդ ընկերության առաջին ներկայացումները, երբ ռեալիստ-դրամատուրգը՝ Շեքսպիր կամ Օստրովսկի, Սունդուկյան կամ Սուխովո-Կոբլին, արդեն պահանջ էին դարձնում ունենալ ռեալիստական բեմական կերպար, ռեալիստական ներկայացում, ռեալիստական խաղաոճ: Իր սերնդի մարդկանց բնութագրերը տալով և նրանց կենսագրական «ուսվածքները» գրելով, Չմշկյանը միշտ էլ անդրադառնում է այն հարցին, թե ո՞վ ո՞ր ներկայացման մեջ բեմական ի՞նչ երևելի կերպար է ստեղծել, ի՞նչ է եղել այդ կերպարի էությունը և ի՞նչ եղանակով է դերասանը հասել իր նպատակին բեմի վրա: Այդ իսկ իմաստով նա իր մտքերը շաղ է տվել ոչ միայն և ոչ այնքան ընդհանուր դատողություններ անելով, որքան այն ժամանակ, երբ նկարագրում է մի որևէ ներկայացում, կամ երբ գրում է Ամերիկյանի, Մատինյանի, Սուբիասյանի, Արամյանի, Մանդինյանի, Միրաղյանի, Տեր-Գավթյանի մասին: Չմշկյան-թատրոնական տարեգիրը, Չմշկյան-հայ թատրոնի պատմիչը, Չմշկյան-արվեստակից ընկերների կենսագրերը— միշտ էլ ուշադրության կենտրոնում է եղել: Նա որպես բեմական ռեալիզմի տեսաբան հանդես է գալիս հենց այն ժամանակ, երբ գրիչը ձեռքն է վերցնում և կատարում է տարեգրի ու կենսագրի դերը: Իբրև տեսաբան նա վերին աստիճանի ցայտուն դրսևորեց իրեն 1880-ական թվականների սկզբին, երբ գրում է արև-

մըտահայ դերասանների մասին, բայց դա հատուկ խնդիր է, որը և պահանջում է իր հատուկ վերաբերմունքը:

1860-ական թվականներին էր՝ 1863—1864 թվականներին, երբ Չմշկյանը ճանապարհ էր որոնում դեպի Ամերիկյանը և Սուբիասյանը, կարդում է նրանց Շերսպիրի «Թիմոն Աթենացին» ողբերգության սեփական թարգմանությունից հատվածներ և կարդում է այնպես, որ վեճ է ծագում, թե ի՞նչպես պետք է կարդալ բեմից: Առաջ էր եկել թատրոնի իբրև ինքնուրույն արվեստ, այն էլ իբրև ռեալիստական արվեստ հարցը, — թե ի՞նչպիսին պետք է լինի դերասանի վարքագիծը՝ բեմում անդրանիկ նախադասությունը, ֆրազն արտասանելու վայրկյաններից սկսած: «Այդ ընթերցանություն ժամանակ ես նկատեցի, որ թե՛ կարդալու և թե՛ շեշտահարություն ձևը (որովհետև ես աշխատում էի կարդալ այնպես, ինչպես երևակայում էի, թե պիտի կարդամ թատրոնական բեմից) նրանց (Ամերիկյանին, Սուբիասյանին. Ս. Հ.) շատ անծանոթ թվաց և անգամ ծիծաղ պատճառեց: Կարդում էի շատ հասարակ և բնական ձևով, — գրում է Չմշկյանը:

Իմ այդ կարդալու ձևս թատրոնական արհեստին վերաբերող երկար վիճաբանության պատճառ դառավ:

Նորա համոզված էին, որ պիտի ընդունված երգեցողական կամ, ինչպես ասում են մինչև այժմ, ողբերգական առագանությունով արտասանել ամեն մեկ խոսք, որպես թե այդ ձևով առավել կարելի է ազդել հանդիսականների վերա:

Ես սկսեցի հերքել այդ կարծիքը և օրինակ բերեցի զանազան թատրոնական բեմեր, որտեղից վաղուց արտաքսված է այդ հնացած մեթոդը, որ միայն բրացնում է դերասանի ընդունակությունը, որովհետև դերասանը սովորելով այդ ձևին, այնուհետև շինում է նորան յուր համար մեհենայական ահեստ և չի մշակում յուր ընդունակությունը, երբեմն տալանդն անգամ»<sup>1</sup>:

<sup>1</sup> Չմշկյան, «Իմ հիշատակարանը», էջ 25: Արհեստ—ամեն տեղ պետք է հասկանալ արվեստ: Ընդգծումներն իմն են. Ս. Հ.:

Առաջին հասցեքից թվում է, որ խոսքը բնական արտասանության մասին է: Չ շշկյանը, այդ շատ կարևոր է, բնական խոսքի առիթով ըմբռնում է բնամարվեստի մեթոդը, այդ մեթոդի հետ երկու հակադիր ուղղութիւնների սկզբունքային տարբերութիւնը, դերասանի տաղանդի բնական զարգացման հարցը, վերջապես, մեքենայական և ստեղծագործական արվեստների խնդիրը, պաշտպանելով ռեալիզմը բնմի համար— «հասարակ և բնական» ուղղութիւնը: Այս խոր միտքը— դերասանի տաղանդի զարգացումը՝ որպէս հետեււանք բնական ռեալիզմի և ընդհակառակը, այդ տաղանդի կաշկանդումը՝ որպէս հետեւանք մեքենայական-կլասիցիստական, նաև կեղծ արվեստի, հակայական կարևորութիւն ունեւր թատրոնում ճշմարիտ արվեստագետներ դաստիարակելու տեսակետից: Սակայն «հասարակ և բնական» բանուձեւումը ևս մի իսկական հեղաշրջում էր թատրոնի էսթետիկայի բնագավառում, եթե նկատի ունենանք, որ թագավորում էր ոչ «հասարակը» և ոչ «բնականը»:

Այդ մեծ բանաձեւումը գալիս էր Մ. Ս. Շչեպկինից, նրա նշանավոր ռեֆորմներից մեկն էր, որ արդեն հաղթանակ էր տարել Մոսկվայի Փոքր թատրոնում և տարածում էր գտնւլ լայն շափով, ապա տեսականորեն հիմնավորվել և զարգացվել էր Վ. Գ. Բելինսկու հողավածներում, որոնք հայտնի էին: Չմշկյան-Սունդուկյան-Ամերիկյան միջավայրում և որոնցից մտքեր ու հատվածներ էր քաղում մասնավորապես Մ. Ամերիկյանը՝ 1866 թվականին: Չմշկյանը, տեսանք, որ օրինակ է բերել «ղանազան թատրոնական բեմերը», իսկ 1863 թվականը վերհիշելով, արդեն վկայում էր, որ կարողացել էր Բելինսկուն: Նույն՝ 1863 թվականին, հայերեն առաջին ներկայացումը դիտելուց հետո, նա Արշակ թագավորի դերակատար Շահխաթունյանի մասին ասում է, թե «...ես միայն ափսոսացի, որ այդ երիտասարդը հափշտակվում է յուր խաղով ինքը», որ անտեղի էին նաև դահլիճի «կեցցեները», իսկ թուրքիստանի Գալալ Ղաղոյի դերակատարութիւն մասին՝ Սուքիասյանի Գալալ Ղաղոյի դերակատարութիւն մասին՝ Մատինյանի Կիվորում է, թե դա էր «կենդանի մեկ տիպ», Մատինյանի Կիվորում էր նույնպէս «տիպական անձնավորութիւն էր», որը պատ-

կերում էր «միշտ հոգով, սրտով կպած յուր հայրենիքին, յուր Մուշ երկրին, օրական հացի կարոտ... ծառայող մշեցուն»<sup>1</sup>։

Ինքը՝ Չմշկյանը ևս խաղացել է պատմական ողբերգությունների ներկայացումներում և, ինչպես վկայում է, խաղացել է այդ դերերը երկար ջանք թափելուց հետո, որպեսզի արդյունք լինի, բայց առհասարակ որպես կանոն, պատմա-ողբերգական դերերը կեղծիքի արտահայտութուն էին բեմի վրա. կեղծ տեքստ, կեղծ բեմական կերպար։

Սակայն՝ ներշնչված է գրում Չմշկյանը բոլոր այն դեպքերում, երբ բեմի վրա նա տեսել է բեմական ռեալիստական կերպարներ։ Այսպես, իր օրերին մեծ տպավորութուն է գործել Ս. Մանգինյանի Ռասպլյուներ (Չմշկյանը-Կրեչինսկի) և այդ այն պատճառով, որ հայտնի պիեսի սատիրական գրությունները և ռեալիստ հեղինակի կոմիզմը բեմի վրա գտել էին համարժեք արտահայտութուն, իսկ Մանգինյանը, Փոքր թատրոնի ուսս նշանավոր դերասան Սաղովսկու նման, ստեղծել էր Ռասպլյուների բեմական աննման բնավորությունը<sup>2</sup>։

«Շկոլի վարժապետ» ներկայացման մեջ, բացի Ամերիկյանից, փայլել է նույն Մանգինյանը, որը «...բթամիտ աշակերտի դերում բեմ դուրս գալուն պես այնպիսի մեկ զղբոց և ծիծաղ բարձրացրեց հանդիսականների մեջ, որ մեկ քանի բոլոր շարունակ հուշարարը թողեց յուր հուշարարութունը, իսկ դերասանները իրանց դերերը»<sup>3</sup>։

Ըստ Չմշկյանի, ռեալիզմը բեմի վրա սկիզբ է առնում... ա. ռեալիստական պիեսից, ռեալիստական գրական կերպարից. բ. ռեալիստական, «հասարակ և բնական» արտասանությունից. գ. իրեն՝ բեմական կերպարի գեղարվեստական ու հոգեբանական համոզչական ուժից, այն, որ բեմական կերպարը ևս պետք է լինի տիպ, տիպական անձնավորութուն։ Սակայն այս բոլորը չէ։

<sup>1</sup> Չմշկյան, «Իմ հիշատակարանը», էջ 21։

<sup>2</sup> նույն տեղը, էջ 36։

<sup>3</sup> նույն տեղը, էջ 35։

Ինչպե՞ս էր ըմբռնում Չմշկյանը բնական կերպարի էությունը:

Իբրև ռեժիսյոր ու դերասան, նաև որպես մտածող, Չմշկյանը, բնական կերպար ամելով, հասկացել է նախ և առաջ դրամատուրգի կողմից տրված կերպարի ճիշտ ըմբռնումը, նրա ճիշտ մեկնաբանումը դերասանին և նրա ճիշտ վերապատկերումը բեմի վրա. ըմբռնել «անձնավորության» բնավորությունը» — ասում է նա<sup>1</sup>:

Չմշկյանը երբեմն խզում է կերպարի դադափարը կերպարի բնավորությունից, օրինակ, նրա կարծիքով «Գալա: Ղաղոյի» կերպարները (ոմանք) խմաստ չէին պարունակում իրենց մեջ, բայց նրանք ցայտուն բնավորություններ դարձան բեմի վրա՝ շնորհիվ դերասանների: Այս տեսակետը հերքվում է հենց իրեն՝ Չմշկյանի կողմից, որը լավ է մեկնաբանել պիեսի գործող անձանց բնական բնավորությունները, որոնց հիմքում ընկած էր նույն պիեսը:

Թովմաս և Պայծառ Ֆասուլաճյանները գալիս են Քրիլի: սի: նրանք բերում են իրենց հետ պիեսներ, որոնց թվում «անկապ ու անկանոն» (Չմշկյան) մի դրամա՝ «Կույրի դավալը»: Այդ պիեսում Չմշկյանը պետք է խաղար Ֆալերնոյի դերը: Դերը չի ստացվում. ինչո՞ւ Չմշկյանը հիանալի կերպով բացատրել է պատճառը՝ «...բանիցս ուսումնասիրել եմ, որ մեկ որևիցե բնավորության գադափար կազմեմ գլխիս մեջ այդ դերից և չեմ կարողացել հասնել նպատակիս, որովհետև ոչինչ բնավորություն չկա նորա մեջ: Նա մեկ անհասկանալի անձնավորություն էր, հեղինակին հարկավոր է եղել մեկ մարդասպան և նա վերգրել է մեկ անձնավորություն, կնքել է նորան Ֆալերնո անունով և դուրս է բերել այդ պարոնին առանց որևիցե պատճառի մարդիկ սպանելու և երեխաներ հափշտակելու համար»<sup>2</sup>: Տեսնում ենք, որ Չմշկյանը չի անջատում գրական կերպարը բնական կերպարից, տապալված գրական կերպարից նա սպասել է տապալվող բնական կերպարին:

<sup>1</sup> Չմշկյան, «Իմ հիշատակարանը», էջ 36:  
<sup>2</sup> Նույն տեղը, էջ 42: Ընդգծումներն իմն են. Ս. Հ.:

պար, իսկ կերպարի մեջ որոնել է խմատ, գաղափար, կենսական և հոգեբանական տրամաբանություն, կերպարի վարքագծի հիմնավորում, նրա բեմական մարմնավորման դեպքում՝ որոշելու նրա «խնդիրը» և «գերխնդիրը»:

Ֆասուլաճյանների ռեպերտուարը հակասության մեջ էր Չմշկյան-Ամերիկյան խմբի ռեպերտուարին: Նրանք հակասության մեջ էին նաև իրենց խաղատնով, որ, անշուշտ, ռեպլիստական չէր: Չմշկյանը պատմում է այդ մասին, ծաղրելով թ. Ֆասուլաճյանի մեթոդը. «Ես և ինձ հետ ամենքը հետաքրքրության մասում էին առաջին կրկնության, որ տեսնենք Ֆասուլաճյանի խաղի եղանակը կամ մեթոդը, բայց դուրս եկավ, որ սաստիկ փտած և հին շկոլայի աշակերտ է եղել: Նա ամեն մեկ խոսքը արտասանում էր մի առանձին շեշտադրությամբ և խոսում էր երգելով, իսկ երբ հասնում էր էֆեկտի տեղին, հանկարծ այնպես էր գոռում և իսկույն կտրում խոսքը, որ մենք չէինք կարողանում լսել առանց ծիծաղի»<sup>1</sup>:

Այստեղ շատ կարևոր է մեզ համար այն, որ Չմշկյանն ունեցել է մեթոդ և շկոլա հասկացողությունը, արմատական տարբերություն է դրել հին մեթոդի և հին շկոլայի ու նոր մեթոդի ու նոր շկոլայի միջև: Սա է էականը և սա է դարձնում Չմշկյանին իր տեսական ծրագիրն ունեցող մտածող:

Բեմական կերպարն, ըստ Չմշկյանի, պետք է ուժեղ ներգործություն ունենա հանդիսականի վրա: Բայց, ինչպես: Եթե դերասանը դերում մարտնչում է կերպարի դեմ, դահլիճն անմիջապես զգում է այդ աններդաշնակությունը, կեղծիքը և մերժում է դերասանի խաղը, ծիծաղելով այդ խաղի վրա: Եվ ընդհակառակը, երբ դերասանը կերպարի մաշկի մեջ է և անկեղծ է բեմի վրա, դահլիճն ընդունում է նրան. օրինակը նորից Մանդինյանն է Դոն-Գոմեցի դերում՝ Հյուգոյի «էռնանի» դրամայում. «...նորա ամեն մեկ արտասանած բառից թույն և արյուն էր թափում» և «Մանդինյանը գերազանցեց յուրյան այդ դերում: Եվ ամբողջ ներկայացումը հաջողակ գնաց, բա-

<sup>1</sup> Չմշկյան, «Իմ հիշատակարանը», էջ 40: Ընդգծումներն իմն են. Ս. Հ.:

ցի պ. Ամերիկյանի խաղից, որի կատարելը ավելի դժվարացնում էին ահադին և երկայն մենախոսությունները, նամանավանդ երբորդ, թե շորբորդ գործողության մեջ Կառլոս 4-րդի գերեզմանի առաջ»<sup>1</sup>:

Այստեղից Չմշկյանի թատերագիտության համար կարևորագույն մի նոր սկզբունք է բխում-ուելիսուական թատրոնը բնորոշող հիմնական սկզբունքը—ապրել դերը, ապրել զգացմունքը, ապրել կերպարի գաղափարը, երբ նա, այդ կերպարը առավել ևս տիպական անձնավորություն պետք է լինի:

Օրինակը թող լինի Չմշկյանի Պեպոն, նաև Զամբախովի, Զիմզիմովի, Սարգսի («էլի մեկ զոհ») հռչակավոր դերակատար Ամերիկյանի Ֆրանց Մոորը (Շիլլերի «Ավաղակներ» դրամայում):

Որպես առաջին դերասան, առաջին դերերի դերակատար Գևորգ Չմշկյանը միշտ էլ հասարակության ուշադրության կենտրոնումն էր, մամուլի, հանդիսականի դատողությունների և քննությունների առարկան: Իհարկե, Չմշկյան-Ամերիկյան դերասանական խումբը շխուսափեց «ամալուս» հասկացողությունից, այլևս ընդգծեց այդ հասկացողությունը՝ մանավանդ պրակտիկայում: Այդ հանգամանքը մի որոշ շափով միօրինականություն էր մտցնում դերասանի ստեղծագործական կյանքում, միօրինակ էր լինում նաև դերասանից ստացված տպավորությունը, թեև նա խաղում էր տարբեր դերեր, կերտում տարբեր բնական բնավորություններ: Միօրինակությունը վերաբերում էր ժեստին, հաճախ դիմախաղին և այլն:

Չմշկյանը փորձել է խուսափել միօրինակությունից, նետել է իրեն տարբեր բնական կերպարներով դրսևորվող տարբեր հոգեկան աշխարհներ և, այնուհանդերձ, նրա փառքը, նրա անունն ամենից առաջ կապված է եղել Սունդուկյանի կերտած բնավորությունների հետ մանավանդ: Հետաքրքրաբերականն այն է, որ նա, որպես դերասան-արվեստագետ,

1 Չմշկյան, «Իմ հիշատակարանը», էջ 41:

անհրաժեշտ է համարել գրական կերպարին՝ բեմի վրա տալ մի նոր կյանք, բեմական կյանք, կենդանացնել կերպարը իրրև թատրոնին միայն հատուկ բնավորություն: Գրա համար նա և իր ընկերները սկզբունք էին մշակել, գրական կերպարը մեկնակետ ընդունելով, այն վերստին ուսումնասիրել՝ այս անգամ արդեն կենդանի կյանքում, բեմ մտնել կենդանի կյանքից, դահլիճին հաղորդել իրականության շունչը, ապրել և վերապրել կյանքը՝ հուզված և ալեկոծված նրանով: Նա ինքը, ունենալով իրեն կողմից դիտակցված այդ միտքը, վկայում է, որ Պեպոյի բեմական կերպարի համար օրինակը վերցրել է կենդանի կյանքից: «Թե ինչպես ես խելագարվեցի» ճանապարհորդական նոթերում նա հայտնում էր ընթերցողին, թե «բեռնիս մի բարձրահասակ հաղթանդամ արհեստավորի մեկն էր, ա՛յն տիպարներից, որոնց բնավորությունը և ամեն մի քայլը ուսումնասիրած լինելով, ապագայում ես ստեղծեցի Պեպոյի դերը բեմի վերա»<sup>1</sup>: Բեմական շտամպի դեմ կռվելու ամենալավ միջոցն էր դա — կյանքի ուսումնասիրությունը, կենդանի մարդու հետազոտումը կյանքում, որի խորապես ըմբռնված ուսմունքը կազմեց Մոսկվայի Գեղարվեստական թատրոնի և Ստանիսլավսկու սիստեմի անկյունաքարերից մեկը: Այդ սիստեմն արդեն իսկ չուրացնում և ընդհանրացնում էր տեսության մեջ ուս և համաշխարհային թատրոնի լավագույն փորձը՝ բեմական ռեալիզմ հաստատելու համար:

Սունդուկյանը «Պեպոյի» առաջարանում, որը նվիրված է Չմշկյանին, բացել է ընթերցողին գաղափարական մթնոլորտի այն ամբողջ պատկերը, որի կենտրոնը Պեպոյի ապագա դերակատարն է: «Երբ ես մոտավորապես պատմեցի քեզ Պեպոյի բովանդակության գլխավոր միտքը, այն օրից սկսած՝ դու էլ ձեռք չվեր առար ինձանից. սովորի պես հետևում էիր ինձ, աշխատելով շուտով և շուտով հանել իմ գլխից քո սի-

<sup>1</sup> «Մուրճ», 1890 թ., № 3, էջ 369:

րեկան Պեպոյին և գրչի տալ իմ խոսքերը»<sup>1</sup>: Շարունակության մեջ Սունդուկյանը գրում է. — «Պեպոյի դերը դու ինքդ կատարեցիր և կատարում ես ցարգ՝ բեմի վրա: Դու ամիր նրան շունչ և կենդանութիւն, ըս խաղը գերադանցեց գրվածքից...»<sup>2</sup>: Ժողովրդասիրութեան, ժողովրդայնութեան, բողոքի և ցասման, նաև ամենախուրճ մարդկայնութեան և խոհականութեան գրուածքումն էր Չմշկյանի Պեպոն, որը տասնյակ տարիներ մնացել է բեմի վրա որպէս գրական կերպարի բեմական կենդանի մարմնացում, որպէս ասլոված, խորապէս զգացված մի բնավորութիւն, որի յուրաքանչյուր մի գիծը, մի հատկութիւնը դարձչալ գիտակցական արվեստի արգասիք էր: Ըստ որում, Չմշկյան-Պեպոյին բնորոշող հիմնական հատկութիւնը եղել է դրամատիզմը, հերոսի ապրած դրամայի պատկերումը բեմի վրա:

Այս գերակատարումը Չմշկյանի նախ տեսական հայացքների, բեմական կերպարի մասին նրա ունեցած բմբռնումների իրականացումն էր, կերպարի կենսական և հոգեբանական տրամաբանութեան, բեմի վրա անկեղծութեան, հերոսի ասլուումների վերամարմնավորման վերին աստիճանի ցայտուն օրինակը:

Գևորգ Չմշկյանը հաճախ է տալիս Մ. Ամերիկյանի Ֆրանցի անունը, միշտ շատ բարձր է գնահատել արտիստի կերտած այդ կերպարը: Մեկնակետը նորից Բելլինսկին էր: Ամերիկյանը Ֆրանցի դերը խաղացել էր Թբիլիսիում, խաղացել էր և Կ. Պոլսում: Այդ դերում նրան դիտել էր Պ. Աղամյանը: Թբիլիսի գալու՛, Պ. Աղամյանը Ամերիկյանի մահից համարյա մեկ տարի հետո նույն դերը խաղում է այստեղ և քննադատութիւնը հիշեցնում է, որ արտաքին նմանութիւն կար Ամերիկյանից Աղամյանի արտաքինի վրա: Այդ բանը վկայեց «Մեղու Հայաստանին», իսկ «Մշակը», նկարագրելով Աղամյանի Ֆրանցը, գտնում էր, որ նա՝ իր դերում պատկե-

<sup>1</sup> Գաբրիել Սունդուկյան, «Երկերի լիակատար ժողովածու», հ. 2-րդ, էջ 9: Տեքստը պատրաստեց և ծանոթագրեց Ռուբեն Չարյան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչութիւն, Երևան, 1951 թ.:

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 11:

րել է բոլոր շարությունները մարմնավորած մարդու տիպարը<sup>1</sup>: Ամերիկյանն ազդել էր Ադամյանի վրա<sup>2</sup>: «Մեղվի» նկարագրութունը լայն է, այն հիմք է տալիս վերականգնելու Ամերիկյանի դերը էական հանգուցյեներով: Բարձր գաղափարային և հոգեբանական տեսակետից բարդ դերակատարում է եղել դա, թրիլիսահայ թատրոնի խոշոր նվաճումներից մեկը, զգացված, գիտակցված՝ արտիստի կողմից: «Ֆրանց Մոորի դերը կատարում էր հանգուցյալ Ամերիկյանցը: Բեմ դուրս գալու պես հանդիսականը խսկույն կարգում էր նրա երեսի արտահայտության, թե շարժվածքներում— այն վսեմ հրեշավոր մարդու գաղափարը, որը ստեղծել է անմահ հեղինակը և ավելի զվելի ձևացնելու համար այդ այլանդակ հրեշին, հանգուցյալը, օգուտ քաղելով յուր բնական պակասությունից (նա փոքր ինչ կաղում էր) առավել սկսում էր կաղալ, ոչ թե նորա համար, որ որևիցե այդ դերը կատարող դերասաններիցը պիտի կաղեր անպատճառ բեմի վերա, այլ յուր դերի զարհուրելի «եսը» հարմարացնելու համար յուր բնական պակասության հետ: Ո՞վ հանդիսականներից կարող է մոռանալ այն տեսարանը, երբ թեթև բռնցելով յուր ձեռքերի անզոր ութսունամյա հորը՝ «մեռի՛ր, անզոր կմախք», օձի պես շչալով ասում էր նա և հետո զզուշ հեռանում էր գետին փոված հոր մարմնից դերասանը, իբր թե զարհուրում էր յուր արածից, և մոտենալով հանդարտ, սատանայական ժպիտը երեսին շրջելով ընկած հոր մարմնո շուրջ, գիտելով և զննելով թե արդեն մեռավ թե ոչ, այն՝ մեկ «մսի կտորը», որը պիտի արգելք լինի նորա դժոխային գաղափարները իրագործելու համար, նա հանկարծ կարճես մեծանում էր, զեղեցկանում էր սատանայական զեղեցկությունով և հեռանում էր բեմից հաղթանակով, թողնելով հանդիսականների ջղերի մեջ մեկ սարսափելի ցնցումն, որից պա-

<sup>1</sup> Տե՛ս «Մեղու Հայաստանի», 1880 թ., № 85, «Մշակ», 1880 թ., № 197:

<sup>2</sup> Հմմտ.՝ Արամ Բարսեղյան, «Երևիցի հայ գրականութան մեջ և թատրոնում», էջ 246—251: ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1959 թ.:

դում էր մարդու արյունը երակների մեջ»<sup>1</sup>: Չարագործի հաղթանակի գեղարվեստորեն ճշմարտացի պատկերումն է եղել դերի այդ «կտորը», որին, սակայն, հետևել է նրա անկման պատկերման հատվածը՝ նույնքան տպավորիչ: «Հետո՝ Ֆրանցի վերջին տեսարանը, այն անբուն վախկոտ շարագործի դրուժյունը, երբ նա դուրս է վազում յուր ննջարանից, որտեղից հետևում են նորան շար ոգիները, ուրվականները, խեղճ տանջված ծերունու հոր գեմքը, յուր ազնիվ Կառլոս եղբոր պատկերը. այդ հոգեպես կիսախելագարված շարագործի դրուժյունն այնքան հասկանալի էին հանդիսականների համար, որ հանդիսականները կարծում էր, թե արդարև բեմը լիքն է զանազան տեսակ զարհուրելի երևույթներով»: Ո՛չ, Ամերիկյանը առ ոչինչ էր դարձնում շարագործի հաղթանակը, նույնքան ուժեղ և համոզիչ պատկերելով նրա շնչին ներքինը.— «Օ՛, ինչ սարսափելի տեսարան էր և ի՛նչքան խղճալու էր այն ժամանակ հրեշ-մարդը»: Սակայն արտիստը գիտեր՝ որ շարը ոչնչացված չէ, որ այն դեռ կա: Դերի դիալեկտիկական բարդուժյունն այդ էր.— սկզբում՝ շարուժյան հաղթանակ, ապա շարուժյան նահանջ և անկում, նորից մի նոր գրոհ և, ի վերջո, ոչնչացում... «Ֆրանցն ուզում է աղոթել... մեկ րոպե և կհաշտվի երկնքի հետ... Ո՛չ, ո՛չ, իմ և աստծու մեջ հաշտուժյունն անկարելի է, ես չպիտի հաղթելիմ»,— խուլ ձայնով ասում է Ֆրանցը մոտավորապես այս բառերը և արագուժյամբ փաթթելով գլխարկից պոկած թոկը յուր վզին կախ էր ընկնում բազկաթոռից և մեռնում էր...»:

Զմշկյանի Պեպոն, Ամերիկյանի Զամբախովն ու Ֆրանցը — դերասանի ստեղծագործություններ էին, օբյեկտիվ ստեղծագործություններ և ոչ երբեք դերասանի սուբյեկտիվ կամայականության արդյունք: Դերասանը, ըստ Բելլինսկու, կարող է ավելացնել դրամատուրգին, բայց միշտ ներդաշնակ է նրա հետ: Սակայն, նույն Բելլինսկու ուսմունքի համաձայն, դերասանը վերակենդանացնում է դրամատուրգի կերպարը, մեկնակետ ունենալով կենդանի մարդուն կենդանի իրակա-

<sup>1</sup> «Մեղու Հայաստանի», 1880 թ., № 85: Ընդգծումներն իմն են. Ս. Հ.,

նության մեջ: Դրա համար դերասանը, ասում էր Բելինսկին, ուսումնասիրում է նաև կյանքն ու իրականությունը:

Հայ ռեալիստական դերասանական շկոլան արդեն իսկ գալիս էր կյանքից, կյանքի ճանաչողությունը նրա համար պարտադիր էր:

Կենդանի կյանքը պատկերելու սեփական վառ ձգտումը Չմշկյանին, որպես դերասանի և որպես ռեժիսորի, բերել էին այն եզրակացություն, որ դերը կերտվում է բեմի վրա ապրումներով, որոնք պետք է ճշմարտացի լինեն, դերասանը պետք է թափանցի կերպարի ներքին կյանքը, «կերպարի ոգու կյանքը»,— կասեր Ստանիսլավսկին:

Չմշկյանը պատմում է Մ. Տեր-Գրիգորյանի «Նինոյի նշնվիլը» պիեսում Միրաղյանի կատարած մի փոքրիկ դերի՝ հայ ծառայի դերի մասին: Նա խաղացել է այդ դերը «մեծ հմտությամբ»,— գրում է Չմշկյանը: Ինչու՞ հմտությամբ, ինչպե՞ս հասկանալ հմտությունը, երբ դերակատարն ընդամենը գիմնադրայի աշակերտ էր և ինքը միայն դերչուտանա: Գաղտնիքն այն էր, որ դերը զգացել էր Միրաղյանը, վերարտադրել էր այն «կենդանի և ղզայուն շարժվածքներիով», ղզացել էր ծառայի հպարտ հոգին, նրա երգը կատարել էր ներշնչված և «երկար ժամանակ հանդիսականները մնացին ապշած: Վարագույրն ընկավ, Վահունին (Միրաղյանը. Ս. Հ.) դարձեցրեց հայ թատրոնական հասարակության հիշողության մեջ հանգուցյալ Մատինյանի տաղանդավոր խաղի հիշատակը»<sup>1</sup>:

Չմշկյանը վերհիշում է մի այլ դերակատարում— երիտասարդ Տեր-Ասատրյանի Վանոն, «էլի մեկ զոհ» ներկայացման մեջ: «Հանգուցյալ Տեր-Ասատրյանի մահից հետո «էլի մեկ զոհի» այդ դերը շատերն են խաղացել, բայց ոչ մեկը երբեք այդպիսի կատարելագործությամբ չի կենդանացրել հեղինակի գրվածքը բեմի վերա, ինչպես Տեր-Ասատրյանը»<sup>2</sup>: «Կարդինալ Ռիշելիս» ներկայացման մեջ Տեր-Ասատրյանը խաղացել է (Մոպրա) այնպես, որ նրա մի տեսա-

<sup>1</sup> Չմշկյան, «Իմ հիշատակարանը», էջ 80:

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 87:

րանը վերհիշելիս, Չմշկյանը դերասանի երեսին դերում կարգացել է «սաստիկ շվարմունք, ամոթ և խղճի տանջանք: Նա արտիստ էր»<sup>1</sup>:

Սաթինիկ-կեկելի մասին Չմշկյանը տալիս էր այս տեղեկությունը. «Թատրոնի դահլիճը ամբողջապես լարված դրությամբ մեջ դերասանուհուն լսում էր հետաքրքրությամբ: Հասարակությունը նրա մոնոլոգի վերջը մնաց մի քանի ժամանակ անշարժ, հետո հանկարծ սթափվեց և սկսեց սաստիկ ծափահարել»<sup>2</sup>:

Չմշկյանը հստակ պատկերացում ուներ այն մասին, որ բեմական կերպարի թողած ազդեցությունը նրա հոգեբանական ճշմարտացիության մեջ է:

«Չկա ազդություն աշխարհիս երեսին, որ շունենա յուր մեջ հասարակության համար գործող անձինք, մեծ ազդությունների մեջ գործողները համեմատաբար և մեծ են փոքր ազդությունների հասարակական գործող անձինքներից, ուրեմն և ամեն մի ազդություն՝ փոքր թե մեծ՝ պարտավոր է նվիրել պատմության յուր միջի գործունյա անձանց հիշատակը: Ահա ինչ սկզբունքից դրդած, ես վերցրի գրիչս, որ հիշելով անցյալիս տպավորությունները, լույս հանեմ իմ մեկ քանի բարեկամներիս կենսագրությունները, որոնք գործել են հայ ժողովրդի համար, նվիրելով յուրյանց էությունը հայ թատրոնի գաղափարին»<sup>3</sup>:

Ստեփաննոս Մատինյանը— հայ բեմի Մարտինովն էր՝ ըստ էության, միայն ազգային ռեպերտուարի մեջ, ինքնաձին տաղանդ, ապրումների թատրոնի երևելի դերասան, որի օրինակի վրա Չմշկյանը բացահայտել է ռեալիստական խաղաճի շահազանց հետաքրքրական կողմեր: «Գեղարվեստագետ դերասանը» կիվկիվի դերում անմահացրել է ոչ միայն իրեն, նաև «Դալալ-Ղազո» պիեսը: Նա կոմիկ էր, բայց վերին աստիճանի լուրջ բովանդակության և միշտ դրամատիզմով հագեցած դերասան: Չմշկյանն այս դեպքում խոսում է վերա-

<sup>1</sup> Չմշկյան, «Իմ հիշատակարանը», էջ 92:

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 97:

<sup>3</sup> Նույն տեղը, էջ 144:

մարմնավորման մասին: Ինչի՞ արդյունք էր նրա Կիվկիվը.— «Մատինյանը ուսումնասիրել էր այդ խղճալի և համակրելի հայ մարդու տիպը, ուսումնասիրել էր այնպես, ինչպես քնտազոտում էր յուր առօրյական բնությունը Բննող ուսումնականը. դերասանի հագուստի, շարժվածքի, գրիմի տակից ոչ ոք չէր կարող ճանաչել դերասանին, դերասանը կատարյալ մշեցի էր, Մատինյանը և Կիվկիվը անբաժան էին մեկը մյուսից, մեկ հոգի և մեկ մարմին էին»<sup>1</sup>:

Կյանքի խոր ճանաչողության, կերպարի բուն էության բացահայտման, բեմական կերպարի մեջ ամբողջապես վերամարմնավորվելու օրինակ էր նաև Մատինյանի Հաջի Սուլեյմանը (Գուրգենրեկյանի համանուն պիեսում և «Ժլատ» (Մ. Տեր-Գրիգորյանի) պիեսում, ծառայի դերում: «Մանր» մարդկանց է պատկերել Մատինյանը, դեմոկրատական լայն խավերի «ամենաանշան» մարդկանց, նրանց, որոնք գրականության մեջ գալիս էին Գոգոլի ստեղծագործությունից, իսկ բեմում՝ Մարտինովի ռեպերտուարից: Հիշենք նաև Շչեպկինի հոշակված նավաստուն: Եվ Չմշկյանը Մատինյանի ռեպերտուարի և նրա վերամարմնավորման ռեպիստական արվեստի զարմանալի ուժի մեջ տեսել է ամենից առաջ կյանքի վրա դերասանի ունեցած խոր և լայն հայացքը: «Մատինյանի նման կյանքից բխած ձրբերը չեն բավականանում յուրյանց շրջակա կյանքի մասերը միայն ուսումնասիրելուց. նոքա աշխատում են ըմբռնել ամբողջ այն՝ կյանքը, որով շրջապատված են,— գրում է Չմշկյանը: «Կիվկիվ, Հաջի Սուլեյման, այդ հերոսները չեն միայն նորան շրջապատող կյանքը, որի շրջանակը մեծ է՝ բաղկացած անթիվ խողովակներից՝ Կիվկիվից, Հաջի Սուլեյմանից, այլևայլ անձնավորություններից»<sup>2</sup>: Կյանքից ստացած բազմաթիվ տպավորություններից էր գալիս Մատինյանի արվեստը, կյանքի ընդերքից էր հանում նա իր բեմական հերոսների բնավորությունները, նրանց առօրյա, տանջալից պատմության ուղին է նա կարդացել բեմից: Քայց ոչ միայն ողբացել, նաև բողբոլել: Փուլիմյանի «Հազար

<sup>1</sup> Չմշկյան, «Իմ հիշատակարանը», էջ 146—147:

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 148:

թումնանոց կարա» վողկիլի մեջ նորից ծառա, այս անգամ դեռահաս պատանու կերպարը կերտելիս, Մատինյանը, ըստ Չմշկյանի, սոցիալական խոշոր պրոբլեմ էր մարմնավորում, — Քրիլիսի «վաշխառու հայ ընտանիքներում՝ գյուղերից բերած, սովածութունից ծախված՝ փոքրիկ հայ գյուղացի երեխաների, որոնց վաշխառու ընտանիքը բանեցնում և պահում էր անասունի նման», — այդ երեխաների հավաքական կերպարը ստեղծելու պրոբլեմը: Չմշկյանը խորաթափանց կերպով, խելացիորեն բացում է մեր առաջ Մատինյանի ռեալիստական արվեստի սկզբունքները, երբ գրում է. — «Մատինյանը մտնում է յուր գեղարվեստական ձիրքի միջոցով այդ երեխա ծառաների շրջանը. նա գտնում է, որ նորանք՝ երեխաները, դեռահասներ են և այդ պատճառով տգետ են երևում յուրյանց պահող տգետ վաշխառու ընտանիքներում: Պետք է բողոքել, վճռում է յուր մեջ դերասանը և հնարում է, առնելով յուրյան նյութ՝ Սարուխանի բակլա ծախողի հագուստը, կոպիտ շարժվածքները և խրոխտ ձայնը, յուր դիտած երեխա ծառաների միամտությունը և ստեղծում է այն Սարուխան ծառային, որի դերը բեմի վերա այդպես շնորհքով ստեղծելու համար լուսավոր հասկացողությամբ զարգացած հասարակությունը կպսակեր զափնիներով դերասանին, իսկ... թողնենք տխուր եզրակացությունը»<sup>1</sup>:

«Ժլատի» մեջ Մատինյանի հերոսը սոցիալական նույն ուղբերգության մարմնացումն էր, որոնց «բնատիպերը գոյանում են Ղազախից, Ղարաբաղից, Գյանջուց, Երևանից, Աքուլիսից և այլ հայաբնակ տեղերից Քիֆլիզ եկած միլիոնավորներից» (Քշվառներից), — նկատում է Չմշկյանը: Բայց այդ ծառան չէր բողոքում, այլ ընկնում էր, անհետանում տերերի ստեղծած մթնոլորտում:

Եվ, եթե ավելացնենք բերած բոլոր օրինակներին նաև Չմշկյանի խոհերն ու դիտողությունները, «ներքին» խավերից եկած, հայ բեմում հռչակված արվեստագետ դերասանուհի Բեթևան Արամյանի մասին, ապա համարյա ամբողջական

<sup>1</sup> Չմշկյան, «Իմ հիշատակարանը», էջ 149: Ընդգծումներն իմն են. Ս. Հ.

կլինի Չմշկյանի կողմից 1860—1870-ական թվականներին ծնված հայ ահալիստական թատրոնից, նրա փորձից, նրա ընդհանուր ռեպերտուարից ու ստեղծագործական աշխատանքից հանված տեսությունը, թատրոնի նրա էսթետիկան, նրա տեսական կոնցեպցիան՝ նվիրված դերասանի կատարողական արվեստի պրոբլեմներին:

Չմշկյանը վերլուծել է, վերհիշել Քեթևան Արամյանի Մարգրիտը («Խաթարալա»), Շուշան («Պեպո»), էմիլիա («Օթելլո»), և այլ կերպարներ:

Բանաստեղծ դերասան էր Մատինյանը, կարելի է ասել բանաստեղծունի դերասանուհի է եղել Արամյանը: Սրա արվեստի ամենարժեքը զծերից մեկը Չմշկյանը վերստին համարել է կյանքի լիակատար դերստեղծը բեմի վրա—ոչ ոք չի տվել բեմին «այն բնականությունը, այն կյանքը, այն իրական կերպարանքը», որով հանդես է եկել Արամյանը Սունդուկյանի ռեպերտուարում՝ կանացի դերերում: «Մարգրիտը անիծելով չուր ծնված ժամը, չուր սարսափելի տգեղութունը, լաց է լինում... և դերասանուհու աչքերից կաթիլ-կաթիլ թափվում են շատ տարիներով գուցե պահված արտասուները»<sup>1</sup>: Նրա Մարգրիտը՝ «իր սրտում մի ծածկված հրաքուխ է եղել, որ հանկարծ ժայթքում է բեմի վրա և դուրս է թողնում նրա կուրծքից հանդիսականների առաջ»: Կամ՝ Շուշանը: «Այո՛, Շուշան-Արամյանը հափշտակում էր, որովհետև նա բեմ դուրս գալու պես, արդեն սկսում է ապրել այն կյանքով, ինչ կյանք որ պիտի ներկայացնեք»<sup>2</sup>:

Չմշկյանը ներկայացրեց մեզ իր և իր սերնդի ստեղծագործական դիմանկարը: Հիրավի, ապշեցուցիչ է նրա դիտողական տաղանդը, մտքերի նրա տեսողաշարը: Նորից համոզվում ես, որ նա իր տեսության հիմքում դրել է իրականության քննադատությունը, իր դեմոկրատական աշխարհայացքը, երբ ամելի և ամելի լայն ընդգրկումով տալիս է բուրժուական հասարակության պատկերը, իր ամբողջ համակ-

<sup>1</sup> Չմշկյան, «Իմ հիշատակարանը», էջ 154—155:

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 155: Ընդգծումն իմն է, Ս. Հ.:

րանքը արտահայտելով դեմոկրատական խավերի, ժողովրդի նկատմամբ: Քատրոնը և թատրոնի իր տեսությունը Չմըշկյանը հասկացել է իբրև պատասխան և հարված բուրժուազիայի ստեղծած իրականությանը, իբրև բողոք, որ հայտնում է ռեալիստական արվեստով ու նրա պաշտպանություն, նրա տեսություն՝ ընդդեմ տիրող իրականության: Պոեզիով հայ թատրոնը կլասիցիզմից ու ամենայն կեղծիքից, Չմըշկյանը, ռեալիզմի ծննդյան այդ դժվար դարում, հայ թատրոնի գաղափարական մթնոլորտը մաքրում էր վերից-վար և այն հագեցնում մի նոր քովանդակություն:

Չմըշկյանը պահանջել, և իր սերնդի արվեստի մեջ տեսել է բեմի վրա կյանքի ճշմարտությունը, բնականություն, հոգեբանական համողականություն, բարձր գաղափարայնություն: Նա որոնել է ոչ թե դերասանի ես-ը բեմի վրա, այլ օբյեկտիվ ճշմարտության արտացոլման եղանակը, որը ամեն մի արվեստագետի մոտ միշտ չլուրահատուկ է: Նա եկել է կյանքից, կյանքի ուսումնասիրությունից և հանգել է այն եզրակացության, որ դերասանը վերամարմնավորվում է կերպարի մեջ, պետք է վերամարմնավորվի բեմական բնավորության մեջ՝ դերին հատուկ ապրումների անկեղծ զրսևորման ճանապարհով: Սակայն նա լավ է ըմբռնել ռեալիստական թատրոնի և այն պահանջը, որ ներկայացումը միշտ էլ անսամբլի, բոլոր մասնակիցների համատեղ ստեղծագործությունն է և հաջողել է թատրոնն այն ժամանակ, երբ ունեցել է այդ կուռ անսամբլը բեմի վրա: Անսամբլի, ներկայացման ամբողջականության նրա հայացքը— նրա թատերական էսթետիկայի անկյունաքարերից մեկն է եղել: Չմըշկյանի տեսության մեջ, նրա ստեղծագործական պրակտիկայում հիմնավոր տեղ է ունեցել բեմական բնավորություն կերտելու նրա պահանջը և նա, երբ խոսում է և գնահատում դերասանին, ամեն դեպքում ելակետ ունի այն շափանիշը, թե ո՞րքանով տիպական անձնավորության պատկերն է կերտել դերասանը, ըմբռնելով այդ հասկացողության տակ կյանքի, սոցիալական երևույթների ընդհանրացման աստիճանը և այն գաղափարակետը, դեպի որը ձգտում է դերասանը:

## ԹԱՏՐՈՆԻ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍԸ

Թատրոնի և հայ թատրոնի գաղափարը, նրա գոյությունը, նրա ճակատագիրը Գևորգ Չմշկյանի կյանքի, պայքարի, հրապարակախոսության բուն առարկան էր: Թատրոնի համար մղվող դաժան մարտերում նա ոչինչ չխնայեց, մինչև վերջին շունչը ապրեց թատրոնով, տվեց նրան իր կյանքը, տաղանդը, ամեն ինչ: Չմշկյանը ողջ էությամբ թատրոնի մեջ է, թատրոնը նրա մեջ:

Թատերական արվեստի, թատրոնի գոյության պրոբլեմն էլ ծնեց Չմշկյանի հրապարակախոսությունը, որը 1860-ական թվականներից մինչև նրա կյանքի վերջին տարիները լայն դրսևորում գտավ առանձնապես պարբերական մամուլի էջերում: Անշուշտ, շկա անշքպես Չմշկյանի տեսական հայացքների, նրա քննադատական մտքի և հրապարակախոսության միջև: Տեսաբան Չմշկյանը նույն ժամանակ քննադատ է, քննադատ-հրապարակախոս: Նրա մտքի համար բնորոշ է այս երեք տարրերի, երեք բնագավառների միասնությունը, որի հիմքում ընկած են նրա ձգտումները—որքան կարելի է ավելի խոր ըմբռնել թատերական արվեստը, ավելի լավ ծառայել նրան, ավելի կրթող կոիվ մղել նրա գոյության համար: Սակայն եղել է մի կնճռոտ հարց, միշտ անլուծելի մնացած մի առեղծված, որը Չմշկյանին երբեք հանգիստ չի տվել և, որից ծնվել է հատկապես նրա թատերական հրապարակախոսությունը: Այդ հարցը հայ թատրոնի, հիրավի,

գոյության հարցն էր, թե ի՞նչը կպահպանի նրան, ինչպե՞ս պահպանել նրան: Սուր խնդիր էր դա, պետական անկախությունից զրկված ժողովրդի կյանքում մանավանդ անլուծելի մի պրոբլեմ, երբ իրականության մեջ թագավորող ուժը— փողն էր, փողատերը, կապիտալը, հայ բուրժուազիան:

Կովկասում հայ նոր թատրոնը ստեղծողներից մեկը, նրա կազմակերպիչ ղեմքը— Չմշկյանը, իր ընկերությունը տաս տարի պահպանելուց հետո, 1874 թվականին գրում էր. «Ափսոս, և հազար անգամ ափսոս, այսքան տարվա նահատակություններով, անգամ մահով, առաջ տարված հայ թատրոնական գործին, որը հասել է համարյա կատարելագործության և ստացել է քաղաքական արտոնություն, և որ մեր ժլատ, անտարբեր, շահասեր և միևնույն ժամանակ անգործնական հարուստների շնորհիվ, պիտի դեռ էլի շատ տարի մնա առանց հաստատ ձևակերպություն ստանալու և գուցե բոլորովին էլ կղաղարեցնե յուր գործունեությունը»:<sup>1</sup>

Գեմոնկրատիան համակրում էր թատրոնի գաղափարին և գործին, բուրժուազիան երես էր թեքում նրանից: Այս միտքը և եզրակացությունը Չմշկյան-հրապարակախոսի հիմնական ելակետներից մեկն էր:

Այս պարագայում, այսպիսի մթնոլորտում, Չմշկյանի համար պարզ էր մի իրողություն.— «Ուրեմն, զոհաբերություն միայն պետք է հայ թատրոնը տակավին շատ տարիներ առաջ ընթանա և ապա գուցե հնար լինի գործ դնել պահանջի և առաջարկության տնտեսական օրենքը հայ թատրոնի և հայ դերասանների վերաբերմամբ»:<sup>2</sup> Սակայն այդ օրենքը ևս Չմշկյանին և հայ թատրոնին օգնության չէր հասնում: Տարերայնորեն իրենց գոյությունը քարշ տվող դերասանական խմբերը, առանց տնտեսական հիմքի և օժանդակության, մարում էին, ստեղծվում և ընկնում, նորից ստեղծվում և նորից ոչնչանում: Ու, երբ թատերական երկնակամարի վրա հուլիսի մի նոր շող էր երևում, Չմշկյանը վերստին ոգևորվում

<sup>1</sup> «Մշակ», 1874 թ., № 43:

<sup>2</sup> «Արձագանք», 1887 թ., № 21:

էր, նրա մեջ արթնանում էր թատրոնի • գոյության համար մարտնչած հին ղինւլորը, նորից երևան էր գալիս «հին կոնցեպցիան», — անձնագոհության, անձնագոհ գործունեության հավատը. «Հայ բեմը գրեթէ քառասուն տարի յուր ողորմելի գոյությունը քարշ տալով և այդ ժամանակվա ընթացքում ծանր տառապանքներ կրելով և անթիվ զոհեր տալով, զոհեր, որոնց անունները նույնիսկ անհայտության է մատնվել, շնայած որ դրանց համագումար աշխատանքը մեր բեմի փառքն է և պատմությունը, այսօր, ասում ենք, վերստին ոտքի է կանգնում ոչ թե մեկենասների և ընդհանուր հասարակության նյութական պաշտպանությամբ, այլ շնորհիվ յուր սեփական կանխիկ ուժերի, ուժեր, որոնք թեև փայլուն և տաղանդավոր արվեստագետների փառք չեն վայելում, սակայն հանդիսանում են թատերական գործին անձնատուր եղած և նրա վեհությամբ ոգևորված ժիր մշակներ և իբրև քաջ ղինւլորներ՝ պատրաստ թատրոնի դրոշակը բարձր պահելու»։<sup>1</sup>

Ուրախանում էր Չմշկյանը, երբ, օրինակ, Բաքվում հայ թատերական գործը որևէ շափով աշխուժացել էր և անմիջապես կոչ էր անում հետևել բաքվեցիներին և պահել հայ թատրոնի գաղափարը։<sup>2</sup> 1897 թվականից տարիներ առաջ էլ Չմշկյանը նկատել էր տալիս, որ Բաքվի հասարակությունը նրա վրա լավ տպավորութուն է գործել, այնտեղ «Պեպոն» ներկայացնելիս նա զգացել է հանդիսականի վերաբերմունքը և Գերբենտից եկող Սունդուկյանի հետ Բաքվում էլ արձանագրում էր ջերմ մի մթնոլորտ դեպի թատրոնը։<sup>3</sup>

Բայց հույսի այդ առկայծումները միշտ էլ վայրկենական էին, մարմրող, իսկ ընդհանուր դրությունը, հայ թատրոնի վիճակը — ողբերգական։ Ինքը՝ Չմշկյանը լավ է գրել. — «Նա (հայ թատրոնը. Ս. Հ.) վիրավորված առյուծի պես դեռ ուղեն է ընկնում, երբեմն ընկնում է, երբեմն ոտի է կանգնում, երբեմն հռոպելով, երբեմն ծիծաղելով անկիրթ, հարուստ

<sup>1</sup> «Արձագանք», 1895 թ., № 104, «Հայոց թատրոնի առթիվ». անստորագիր:

<sup>2</sup> Տե՛ս «Արձագանք», 1897 թ., № 124:

<sup>3</sup> «Արձագանք», 1885 թ., № 27:

հարստահարող հայերի վրա, բայց միշտ բողոքում է կրկնելով անմահ ճշմարտությունը, — «Cogito ergo sum»<sup>1</sup>:

«Այո՛, միակ փրկությունը և հայ թատրոնական բեմի գոյություն հարատևությունը, անմիջապես կախված է դերասանական խմբի անձնվեր գործունեությունից», — մտածել է Չմշկյանը, շունենալով ուրիշ և ոչ մի հույս՝ սիրած գործը շարունակելու համար<sup>2</sup>:

Չմշկյանը երազ է ունեցել — համախմբել բոլոր հայ դերասաններին, որոնք կստեղծեն մի շկուլա, «... որի շնորհիվ թե՛ թատերական ռեպերտուարը կհարթտանա, թե՛ նոր գործող տաղանդներ առաջ կգան և թե՛ - կվարձատրվի այնուհետև դերասանների աշխատությունը: Իսկ այդ տեղը, ուր պիտի գումարվեն հայ դերասանական ուժերը, Թիֆլիզն է, որը Ռուսաստանի հայոց մտավոր կյանքի կենտրոնն է, որտեղ առել է իր սկիզբը հայ թատրոնական բեմը Ռուսաստանում, որի շնորհիվ գոյություն են ունեցել Կովկասի և ուրիշ հայաբնակ գավառների թատրոնական ներկայացումները»<sup>3</sup>: Իր երազանքները հիմնավորելու համար Չմշկյանը դիմում էր նաև անցյալի օրինակներին — Շեքսպիրի ժամանակ՝ նրա դերասանական, Մոլիերի ժամանակ՝ սրա դերասանական միջավայրին: Սակայն ի՞նչ օգուտ այդ օրինակներից, երբ նույն Չմշկյանը դատնություններ արձանագրում էր մի ճշմարտություն — ա՛յն, որ, եթե անգամ Գր. Արծրունին իր գալերեայի «անկյուններից մինը հարմարացրել է թատրոնի շինություն համար», «թատրոն կա, ուրեմն, նույնիսկ որոշ գումար փող, որ հավաքել են Յազոն Թումանյանը և հայ թատրոնի դադափարի համար իր կյանքի ամբողջ ուժերը նվիրող Գ. Սունդուկյանցը», չկա, սակայն, ապահովություն դերասանի համար, դերասանը արհամարհված է, դերասանը դերասան էլ չէ, եթե գոյություն միջոց չունի, եթե նրա արվեստը նրան չի կերակրում. — «...մեզանում չկան դերասաններ, — գրում էր

<sup>1</sup> «Մշակ», 1875 թ., № 41: Լատիներեն է. — Ես մտածում եմ, ուրեմն, ես կամ:

<sup>2</sup> «Նոր դար», 1893 թ., № 78. «Հին թատրոն» ստորագրությամբ:

<sup>3</sup> «Մշակ», 1887 թ., № 116:

Չմշկյանը:— Դերասանը նա է, ով ապրում է դերասանական արհեստով, ով ունի իրավունք, տեղ և միջոց վաստակելու այդ արհեստով իր օրական ապրուստը: Մեղանում չի եղել և չկա ոչ մին, որ ապրեր լոկ այդ արհեստով»<sup>1</sup>:

Թատրոնը միջոցներ է պահանջում, իսկ այդ միջոցները չկան: Չմշկյանի առաջարկների մեջ կար մի կետ, որը վերաբերում էր փայտտիրական ընկերություն ստեղծելուն<sup>2</sup>: Նա ապացուցում էր, որ թատրոնը պահպանելու համար փայտտիրության սկզբունքը օգուտ կրերի: Դրվատում էր վրաց հասարակության վերաբերմունքը թատրոնի նկատմամբ, և հակառակը, դատապարտում էր հայերին: Սխալվում էր Չմշկյանը՝ սոցիալական շերտավորում շտեմնելով վրաց հասարակության մեջ<sup>3</sup>: Բայց նա ճիշտ էր մատնանշում շարիքը, երբ խոսում էր հայ հասարակության մասին, ընդգծելով բուրժուական երիտասարդության ծաղրն՝ ու արգահատանքը՝ հանդեպ ազգային թատրոնը: Այդ երիտասարդության մասին էր գրում Չմշկյանը.— «Դորանց տուն՝ դու դատարկ զվարճություն, տուն՝ դու թատրոն, բայց ի՞նչ թատրոն, տար դրանց տեսնելու «Зеленый остров», «Орфей» և այլն: Թող օր տեսնեն դրանք կանկան բեմի վերա... զվարճաճան. նրանց հետ խոսելու ժամանակ շողորթթիր դորանց՝ մեկին ասա՛, որ դու երևելի բժիշկ ես, մյուսին՝ թե դու նշանավոր իրավաբան ես, երրորդին՝ որ գեղեցիկ ես, անման վիրտուոզ ես և այլն: Ահա՛ այդ խմբիկների գործունեությունը... Ի՞նչ... թատրոն... հայոց թատրոն դու ուզում ես սրա՞նց օգնությունը իրագործել...»<sup>4</sup>:

Գևորգ Չմշկյանը կատաղի հարձակվել է նրանց վրա, ովքեր վարկաբեկում էին թատերական արվեստը հանուն գոհճիկ շահի և փող էին կորզում հանդիսականից: Նման բախտախնդիր մարդիկ քիչ չէին: «Նրանց ի՞նչ փուլթ, թե

<sup>1</sup> «Մշակ», 1879 թ., № 53:

<sup>2</sup> «Մշակ», 1873 թ., № 51:

<sup>3</sup> Նույն տեղը:

<sup>4</sup> «Նոր դար», 1887 թ., № 75:

ժողովուրդը հայհոյելով է վերցնում մուրացկանությամբ ծախած տոմսակը, ի՞նչ փուլթ, թե ներկայացման միջոցին շատերը քնում են քաղցր քնով, իսկ ներկայացման վերջը հայհոյելով դուրս են գնում թատրոնից. նրանց ի՞նչ փուլթ, վերջապես, թե այդ տեսակ թատրոնական ներկայացումներով զեռես նոր զարգացող թատրոնական գործը արմատից են հանում, վեր են գցում նրա արժանավորությունը, կոտրում են նրա աճունը և թաղում են նրա ապագան»<sup>1</sup>: Ոմն Մդիվանյանց «անվախ ու համարձակ» վերցնում էր «Ամերիկյանցի զերերը և բեմ էր դուրս գալիս նրան փոխարինելու համար՝ ողորմելի հայ թատրոնական բեմի վրա... Ամոթ է, ամոթ և հազար անգամ ամոթ, այդ ձևով փող որսալ հասարակութենից և մեկ քանի գոռչ գրպանը դնելու համար արատավորել հայ թատրոնի անունը»<sup>2</sup>: Բացահայտ անկում սերմանող այդ տիպերին էլ Չմշկյանը համարել է տիրացուներ, որոնք Սաղմոս երգելուց ավելի ոչինչ չգիտեին և, սակայն, նստում էին հանդիսականի վրին<sup>3</sup>:

Չմշկյանի թատերական հրապարակախոսությունյան մեջ կա այն ազնիվ, բարոյական բարձր միտումը ևս, որը նրան դարձնում էր իր սերնդի հաղափարախոսը և նրա գործի անկաշառ պաշտպանը: Արդեն իսկ ուրախալի էր, որ դերասան Մ. Ավալյանի առնչությունը մամուլում գրվում էր.— «Դա հայ թատրոնի անխոնջ մշակն է, դա Ամերիկյանի և Չմշկյանի ժառանգն է, միայնակ հիշատակը Թիֆլիզի հայ թատրոնի անցյալի...»<sup>4</sup>: Ու, երբ վեճ ծագեց Չմշկյանի ու Արծրունու միջև, երբ Գրիգոր Արծրունին փորձել էր ֆելիետոնի ոճով խոսել Չմշկյանի սերնդի արվեստագետների մասին<sup>5</sup>,

<sup>1</sup> «Մշակ», 1876 թ., № 5:

<sup>2</sup> «Մշակ», 1878 թ., № 170:

<sup>3</sup> Տե՛ս «Մշակ», 1876 թ., № 11: Զայրույթով է գրել Չմշկյանը նաև Շերապիբի անունը շահագործող իմաստակների մասին, որոնք իրենց արարով «վերբեր էին հասցնում մեր մայրենի բեմի վսեմ գաղափարին» (Վնոր դար», 1902 թ., № 57):

<sup>4</sup> «Մեղու Հայաստանի», 1880 թ., № 76:

<sup>5</sup> «Մշակ», 1876 թ., № 40:

Չմշկյանը պատասխանեց Էրան այսպես. «Ես խոստովանել եմ, որ պպ. Ամերիկյանցը, Մանդինյանցը, Սուքիասյանցը և հանգուցյալ Մատինյանցը եղել են տաղանդներ և երբէք չէի մտածել, որ պ. Ասիացին (Արծրունին. Ս. Հ.) կարող էր և կկամենար «ըստ հիշողութեանս» կարծած տաղանդավոր անձնավորութիւններից շինել Ֆելիետոնական նյութ և իմ միամտաբար հայտնված մտքերիս անկեղծութիւնով հայհոյել իմ բարեկամիս և ընկերոջս (Կ. Պոլիս մեկնած Ամերիկյանին. Ս. Հ.): Այդպիսի միջոցով բավականացնել մի որևիցե անձնական կիրք, ես այդ համարում եմ անմենաստոր և անազնիվ գործ»<sup>1</sup>:

Գ. Արծրունու և Գ. Չմշկյանի միջև վեճը և պայքարը շարունակվեց: Արծրունին առիթ էր որոնում նոր վեճ բացելու Չմշկյանի դեմ և այդ առիթը Չմշկյանի Կ. Պոլիս կատարած ուղևորութիւնն էր՝ Աղամյանին, Սիրանուշին և այլ դերասանների Թրիլիսի հրավիրելու համար: Չմշկյանը մեղադրվեց այն բանում, որ նա իբր իր համար կոնֆորտ է ստեղծել, ավելորդ ծախսեր է արել: Ն. Ամատունին, թատրոնական հանձնաժողովի կողմից պատասխանեց Արծրունուն և ամբաստանեց Չմշկյանի բարոյական դիրքերը<sup>2</sup>: Սակայն պատասխանեց Արծրունուն և Չմշկյանը, գրելով թե Արծրունին «թույլ է տալիս յուր արբայնականներին հարձակվել ինձ վերա իբրև անցյալի, ներկայի և գուցե դեռևս (ես քառասուն և երեք տարեկան եմ միայն) ապագայի գործչի վերա...»<sup>3</sup>:

Վեճի և պայքարի ամենասուր խնդիրը, այնուհանդերձ, «Մշակի» հիմնադրումը, նրա հիմնադրման գործում Ամերիկյանի և Չմշկյանի մասնակցութեան հարցը եղավ: Արծրունին ծիտեց այդ մասնակցութիւնը, հարձակվելով Չմշկյանի վրա՝ սրա հուշերի առթիվ<sup>4</sup>: Չմշկյանը նոր հողված գրեց, որով վերականգնում էր ճշմարտութիւնը, ետ էր մղում Արծրունու

<sup>1</sup> «Մեղու Հայաստանի», 1876 թ., № 43:

<sup>2</sup> Տե՛ս «Մեղու Հայաստանի», 1880 թ., № 55:

<sup>3</sup> Տե՛ս, Չմշկյան, «Իմ հիշատակարանը», էջ 108—112:

<sup>4</sup> Նույն տեղը:

հարձակումները, որ ինքը և Ամերիկյանը իբր հետադիմականներ են եղել (ըստ Արծրունու), իսկ Արծրունին առաջադիմական միակ մտածողը: Չմշկյանը դրում է. — «Ընթերցողն իմ բացատրություններից, անշուշտ, եզրակացնում է, որ պ. Գ. Արծրունին ամբողջ յուր պատասխանը կենտրոնացրել է յուր անձնավորության վրա և ցանկացել է հերքել լոկ ինքնամոլության տեսակետից: Ամենաթույլ, ամենամեղմ ակնարկը, որ հիշեցնում է ճշմարտությունը և վիրավորում է պ. Գ. Արծրունու եսամոլությունը, նրան վրդովում է: կատաղության է հասցնում:

Բայց կա մի բան, որ ճանաչելը ամենից բարձր ենք համարում. դա սուրբ ճշմարտությունն է:

Ա՛յո, պ. Գ. Արծրունի, ճշմարտությունը պետք է ճանաչել, ոչ միայն հիշողությունների գրելու ժամանակ, այլ միշտ, ամեն օր, ամեն ժամ պետք է նորան զոհ բերել ամենայն բան՝ յուր եսը, յուր փառամոլությունը և նորանում որոնել և գտնել փառք և պատիվ<sup>1</sup>:

Մերանում էր Գևորգ Չմշկյանը, բայց հայ թատրոնի դադափարը և գոյության կնճռոտ հարցը մնում էր նրա հրապարակախոսության հիմնական մոտիվը: 1905 թվականին նա նորից նոր առաջարկ էր անում՝ շունչ տալու հայ թատրոնին. «Թե իմ հասակս, թե այս հասակիս մեջ տեսած և զգացած դառն սև օրերի արյունոտ հետքերը շեն թողնում ինձ մտածել և հետաքրքրվել ներկա տխուր օրերում երևան հանած հարցերով, այնուամենայնիվ, ես շոշափում եմ մի կարևոր հարց, որ երբեմն եղել է իմ կյանքիս նպատակը, — դա է հայ թատրոնական գոյության ինչ լինելը:

Թատրոնական բեմի գործիչները, որոնց մինչև այդ ժամանակ կարելի էր մատնեբրով հաշվել, արդեն բազմացան՝ թե դերասանուհիներով, թե դերասաններով և ամեն մեկը նրանցից աշխատում էր պարապմունք դարձնել իր համար այդ արհեստը և ապրել նրանով:

Հայ թատրոնական կոմիտեները դադարեցին գործելուց,

<sup>1</sup> «Արձագանք», 1890 թ., № 12, էջ 11—12:

մութացկանութեան միջոցով հավաքած փողերը, օգուտ թատրոնական ֆոնդի շուայլելուց հետո, բազմազան դերասանական խումբը դիմեց այս ու այն կողմ հաց ճարելու:

Եվ ներկայումս մենք ունենք դարձյալ մի կոմիտեա, որի վերջը վաղ թե ուշ, պիտի լինի միևնույնը, ինչ առաջինները:

Ուրեմն, մի ժողովուրդ, որ ունի ընդունակութիւն ստեղծել թատրոնական բեմ, նրա համար պատրաստի վատ թե լավ դերասանական ուժերը, շարտի դադարի միջոց գտնելու և ապահովեցնելու այդ բեմի գոյութիւնը:

Օրինակ վերցնենք փոքրիկ շէխ ազգին, որը գտնվելով միևնույն ճնշված դրութեան մեջ Ալստրիայում, միևնույն ձևով, ինչպես հայերը, ստեղծեց իր համար թատրոնական բեմ և իրականացրեց նրա գոյութիւնը ակցիոներական ընկերութեան միջոցով և ներկայումս Պրագայի շէխական թատրոնը համարվում է ի շարս եվրոպական լավ անուն ունեցող թատրոնների:

Եթե մենք զգում ենք, որ թատրոնական բեմը հայերեն լեզվով օգտավետ է և մեծ բարոյական նշանակութիւն ունի հայ ժողովրդյան համար, ուրեմն, ինչու՞ չաշխատել կառուցանել սեփական տուն թատրոնի համար և այն ձևով, ինչ ձևով արել են շէխերը...»<sup>1</sup>:

Հայ նոր թատրոնի 50-ամյակին, 1908 թվականին, Չմբշկյանն իրավունք ուներ ասելու. «Քսան և երկու տարեկան հասակումս, ինքնագոհ և ինքավստահ երիտասարդս, մոտեցա հայ նոր ստեղծվող և գոյութեան նշաններ արտահայտող հայ թատրոնական բեմին և ցնցվեցի: Այդ ժամանակ հայերեն խոսալ, հայերեն իր կարծիքը բերանացի միմյանց հայտնել, նաև երիտասարդութեան մեջ, դա մի մեծ բացառութիւն էր:

Ուրեմն, հայտնի բան է, ինձ վրա մեծ տպավորութիւն արավ հայ բեմը, որից խոսում էին իրարու հետ հայերեն:

Ես հափշտակվեցի և այդ օրից, չնայած իմ գիտնական երիտասարդութեանս արժանավորութիւններին, ես ինձ այդ

<sup>1</sup> «Արշալույս», 1905 թ., № 56:

օրից նվիրեցի հայկական բեմի գաղափարին, որը դարձավ ինձ համար, մինչև 1886 թվականը, սուրբ գործ, որի մասին ես գրիչներ էի կոտրտում թե այն ժամանակվա «Մշակում», հետո «Փորձում», «Արձագանքում» և ուրիշ գոյություն ունեցող այդ ժամանակամիջոցին հայ լրագիրներում:

Վերջապես, հայ թատրոնական գաղափարը տարածվեց ամեն տեղ և ստեղծվեցին ղանազան թափառական խմբեր և գաղափարը իրականացավ և ներկայումս դա անխուսափելի մի գործ է, որ գրավում է հայ հասարակութայն ուշադրությունը:

Ուրեմն, ինչու՞ չպետք է գաղափարը, որ արդեն դարձել է փրողություն և որին կարճ միջոցում ղոհել են այնպիսի ինքնագույն տաղանդ—բեմական ղոհեր, ինչպես են Մատինյանց, Սուբիասյան, Միրաղյան, Ա. Միրաղյան, Քեթևան Արամյան, վերջը իմ թանկագին—աշխատակից Սաթենիկ Չմշկյանը,— իրագործվի:

Ժողովուրդը գտել է ուղին և ճանապարհը. ի՞նչն է արգելում հայկական բեմին գոյություն ունենալ իբրև բաղաբացիական պահանջ:

Պատճառը մեր մեջն է. մեր անտարբերությունն է, մեր ինքնամոռացությունը: Չէ՞ որ մենք ես պատկանում ենք մի ազգության, որ դարերի շրջանում շի մոռանում իրան հայ անվանել և ազգակից է տիեզերական ազգերի:

Թող այն փոքրիկ հասարակությունը, որ այսօր հավաքվել է տոնելու այդ 50-ամյա տոնը հիշե, որ ամեն մեկը նրա անդամներից պարտական է անել այն, ինչ թելադրում է իր պարտականությունը և հասկանալ թատրոնի գոյությունը պահպանելու գործնական միջոցով»<sup>1</sup>:

Գ. Չմշկյանը հավատում էր և հիասթափվում, նորից հավատում էր և նրա աչքերի առաջ նորից կանգնում էր հայ թատրոնը՝ իր ողբերգական վիճակով—անպաշտպան ու որր: Եվ կարծեք գիտեք նա, ղգում էր, որ ապագան շի մոռանա նրան և նրա բաջարի սերունդը. «Այդ հեռու անցյալի ալղե-

<sup>1</sup> «Տարազ», 1908 թ., № 2, էջ 11:

ցութջան շնորհիվ, հիսունական թվականի սկզբում՝ ծագվեց, ստեղծվեցավ և պիտի մնա անվերջ շարունակելի հայ թատրոնի գաղափարը... Թո՛ղ քեզ պարսավեն, իմ սիրած գաղափար, թո՛ղ քեզ ճնշեն, հալածեն... Թո՛ղ քեզ հարստահարեն ամեն տեսակ դրութջան մեջ գտնված մարդիկ, նաև զանազան դերասանական պարազիտներ— դու կաս և կմնաս անմահ...

Վկա եղեք Դու՛ք՝ սիրած գաղափարիս նվիրված նահատակ՝ Պեշիկթաշլյան, Դուրյանց, Փուղինյանց, Տեր-Գրիգորյանց... Ամերիկյանց, Քեթևան Արամյանց, Աստղիկ և այլ դերասաններ, որ կգա ժամանակ, երբ ձեր գերեզմանների վերա, իբրև սուրբերի վերա, լույս պիտի ծավալի, որովհետև Դուք մեռաք, կրելով Ձեր անշնչացած կրծքով հայ թատրոնի վսեմ գաղափարի ապագայի լույսը»<sup>1</sup>:

Չմշկյանը մարգարեացավ:

## ԱՐԵՎԵԼՔ ԵՎ ԱՐԵՎՄՈՒՏՔ

1870-ական թվականների վերջում Թրիլիսահայ (կովկասահայ) թատրոնը ճգնաժամի մեջ էր: Որևէ օժանդակությունից զուրկ, երեսնիվայր թողած թատրոնը քայքայվեց: 1879 թվականին մահացավ Կ. Պոլսից վերադարձած Ամերիկյանը:

Գ. Չմշկյանը, Գ. Սունդուկյանը, թատրոնի գործով նախանձախնդիր մարդիկ ճգնաժամից զուրս գալու ելք էին որոնում: Ամենից շատ զգացվում էր դերասանական ուժերի պակասը: Չկար նյութական հիմքը, լուրջ խնդիր էր նաև ունիվերսալը:

Մ. Ամերիկյանը Չմշկյանին արդեն իսկ պատմել էր, որ Կ. Պոլսում նրա հետ գործել էին՝ թարմ, նոր, շնորհալի դերասանական ուժեր՝ Ադամյան, Սիրանուշը և այլք: Չմշկյանն էլ նամակագրություն է սկսում Պ. Ադամյանի հետ<sup>1</sup>:

Գ. Չմշկյանը մեկնում է Կ. Պոլիս, բանակցություններ է վարում տեղում Ադամյանի և ուրիշ դերասանների հետ:

Թրիլիսիում նոր դերասաններին ջերմորեն ընդունեցին Գ. Սունդուկյանը, նույն Գ. Չմշկյանը, թատերական մասնաժողովի նախագահ Ն. Ամատունին, անհասարակ հասարակայնությունը:

<sup>1</sup> Տե՛ս Չմշկյան, «Իմ հիշատակարանը», էջ 117—126, նաև՝ Պետրոս Ադամյան, «Նամակներ», կազմեց և ծանոթագրեց Գ. Խ. Ստեփանյան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1959 թ., էջ 9—18:

Հիմնովին համալրվեց դերասանական խումբը. Թբիլիսիում հավաքվեցին և հետզհետե իրենց գործունեությունը ծավալեցին Ադամյանը, Մնակյանը, Աստղիկը, Սիրանուշը, Հրաչյան, Մարի Նվարդը, Կարադաշյանը: Թատերական մասնաժողովը գտաւ նյութական, թեկուզ կարճատև, օգնություն որոշ միջոցներ, Կ. Պոլսից եկած դերասաններն էլ առաջարկեցին իրենց ռեպերտուարը:

Գ. Չմշկյանն այժմ կարող էր ասել, որ «այս տարվա (1879 թվականի) վերջից սկսած Ս. Հ.) ղեկավարությունը մի նոր դարաշրջան է հայոց թատրոնի համար...»: Մյուս կողմից, նա, Չմշկյանը բարոյական բավարարություն էր ստացել իր կատարած գործից, Թբիլիսի հրավիրելով մի խումբ նոր դերասանների և օգնել է նրանց ըստ ամենայնի. ինքն էլ գրել է. «Պոլսեցիներին Թիֆլիզ բերելու օրից, ես աշխատում էի ծանոթացնել նորանց ինձ ծանոթ հայտնի դերասաններին հետ: Մանավանդ Պ. Ադամյանին ես իմ գովասանքներովս այնտեղ հասցրի, որ նա մի տեսակ պաշտելի առարկա դարձավ երիտասարդության համար: Այնքան հափշտակվեց նուրանցով հայ հասարակությունը, որ իրանք անգամ զարմանում էին իրանց հաջողության վերա, որովհետև երբեք Պոլիս կամ ուրիշ քուրֆական ֆաղաֆներում ոչ թե այդպիսի համակրանք վայելած չէին, այլև միշտ հասարակությունը վերաբերվել էր դեպի նորանց, ըստ ընդունվածի սովորության, իբրև անարգ և ամոքալի աբհեստի տե՛ր մարդկանց հետ»<sup>1</sup>: Պ. Ադամյանն էլ իր կողմից էր վկայում Կ. Պոլսի մասին. — «Հոս ազգությունը կղերին և կրոնքին խաղալիքն է. հոս ուսման դիրքերը խաղի թղթերու հետ կփոխեն...»<sup>2</sup>:

Սակայն չի անցնում նույնիսկ մի տարի և խոշոր վեճ, նույնիսկ վերին աստիճանի լարված դրություն է ստեղծվում Չմշկյանի և Կ. Պոլսից եկած նույն դերասանների միջև:

Գևորգ Չմշկյանը, երբ նախաձեռնեց իր ճանապարհորդությունը Կ. Պոլիս, չէր մտածում, նույնիսկ չէր ենթադրում,

<sup>1</sup> Չմշկյան, «Իմ հիշատակարանը», էջ 136: Ընդգծումն իմն է. Ս. Հ.:

<sup>2</sup> Պետրոս Ադամյան, «Նամակներ», էջ 10:

որ նման մի վեճ, նման մի լուրջ պայքար կարող է առաջ դալ իր և պոլսեցիների միջև:

Բայց վեճը և սկսած պայքարը ամենից քիչ անձնական բնույթ ունեն: Անձնական որևէ վերաբերմունք, անշուշտ, ղգացվում էր. տատանվեց դերասան Չմշկյանի դիրքը, խրմբում նա ղեկավար դեր չէր խաղում: մթնոլորտը թատրոնում փոխվել էր: Առաջին, խիստ անհանդուրժելի հարվածը հասցրեց Գրիգոր Արծրունին՝ «Մշակում» զբալարտելով Չմշկյանի ճանապարհորդութայն մանրամասները:

Բանն այն էր, որ Չմշկյանը ստիպված էր խմբից հեռանալ և «գրսից» դիտել իրերի ընթացքը, այն էլ ոչ թե մի տարի, այլ մի քանի տարի շարունակ: Հոգեկան ծանր վիճակ ստեղծվեց նրա համար, սակայն նա չէր խոստում իր անձնական վիճակի մասին, նրան մտահոգող գլխավոր առարկան հայ թատրոնի ուղղութունն էր:

Վեճը և պայքարը մեծապես սկզբունքային բովանդակութուն ստացան և ցնցեցին հայ հասարակական-թատերագիտական միտքը, հասարակական ուղղութունները, մամուլը: Պայքարի մեջ մտան Գր. Արծրունին, Սեն. Արծրունին, Սպանդար Սպանդարյանը, Աբգար Հովհաննիսյանը, ինքը՝ Գ. Չմշկյանը: «Մշակը», «Մեղու Հայաստանին», «Նոր դարն» անընդհատ գրում էին հայ թատերական կյանքում ստեղծված դրության մասին: Այդպիսի մի պայքար կարող էր ծնվել, եթե հող կար, եթե բանակներ կային, եթե ուղղութուններն ունեին իրենց թատերագիտական-էսթետիկական ծրագիրը: Այդ հողը կար, այդ ծրագիրը ևս կար:

Բոլորովին տվյալներ չկան ապացուցելու համար, որ առանձնապես Գ. Չմշկյանը հետապնդել է որևէ մի դերասանի հետ անձնական հարաբերությունները փշացնելու միտքը: Նա անձնավորութունների հետ չէր վիճում, անձնավորությունները չէին նրա խոհերի առարկան: Չմշկյանին զբաղեցնող հիմնական խնդիրը վերստին հայ թատրոնի բովանդակության, նրա ռեպերտուարի, նրա գեղարվեստական էության խնդիրը դարձավ: Եվ եթե Չմշկյանը մտավ պայքարի մեջ, միմիայն մի նպատակով, ցույց տալ թե ո՛ր է զնում

հայ թատրոնը, ի՛նչ է նրա ներկա վիճակը, ի՛նչ է լինելու նրա ապագան:

Հիրավի, ստեղծվեց մի բարդ հանգույց: Կ. Պոլսից եկած դերասանական ուժերը կարող ուժեր էին: Չմշկյանը նրանց տաղանդը չէր թերագնահատում, անձամբ՝ նրանց համակրում և արժեքավորում էր: Սակայն նա տեսավ, որ Կ. Պոլսից բերված ռեպերտուարը, դերասանների գեղարվեստական շկոլան՝ ընդունել չի կարող:

Հսկայական վիճ էր բացվել արևմտաեվրոպական՝ մելոդրամատիկական, հակառեալիստական և դաստիարակչական արժեքից զուրկ թատերական ուղղության և ռեալիստական, գաղափարապես բարձր, գեղարվեստական մեծ արժեք ներկայացնող կովկասահայ թատերական ուղղության միջև: Չմշկյանը մտավ գաղափարական պայքարի մեջ, տեսնելով, որ իր սիրած ու փայփայած մտքերն՝ ու հայացքները ոտնահարվում են Արևմուտքից եկած անընդունելի թատերական ուղղության կողմից:

Այդ պայքարի օբյեկտիվ իմաստն այս էր— փրկել Ադամյանին, Սիրանուշին, ազատել նրանց այն օրերի ոչ դասական Արևմուտքի գաղափարական ու էսթետիկական ազդեցութունից և «վերամկրտել» նրանց, վերագաստիարակել և՛ Արևելքի և՛ Արևմուտքի, նախ և առաջ մեղանում արդեն հարուստ դրսևորում գտած ռուսական առաջավոր թատերական կուլտուրայի ոգով և տրադիցիաներով:

Այս պայքարում բացահայտվեց և կատարելագործվեց Ադամյանի հանձարը և ծնվեց Ադամյանի արվեստի նոր ուղղությունը, նրա նոր էսթետիկան:

Ռուսահայ-կովկասահայ հողի վրա փոխադրված՝ Արևելքի և Արևմուտքի թատերական ուղղությունների բախումն ավարտվեց Արևելքի հաղթանակով. այդ հաղթանակը նաև Ադամյանի ու Սիրանուշի հաղթանակը դարձավ: Չմշկյանը ևս հասավ իր նպատակին:

Սակայն պայքարը սուր բնույթ ուներ: Չմշկյանը երկար ժամանակ չէր հանգստանում, ինքը ևս երբեմն շափազանցությունների մեջ էր ընկնում, երբեմն հակասում իրեն, բայց

աշխատում էր միշտ հավատարիմ մնալ իր հիմնական սկզբունքներին՝ ռեալիստական թատրոնի ուղղությանը:

1879 թվականին, «Թատերական նոր դարագլխի» սկզբնավորման տարին, իր կողմից ռուսերենից փոխադրված «Անանուն կատակ» վոդևիլին Չմշկյանը կցում է իր սեփական «Թատրոնական ժամանակագրությունը», որը նույն տարին «Փորձում» տպագրված Մ. Աղաբեկյանի «Հայկական թատրոնի անցյալը» հոդվածի արձագանքն էր<sup>1</sup>:

Սխալվում էր Չմշկյանը՝ երբ «Բլուկաձև»՝ անլտեղի և անճիշտ հորջորջումով էր խոսում իր իսկ ժողովրդի մասին: Բայց հետաքրքրական էր նրա այն միտքը, որ եթե Անգլիան «չծնեք Շեքսպիրին, գուցե Ֆրանսիան շատեղծեր Մոլլեր և Ռասսինը, շլինեին սոքա, գուցե չէին երևալ երկու հզոր և հսկա թատրոնական հանճարները՝ Գյոթեն և Շիլլերը»: Պետք է սովորել նրանցից, — պնդում էր Չմշկյանը: Նա գտնում էր, որ Կ. Պոլսի, արևմտահայ պատմական և արդիական դրամատուրգիան (Պեշիկթաշկյան, Հեքիմյան, Գուրջան. Ս. Հ.) ազգային տեղական կոլորիտ («բնույթ», «ոգի») չունի, որովհետև Պոլսո հայերի կյանքը... «ենթարկվել է եվրոպացվոց ազդեցության, գլխավորապես ֆրանսիացվոց և իտալացվոց, որոնցից և սկսել են ուսանել և թարգմանել թատերական խաղեր»: Նա համաձայնվում է Մ. Աղաբեկյանի այն մտքին, որ արևելյան հայերը առավել պահպանել են ազգային բնավորությունը, «նորա սովորությունները, կյանքի եղանակն, որովհետև մենք միշտ կից ենք եղել Հայաստանին և այդպիսությունով մեր թատրոնական խաղերը, թե պատմական և թե տեղական կյանքից վեր առած, կրում էին յուրյանց վերա առավել ճշտություն, առավել՝ այսպես ասել՝ հայություն», — այսինքն ազգային կոլորիտ և ազգային յուրահատկություն:

Այսպիսի խոհերով էր դիմավորում Գ. Չմշկյանը Կ. Պոլսից եկած դերասանների գործունեությունը Թրիլիսիում: Գալիս է 1880 թվականը: «Ավազակների» ներկայացման առի-

<sup>1</sup> Տե՛ս «Անանուն կատակ», վոդևիլ, փոխադրեց ռուսերենից Գ. Չմշկյանը, Թրիլիս, 1879 թ.: Չմշկյանի հոդվածը վերջում՝ էջ 1—5:

թով նա արդեն նկատել է տալիս, որ դահլիճը բաժանվել է «կուսակցությունների»: Չկա միասնություն, վատ բարքեր են վերածնվել հանդիսականների մեջ, երևացել են վարձված մարդիկ՝ դերասանին ծափահարելու համար. «խեղճ մասնաժողով և խեղճ դերասաններ», — դառնություն մը գրում էր Չմշկյանը, դառնություն ապրելով մամուլի տարբեր օրգանների և տարբեր հանդիսականների կողմից դեպի Ադամյանը, Սիրանուշը և Մնակյանը ցուցաբերած խայտաբղետ վերաբերմունքի համար<sup>1</sup>:

Բայց Չմշկյանի բուն պայքարը դեռ առջևումն էր:

Մտնում ենք 1881 թվականը: Չմշկյանը հանդես է գալիս մի շարք հոդվածներով, որոնք և՛ տեսական, և՛ ստեղծագործական հարցերին էին նվիրված:

Գերասանական ուժերի մասին նա այսպես էր գրում. — «Դա այնպիսի մեկ կազմակերպություն է, որից գերազանցը ոչ թե ամբողջ հայության մեջ չէ գտնվում ներկայումս, այլ նա կարող էր պատիվ բերել և ուրիշ ազգությանց բեմերին: Ուրեմն, քննենք այն ինչ որ կա, հայտնելով անաչառ կարծիք միայն»<sup>2</sup>: Սակայն հոդվածի սկզբում նա արդեն շարադրում է իր ելակետները. «Հեռանալով հայ թատրոնական գործունեությունից, իսկ հաճախելով միևնույն ժամանակ նորա ներկայացումներին, ես մեկ տեսակ պարտականություն եմ համարում ինձ համար հեռվից դարձյալ ինձ մոտիկ համարել այդ գործունեության, հայտնելով նորա այժմյան գործողներին՝ իմ կարծիքս և իմ համոզմունքս:

Գուցե շատերը չհամակրեն իմ հայտնած կարծիքներին, այնուամենայնիվ ես կաշխատեմ միշտ արտահայտել իմ խորին համոզմունքս, հիմնելով նորան ճշմարտության սուրբ սկզբունքների վերա:

Իմ քսանհինգ տարեկան թարմ երիտասարդական հասակիցս ես սիրել եմ այդ գործը, շարունակում եմ սիրել և պիտի սիրեմ միշտ՝ ոչ պլատոնական սիրով, այլ հաստատ դրական կերպով:

<sup>1</sup> Տե՛ս «Մեղու Հայաստանի», 1880 թ., № 85:

<sup>2</sup> «Մեղու Հայաստանի», 1881 թ., № 228:

Այս դեպքում ես ոչ թե ուրիշ հանդիսականների նման հայ թատրոնական բեմը համարում եմ լոկ զբաղմունք, այլև սպասում եմ նորա ապագայից քաղաքակրթական և ազգային օգտավետութուն:

Այո՛, և հենց այդ տեսակետից պիտի լինի միշտ իմ նայվածքս և զննողութունս՝ վերաբերյալ հայ թատրոնական բեմի գործունեությանը Թիֆլիզում:

1879 թվականից հայ թատրոնական բեմը Թիֆլիզում վերանորոգվելով, միշտ պահանջ քննի խիստ քննադատության, որովհետև նորա թե այրական և թե կանացի ուժը միշտ փոփոխության է ենթարկվում:

Երբ կա ուժ, պիտի լինի և խիստ քննութուն նորա գործունեության մասին՝ հանուն ճշմարտության»<sup>1</sup>:

Գ. Չմշկյանի քննության առարկան այս անգամ դերասանուհի Հրաչյան էր: Դիտելով նրան բազմաթիվ դերերում, բեմի «հմուտ դերասանուհու» արվեստի ուղղության մասին Չմշկյանը գրում էր, թե նա յուրացրել է և զարգացրել բնական ու կլասիցիստական ուղղությունները: Չմշկյանը պատասխանում էր և այն հարցին, թե ի՞նչ է կլասիցիզմը և թե ի՞նչու ինքը ռեալիզմի կողմնակից է, և որ Հրաչյան պետք է հաղթահարի կլասիցիզմի ու ռեալիզմի միաժամանակյա ներկայութունն իր արվեստում: Չմշկյանն ասում է. — «Եթե ինձ շահաջողվի ցույց տալ և ապացուցանել շնորհալի և հազվագյուտ դերասանուհուն այդ երկու շեղանքների ուղղութունը, և եթե հիշելով տիկինի խաղերի այն մանրամասները, որտեղ նա ձևացել է կլասիկ և որտեղ բնական (réaliste. ռեալիստ) դերասանուհի, ես հասած կլինիմ իմ նպատակիս, քաջ հավատալով, որ բեմից դուրս, աքսորված բեմական դերասանական գործունեութունից, ես դարձյալ մատուցանում եմ իմ լուսմաս իմ սիրած հայ թատրոնական բեմին:

Ձինվորված, ահա՛, այդ նպատակով ես վերցնում եմ տիկին Հրաչյայի ամենագլխավոր խաղերից երկուսը միայն —

<sup>1</sup> «Մեղու Հայաստանի», 1881 թ., № 228:

«Կատերին Հոուարդ», գործ՝ Ա. Դյումայի (հոր) և «Բաղդադի իշխանուհի»՝ հեղ. Դյումայի (որդուն):

Տիկինը հանդիսացավ բազմակողմանի հնարագետ դերասանուհի, այդ երկու խաղերի մեջ, թեև չի կարելի բիծ գցել նորա կատարած մյուս դերերի վերա, ինչպես են «Թերեզա», «Դալիլա», «Մայրական սեր» և այլն:

Բայց նախքան թե քննենք տիկինի խաղը, մեկ հայացք ձգենք կլասիցիզմի և ռեալիզմի գոյության վերա, վերաբերյալ թատրոնական արհեստին և նորանց աղղկցության մեջ բեմի վերա:

Կլասիցիզմը ստացավ այն յուր կանոնավոր գոյությունը Ռասինի ժամանակներում՝ Ֆրանսիայում և հասավ յուր կատարելության Ռաշելի և Ռիստորիի հանճարավոր տաղանդի շնորհիվ. այնուհետև նա սկսեց օրըստօրե նվազել, որովհետև սկսեց զարգանալ օրըստօրե և մաքառիլ նորա դեմ ռեալական շկոլան, որի աննման ներկայացուցիչն է այժմս երևելի ֆրանսիացի դերասանուհի Սառա Բեռնարը:

Այդպես, երկու տեսակ բեմական արհեսագիտությունները մրցելով մեկը մյուսի դեմ, վերջապես գոյացրին մեկ ընդհանուր շկոլա, մեկ տեսակ ուղղություն, ուր կլասիցիզմը զուգալորվելով, եթե կարելի է այսպես ասել, բնական-ռեալական ուղղության հետ, ստեղծեց միակ բեմական արհեստ, հիմնված կլասիցիզմի կանոնավոր արտասանության, բնական առողանության և ռեալական-բնական խաղի վերա, միմիկի և շարժվածքի բնականության վերա:

Ինչպես ամեն գիտություն, այնպես և բեմական արհեստագիտությունը առաջ բերեց մեր հիշած մրցությունից և սաստիկ շառլատանություն, որ ծնեց Ֆրանսիայում, Իտալիայում և ուրիշ տեղերում հազար ու մեկ անբնական պիեսներ, անբնական խաղի դերասաններով, ռեալական ուղղության վերնագրով:

Այսպես առաջ եկան ղանաղան «Մոնտե Քրիստո», «Չլութե դիմակ» և այլն հազար ու մեկ սորանց նման խառնափրթոր պիեսներ, ուր անհրաժեշտ էր թույն, դաշույն և այլն զարհուրելի ինչեր, և այդ պիեսները և նորանց խաղացող

գերասանները ուզում էին հավատացնել, որ նորա պատկանում են ռեալական ուղղութեան, այնինչ արհեստագիտութեանը վաղուց է, որ արտաբան էր նորանց որեւիցե շնորհալի թատրոնական բեմից:

Այդպէս, այդ տեսակ ծուր հասկացած ռեալական շկոլան արտորվելով մեծ կանոնավոր բեմերից, սկսեց թափառել այս և այն կողմը և ստեղծեց ծուր կլասիկական խառնուրդ ռեալական ուղղութեան զանազան փոքրիկ բեմերի վերա, բնականապէս հասավ և Պոլլա Ֆրանսիացոց ու իտալացոց արկածախնդիրներին շնորհքով:

Մեր բեմը, որ ծնունդ է առած Պոլսի մեջ, բնականապէս և չէր կարող չենթարկվել այդ ազդեցութեանը. նա սկզբում սխալ հասկացած կլասիցիզմի ուղղութեանը, ստեղծեց մեկ տեսակ նոր գույնի կլասիցիզմ՝ ուղրեգական արհեստ, որ գերասանը երազում էր և լաց էր լինում, գոռում և դես ու դեն ընկնում, զարհուրվելով ինքը բեմի վերա և զարհուրացնելով հանդիսականներին:

Հետզհետե ողբերգութեանը տեղ տվեց վերոհիշյալ ծուր հասկացած ռեալական ուղղութեան և շարունակում է յուր ընթացքը մինչև այսօր Պոլսի մեջ:

Ալեքսանդր Գյումա (հայրը) հետևում էր կլասիկական ուղղութեան և կամենալով միևնույն ժամանակ մոտենալ ռեալիզմին, ըստ ժամանակի պահանջման գրեց նոր պիեսներ թե պատմական և թե առօրյա կյանքից, հետևելով, ինչպէս ասացի, ժամանակի պահանջման:

«Կատերին Հոուարդը» պետք է ասած, որ ամենակատարյալն է նորա այդ կլասիցիզմին և ռեալիզմին համապատասխան պիեսան թատրոնական արհեստի կողման:

Եվ տ. Հրաչյան սքանչելի էր այդ պիեսում:

Գալով հիմա «Բաղդադի իշխանուհուն», որ տիկին Հրաչյայի գերակատարութեան մասին — իշխանուհու դերում — ես նկատեցի միևնույն կլասիցիզմի և ռեալիզմի զուգավորութեանը, ինձ մնում է այսքանը միայն ասել, որ այդ տեղ, ինչպէս և «Կուսանաց վանքում» Թերեզայի դերում, տիկինը

այնքան բնական (ոնախոտ) չէր, ինչքան «Կատերին Հոուարդում»:

Վերլուծելով այս երկու դերը, Չմշկյանը հանգում էր հետևյալ եզրակացութեան. «Նս վերջացրի այս անգամ և այլևս չեմ դառնա տ. Հրաշյայի խաղին, հուսալով որ նա, և՛ թե կգտնի ճշմարտութիւն իմ կարծիքներու մեջ, կաշխատի լինել միշտ վստահ ոնախոտ դերասանուհի և պիտի հավատա, որ գիտութիւնը ունի յուր գնահատութիւնը, և մեր թատրոնը կզգաստանա ստիպել սիրել տալ յուրյան այդպիսի տաղանդներին, ինչպես է Քիֆլիզի այժմյան հայ թատրոնի աստղ Հրաշյան»<sup>1</sup>:

Այս շարքի երկրորդ հոդվածը Գ. Չմշկյանը նվիրում է դերասանուհիներ Վիրգինյա Կարագաշյանի և Մարի Նվարդի «դերակատարութեան ներկային ու ապագային»<sup>2</sup>:

Այդ ներկան և ապագան Չմշկյանը շատ ճիշտ կերպով անշու՛մ էր ոնակերտուարի և թատրոնի ուղղութեան հետ և դերասանուհիների արվեստի գնահատականն էլ տալիս էր, ելակետ ունենալով թատրոնի արմատական հարցերը: Նա չէր ժխտում դերասանուհիների տաղանդը, սակայն քաբը քաբի վրա չէր թողնում պոլսահայ դերասանների և՛ ոնակերտուարից, և՛ նրանով պայմանաւորված հակաոնախոտական խաղատճից:

Այս անգամ Չմշկյանը դատապարտում էր պոլսահայ թատրոնի ստեղծագործական ներքին կառուցվածքը, — այն կաշկանդումները, որ ստեղծվել էին նրա ճանապարհին ոնակերտուարի և նրան համապատասխանող ստեղծագործական մթնոլորտի հետևանքով: «Ինչպես ասացինք, առաջ ամբողջ մեր Պոլսի դերասանական խումբը ենթարկված է բնականաբար շինծու ոնակական խաղի ուղղութեանը և դորանից է, — նկատում է Չմշկյանը, — որ մեզ հասած Պոլսից ոնակերտուարի մեջ չի կարելի գտնել մեկ իսկական ոնակական ուղղութեամբ թատրոնական խաղ. բոլոր նորանց թատրոնա-

<sup>1</sup> «Մեղու Հայաստանի», 1881 թ., № 228:

<sup>2</sup> «Մեղու Հայաստանի», 1881 թ., № 240:

կան արհեստագիտութիւնը հիմնված է մելոդրամաների վերաբերյալ, որի ազդեցութեան տակ այդ ուժը, համաձայն մելոդրամատիկական պրոգրամի, մշակել է այդ դերասանների համար սիրահարի, (ժենն-պրիմի), հասակավոր մարդու (գրան-պրիմի) և հակառակորդի դերեր, իսկ կանանց դերերի համար ուսումնասիրել է միայն երկու դերեր՝ այն է՝ հասակավոր կնոջ և երիտասարդ կնոջ դերեր, որ և անվանում է premier կամ grand dame և subrette կամ էնժենյու:

Նվ շատ հասկանալի է, վերցրեք որևիցե Պոլսի թարգմանական պիեսաները և կտեսնեք, որ նորա ամենքն ևս գրված են մեկ պրոգրամայով, ամենքն էլ մելոդրամաներ են, որոնց համար հարկավոր է՝ մեկ առաքինի կին, մեկ թեթև կնոջ դեր, որ կարող է կատարել թե «սուբրետ» և թե «էնժենյու» ամպլուան և մեկ հակառակորդ, որ ունի յուր մոտ թույն կամ դաշույն և կամ մեկ զարհուրելի գաղտնիք, որով վերջ է տալի դրամայի գործողութեանը միևնույն դաշույնի և թույնի միջոցով՝ մեկ ուրիշ երիտասարդ կամ հասակավոր այր անձինքների կամ էնժենյուի և սուբրետի ձեռքով:

Ի՞նչը կարող է փրկել դերասանին կորստից, ի՞նչը կարող է նրան դնել ճիշտ ուղու վրա: Այս հարցերին պատասխանում է Չմշկյանը՝ գիտութիւնը, աշխատանքը, տաղանդի ճիշտ զարգացումը:

Վ. Կարագաշյանին ու Մարի Նվարդին նա նույն խորհուրդներն է տալիս: Տեսարան և թատերական մտածող Չմշկյանի խոր գաղափարներից մեկն էր դա, որ միշտ արգասավոր պետք է լինի յուրաքանչյուր արվեստագետի կյանքի համար: Գիտութիւնից դեպի արվեստ, արվեստից-գիտութիւն, ըմբռնել, հասկանալ շեքսպիրյան համապարփակ ռեալիզմը, կանգնել բնական, ճշմարտացի արվեստի դիրքերի վրա, ջարդել դերասանին խանգարող թատրոնի ստեղծագործական կյանքի ներքին կաշկանդումները. այս էր Չմշկյանի խորհուրդը: Արվեստի և գիտութեան դաշինք. սա էր Չմշկյանի երազը, արվեստի մեջ ընթանալ գիտութեան հետ ձեռք-ձեռքի տված: «Մեր մեջ «տաղանդ» ասած խոսքը այնքան շատ առատութեամբ է գործադրվում ամեն մեկ հանգամանքում, այն-

պիսի անընդունակ գլխներ են զարդարվում դորա անմահ պսակով, այնքան իմաստակներ են գործում նորա սրբազան նշանակության դիմակի տակ, որ իսկական տաղանդ մնում է ստվերում և երբեմն անհետանում, թողնելով ի նախատինս շհասկացող հասարակության յուր անբիծ, բայց տանջված, մոռացության տված տխուր կյանքի հիշատակը, — գրում է 2 Չմշկյանը դառը խոհերով լի իր այս տողերը:

Այս ամենը գիտենալով և վստահ լինելով, որ ունիմ մի տեսակ համոզմունք վերաբերյալ դեպի իսկական տաղանդը, ես բացարձակ խոստովանում եմ, որ օր. Վիրգինե Կարազաշյանը ծնված է տաղանդ և զարգանալով Պոլսի թափառական հայ թատրոնի բեմի մոռյլ կուլիսներում, աշխատել է պահել և զարգացնել իր մեջ այդ տաղանդի ուժը, միայն... բացատրենք այդ միջանկյալ, բայց շատ դյուրամբոնելի միայնը:

Եթե ես հիմնվելով լոկ օրիորդի տաղանդի արժանավորության վերա՝ քննելի նորա խաղի այն երևույթները, ուր նորաբույս տաղանդից առավել չի կարելի պահանջել, այն ժամանակ ես «արջի ծառայություն» արած կլինեի հայ թատրոնի գաղափարին:

Ինձ մնում է բացատրել, ուրեմն, հարգելի օրիորդին և իմ կարծիքս վերաբերյալ տաղանդի օրըստօրե զարգացման պայմանների մասին, որի միջոցով նա կկազմակերպվի և կուժեղանա և այնուհետև կտմնի պատմության սրբազան էջերի մեջ:

Այս իմ միտքս բացատրելու համար, ինձ անհրաժեշտ է ցույց տալ օրիորդին այն միջոցները, որով կարելի է հասնել այդ նպատակին, թեև ես վստահանում եմ հայտնել այնպիսի մեկ կարծիք, որ գուցե օրիորդի համար  $2 \times 2 = 4$  նշանակությունը պիտի ունենա:

Տաղանդը գյուտ է, որը պետք է մշակել, իսկ որևիցե գյուտ մշակելու համար հարկավոր է դիմել դեպի գիտությունը: Բեմական տաղանդի նշանակությունն է մարդ ձևացնել բնականապես յուր բոլոր արժանավորություններով և թերություններով, ձգտումներով դեպի առաքինին և մոլին:

Ահա ինչու համար հարկավոր է, որ տաղանդը աշխատե

զարգանալ և միշտ զարգանալ, և այդ բանին կարող է նա հասնել ընթերցանության միջոցով, ուսումնասիրելով մարդկության պատմությունը երեկի թատրոնական հեղինակների գրվածքների միջոցով, որոնց մեջ, ինչպես զօրօրինակ Շերլոկի գրվածքներում, շկա դիրք, կիրք, ձգտումն, որ շլինի պարզ ներկայացրած, որը ուսումնասիրելուց հետո դերասանը միջոց ունի ամբողջապես ըմբռնելու մարդու էությունը, կարգալ նորա սրտի գաղտնիքը և հետո համարձակ «եսացնել», եթե կարելի է այսպես ասել, ամեն մեկ մարդկային տիպար բեմի վերա:

Այն ինչ տարաբախտաբար, մեր դերասաններից շատերը հազիվ թե լսած են Շերլոկի, Գյոթե, Շիլլեր, Մոլիերո անունները և բերան առնելով «արհեստ» բառը համոզված են, որ լիովին ըմբռնել են թատրոնի գոյության գաղափարը և այդ բավական է, ինչպես բավական է հյուանին աղյուս շարել, դարբնին՝ երկաթը ջարդել:

Եթե ինձ օրիորդը կհարցնե՝ իսկ ո՞ւր գտնեմ հայերեն լեզվով այդ գիտութունը, ո՞ւր են հայերեն թարգմանած Շիլլեր, Գյոթե, Շերլոկի և այլն, ես կպատասխանեմ օրիորդին. պարապեցեք ընթերցասիրությամբ, շարհամարհելով ոչ-ինչ...»<sup>1</sup>:

Գ. Չմշկյանը 1881 թվականին արդեն հաշիվը փակում էր պոլսահայ դերասանների բերած և՛ ռեպերտուարի, և՛ ուղղության հետ, այն ամենի հետ, ինչ շեղում էր հայ թատրոնի զարգացման ուղին դեպի անգաղափարայնությունը, ցածր արվեստը, դեպի հակառեալիզմը: Նա ռեալիզմի դրոշմ էր բարձրացնում, երբ բողոքում էր Արևմուտքից եկած խորթ ազդեցությունների դեմ. «Ուրեմն, եթե մեր թատրոնի նպատակն եղել և է առողջ գաղափար տարածել բեմի միջոցով հանդիսականների մեջ, եթե նա քաղաքակրթության և ազգայ-

<sup>1</sup> «Մեզու Հայաստանի», 1881 թ., № 240: Միայն հայերեն կարդացող դերասանուհուն Չմշկյանն էլ խորհուրդ էր տալիս «բրբրել մեր «Կերք Հայաստանին», կարգալ պարբերական մամուլը, ժամանակի բանաստեղծներին...

նության բարեւալման վսեմ գործիքներից մեկն է, ուրեմն նա պիտի զգուշանա զանազան անխմաստ մեկոգրամաներից, զանազան «Դուզլասներից», «Պիեր դ'Արեցոններից» և այլն ցնդարանություններից, և աշխատե միշտ մոտենալ բնականությանը: Եթե սկզբում Պոլսի ղերասանների մասնակցության առիթով մեր թատրոնական բեմը ընդունեց այդ տեսակ ռեպերտուար, այսուհետև գոնյա կարեցածին շափ պետք է փախչել այդ տեսակ մեկոգրամական ուղղությունից»<sup>1</sup>:

Սակայն պայքարը դեռ էլի չէր ավարտված: Չմշկյանը բողոքում էր և այն բարբերի դեմ, երբ հանդիսականը սխալ վերաբերմունք էր ցույց տալիս ղեպի ղերասանը, իսկ վերջինս հաշտվում էր իր արժանապատվության ստորացման հետ: Այդպիսի ղեպերի առիթով զայրույթով է լցվում Չմշկյանը և մամուլում ուղղակի աղաղակում էր. — «Քանզեցե՛ք պս. թատրոնասերներ, քանզեցե՛ք հայոց թատրոնի այսքան տարիների զոհարերություններով պահպանված և հազիվ թե երկար ժամանակ ընկնելուց հետո շունչ առած գաղափարը»<sup>2</sup>:

Ու, երբ թատերական քննադատությունը թատրոնի գոյությունը կապում էր միայն մեկ անվան հետ, մի ղերասանի կուռքն էր ստեղծում և նրա պաշտամունքը, վերհիշելով իր սկզբունքները, Չմշկյանը բողոքում էր նաև արմատապես սխալ այդ «տեսության» ու պրակտիկայի դեմ. «...Ահագին սխալ է թատրոնի գոյությունը հիմնել մի անձնավորության վերա, ինչ տաղանդի տեր և լիներ նա, եթե այդ անձնավորությունը ոչ թե ուղում է ինքը ծառայել ղեռահաս հայ թատրոնական բեմի գաղափարին, այլ թատրոնն է իրան ծառայեցնում»<sup>3</sup>:

Գ. Չմշկյանը չէր ժխտում պոլսահայ և տեղի ուժերի միացման գաղափարը. «Միացնել Պոլսո ղերասանական ուժերը մեր ուժերի հետ, դա վսեմ, լավ գաղափար է...» —

<sup>1</sup> «Մեղու Հայաստանի», 1881 թ., № 252:

<sup>2</sup> «Մեղու Հայաստանի», 1882 թ., № 4: Խոսքը նվիրներ ստանալու և նյութական միջոցներ «կորզելու» մասին էր:

<sup>3</sup> «Արձագանք», 1887 թ., № 21:

կրում էր նա<sup>1</sup>: Ավելին, 1889 թվականին նա արդեն դնահատում էր Ադամյանի առաջխաղացումը և պոլսահայ բեմի դերասանների հաջողությունները կովկասահայ պայմաններում՝ ռեալիստական, բարձր տիպի դրամատուրգիայի նկատմամբ։ — «Կարծես, հայության համար մեծած թիֆլիզի հասարակությունը, լսելով օրիորդներ Սիրանուշի, Աստղիկի, Կարագաշյանների և տ. Մ. Նվարդի բերանից հայ բարբառի քնքուշ հնչյուններ և տեսնելով պպ. Ամերիկյանի, Ադամյանի, Մնակյանի և այլոց առաջնակարգ խաղերը եվրպական նշանավոր թատերգություններում, մի տեսակ հոգեփոխություն ենթարկվեց. արհամարհածը սիրելի դարձավ»<sup>2</sup>։

Այս արդեն կարևոր ընդհանրացում էր, «դրսի» և «նեբրսի» ուժերի համախմբման մի կոչ, որի հիմքում դրված էր ռեալիստական արվեստի պաշտպանության սկզբունքը։ Իսկ երբ Չմշկյանը հայացքը դարձնում էր 1880-ական թվականների սկզբի վրա, պայքարի առաջին շրջանի վրա, ապա նա նորից և կրքոտ կերպով քննադատում էր անցյալը, գտնելով այդ անցյալում, պոլսահայ դերասանների մոտ «...ֆրանսիական թատրոնական խոհանոցի հնացած մենյուի»<sup>3</sup> գերիշխանությունը», որ այն ժամանակվա մամուլը բազմիցս մատնացույց էր արել։ Պետք է հիշել, — ասում էր Չմշկյանը, — որ «Պոլսից եկվորները բերել էին իրանց հետ և իրանց որոշ նկարատուարը, այն, ինչ որ նոքա ունեին այն ժամանակ Պոլսում։ Այդ նկարատուարով էին նոքա դաստիարակված, դա նոցա խաղի դպրոցն էր...»<sup>4</sup>։

1894 թվականին Գ. Չմշկյանը կարծես հանրագումարի էր բերում իր մտքերը Արևելքի և Արևմուտքի թատերական ուղղությունների պայքարի վերաբերյալ, նկատելով, թե ինչպիսի բարերար ազդեցություն ունեցավ Կովկասը, Թբիլիսիի

<sup>1</sup> «Արձագանք», 1887 թ., № 21: Չմշկյանը, պայքարի թե՛ օրերին էլ փնտրելի և նշել է, թե պոլսահայ դերասանները որքան ձգտում ունեին մոտենալու թատրոնի «բնական» ուղղությանը:

<sup>2</sup> «Արձագանք», 1889 թ., № 36:

<sup>3</sup> Ծառացուցակ:

<sup>4</sup> «Արձագանք», 1889 թ., № 37:

միջավայրը Ադամյանի, Աստղիկի և Սիրանուշի համար: Տեղի ուժերի, «դոցա խորհուրդներով հայ դերասանները ծանոթանում էին եվրոպական ռեպերտուարի լավագույն պիեսների հետ. նորա խրախույս էին ստանում ամենայն կողմից բարոյապես, աշխատում էին նոցա նպաստներին... մի խոսքով սերտ կապերով կապում էին նոցա իրանց հետ: Այդպիսի հաջող պայմաններում գտնվելով, դերասաններն էլ ընականապես ոգևորվում էին»<sup>1</sup>: Ադամյանի մասին նա այժմ ասում էր. «Հանգուցյալ Ադամյանը, թողնելով Քիֆիզը գնում է Ռուսաստան և ավելի հաջող պայմանների մեջ լինելով, սկսում է ուսումնասիրել յուր սիրած հերոսներին և արվեստը և այնպիսի հռչակ է ստանում, որ միմիայն վայելում էին եվրոպական կորիֆեյները՝ Ռոսսի, Սավվինի, Կոկլեն, Բառնայ»:

Կ. Պոլիսը շտվեց հայ դերասանին ռեալիզմի ոգով զարգանալու հնարավորությունը:— Չմշկյանն է գրել:— «Իսկ մեր քնքուշ սեռի տաղանդավոր ներկայացուցիչները... ոմանք վերադարձան Բոսֆորի սքանչելի ափերը, ոմանք Չմյուռնիա, և այնտեղ ասիական քնի մեջ մոռացության տվին իրանց սկսած գործը: Ի՞նչ ասենք մեր գողտրիկ Վ. Կարազաշյանի համար, որ այդպես վաղ թաղեց յուր մեծ տաղանդը. նա մեծ ապագա ուներ, սակայն արևելյան ծուլութունը քիչ մարդ չէ մեռցրել... Ի՞նչ ասենք մեր անմոռանալի Մնակյանի մասին, որ թեպետ չթողեց յուր արվեստը, բայց շարունակելով գործը տաճկական անճաշակ բեմի վրա, հետադիմել սկսեց: Երբ մի քանի տարի առաջ ես նորան տեսա Գատիքեոյ բալագանում (թատրոն չէ կարելի անվանել) երկու-երեք միլիոններում — լացս եկավ, հիշելով թե որքա՞ն հիանալի էր խաղում նա Ֆամուսովի, Գորոզնիշի դերերը՝ բոլորովին անծանոթ լինելով ռուսական կյանքին: Վերջապես, վերցնենք մեր այժմյան տաղանդավոր հյուր տ. Հրաչյային... Սա ևս 12 տարվա ընթացքում ոչինչ չէ ավելացրել յուր ռեպերտուարին»:

Չմշկյանն էր, որ առաջարկում էր նույն Մնակյանին հրավիրել Քիֆիսի և տալ նրան խմբի ռեժիսորի պաշտոնը:

<sup>1</sup> «Արձագանք», 1894 թ., № 17:

## ԱՄՓՈՓՈՒՄ

Տեսական լուրջ ժառանգություն է թողել Չմշկյանը: Նրա բնական ստեղծագործությունը ևս (նա խաղացել է համարյա հարյուր դեր) ինքնին մտածողություն էր, մտածողություն բեմի վրա, մտածողություն բնական կերպարներով, կյանքի երևույթների, մարդու պատկերումը և արտացոլումը՝ ստեղծագործող Չմշկյանի ինտելեկտուալ-զգացումային աշխարհի մեջ բեկված:

Ուրեմն, ավելի հարուստ, ավելի մեծ բովանդակություն է ունեցել նրա միտքը, քան կարելի է պատկերացնել այդ առաջին հայացքից:

Որպես տեսարան, հատկապես իբրև թատերական մտածող, Չմշկյանը տարավ հայ թատրոնի գեղագիտական մտքի զարգացումը մինչև այն սահմանագիծը, որտեղից հայ թատրոնը կարող էր, հող և հիմք ունենալ մերձենալու բեմի մեծ վերանորոգիչ, հանճարեղ Ստանիսլավսկու հռչակավոր սիստեմին<sup>1</sup>:

Գևորգ Չմշկյանը մեռավ 1915 թվականին: Նա օգնեց հա-

---

<sup>1</sup> Փաստերն ևս այդ են ապացուցում: Տե՛ս՝ Վավիկ Վարդանյան, «Թուսական առաջավոր թատերական կուլտուրայի դերը հայ թատրոնի զարգացման մեջ» աշխատությունը. Հայկական թատերական բեկերության հրատարակություն, Երևան, 1958 թ.: Օվի Սևումյանի և նրա սերնդի մարդկանց գործունեությունը Գ. Չմշկյանի արագիցիաների շարունակությունն էր՝ 20-րդ դարի առաջին երկու տասնամյակում:

րազատ թատրոնին, նախապատրաստեց թատերագիտական տեսական հայ միտքը Ստանիսլավսկուն հասկանալու համար: Չմշկյանի գործը շարունակող ղեմքերը, ռեալիստական հայ թատրոնի մարտիկներն, արդեն իսկ մոտեցան Մոսկվայի Գեղարվեստական թատրոնին, նրա փորձը, նրա բեմական տեսությունը յուրացնելու նպատակով:

Չմշկյանը, Մ. Նալբանդյանից ու «Հյուսիսափայլից» հետո, կովկասահայ իրականության մեջ լայնորեն լուսաբանում է թատրոնական գործի կազմակերպման հարցը, իր գեղարվեստական ու տեսական-բննադատական գործունեությամբ հրապարակ է բերում տիրող հասարակության բննադատության խնդիրը, մշակում է թատրոնի տեսության այնպիսի պրոբլեմներ, ինչպիսին էին — բեմի վրա կենդանի մարդու պատկերման, բեմական բնավորություն կերտելու, բնական-ռեալիստական խաղաոճ ստեղծելու, անսամբլայնություն հաստատելու պրոբլեմները: Սուր կերպարանք նա տվեց ռեպերտուարային հարցին, հետևողական կերպով պաշտպանեց ռեալիստական դրամատուրգիան (Օստրովսկի, Սուխովոկոբելին, Սունդուկյան, Շերսպիր):

Հետագայում, 1870-ական և 1880-ական թվականներին Չմշկյանը, ռեակցիայի հարձակման շրջանում ևս, հավատարիմ մնաց իր սկզբունքներին, շկորցրեց իր գաղափարական դիրքերը, այլև ավելի խորացրեց բեմական ռեալիզմի հարցերի մշակումը իր տեսական-բննադատական աշխատանքում:

Այս շրջանում է, որ նա ուշադրություն է դարձնում ռեալիստական թատրոնի ռեփիսյուրայի խնդրին, ղերասանի դաստիարակության, նորից ռեպերտուարի, բեմի վրա նորից բնականություն և ճշմարտություն հաստատելու կարևորագույն դրույթներին:

Առանձնապես զգալի դարգացում ապրեց Չմշկյանի միտքը հանդիսականի խնդրում, իր սկզբնական արատակտ և անորոշ «ամբոխ» հասկացողությունից, որոշակի կերպով հասնելով հանդիսական—ժողովուրդ հասկացողությանը:

Գևորգ Չմշկյանը մոտենում էր Ստանիսլավսկուն, մերձե-

նում էր նրա ուսմունքին իր մտքի տեսական ամենաբարձր նվաճումներով:

Չմշկյանը հայ թատրոնին տվեց այնպիսի գաղափարներ, որոնք ներդաշնակություն էին ստեղծում նրա և ուսւթատրոնի մեծագույն մտածողի միջև: Չմշկյանը Ստանիսլավսկու մասին չի արտահայտվել, բայց դա երբեք չի խանգարում տեսնելու և հասկանալու նրանց միջև գոյություն ունեցող կապը: Չմշկյանի ժառանգությունն էլ իր ժամանակին չէր ուսումնասիրված, չէր բնդհանրացված այդ ժառանգության նշանակությունը և թե այն, ինչ էր Չմշկյան-մտածողի զուգահեռը: Ստանիսլավսկին անշափ ուրախ կլիներ, որ հայ ռեալիստական թատրոնի փորձը և տեսությունը իրենց հերթին գալիս մի անգամ ևս, Ռուսաստանում ապրող ժողովուրդներին մեկի կողմից, հաստատում էին իր մեծ ուսմունքի այս կամ այն դրույթը և ելակետը: Իսկ այդ կապը ուսւ և հայ թատրոնի միջև եղել է, կար և արտահայտվել է բեմի վրա ճշմարտություն հաստատելու, կյանքի ճշմարտությանը հարազատ մնալու, մարդկային կենդանի կերպար ստեղծելու, այդ կերպարի մեջ տարրալուծվելու և վերամարմնավորվելու, կերպարի ներաշխարհը բեմի վրա ապրելու, բնականությունը հարազատ մնալու, հոգեբանական համոզիչ բնավորություններ կերտելու հարցերում:

Թատերական բննադատության և հրապարակախոսության մեջ Չմշկյանը շղափաձանեց իրեն, հավատարիմ մնաց իր համոզմունքներին մինչև վերջ, շարունակ վերհիշելով և՛ 1860-ական թվականների փորձը, և՛ հետագա տասնամյակներում հայ թատրոնի առաջ ծառայած նոր խնդիրները: Ըստ որում, նա հայացքը վերստին պահում է թատերական այն առաջավոր կուլտուրայի վրա, որի օրինակը տալիս էր հայ թատրոնին և՛ Ռուսաստանը, և՛ Շեքսպիրի, և՛ Մոլլերի, և՛ Շիլլերի, և՛ Հյուգոյի հայրենիքը:

Չմշկյանի տեսական ժառանգությունը հայ թատրոնը կապում է ինչպես 1860-ական թվականների, այնպես էլ նախասովետական թատրոնի ռեալիստական, առողջ ուղղության

հետ՝ ընդդեմ հակառեալիստական հոսանքների թատրոնի ասպարեզում:

Նա թատրոնի տեսութեան մեջ, հայ թատրոնի և հայ հասարակութեան իրականութեան պայմաններում կամուրջ է, շաղկապ է Բեկինսկուց ու Նալբանդյանից, Շչեպկինից ու Մոշալովից մինչև Արեւլյանն ու Սևումյանն ընկած ժամանակաշրջանը. Չմշկյանն ասել է այնպե՛ս, մտածել է այնպիսի ուղղութեամբ, որպէս քայլել է առաջավոր հայ թատրոնը, առաջավոր հայ թատերական տեսական միտքը 1860-ական թվականներից մինչև Օվի Սևումյանը և նրա սերունդը:

Գևորգ Չմշկյանի տեսական ժառանգութեանն այսօր դարմանալի չի թվում: Այն զարմանալի, սակայն խիստ անհրաժեշտ և տրամաբանական էր իր էպոխայում՝ ռեալիզմի հաստատմանը ծառայող պատմական մարտերում, երբ որոշիչ նշանակութեւն ստացավ դրամատուրգիայում ու թատրոնում քննադատական ռեալիզմի առաջացումն ու զարգացումը, թատրոնում բարձր գաղափարայնութեւնը և ռեալիստական զեղարվեստական մտածողութեւնը արմատավորելու հասարակական առաջավոր պահանջի կենսագործումը:

Այս դժվարին, բայց ազնիվ խնդիրները լուծեց Գևորգ Չմշկյանը՝ իր ստեղծագործական կյանքով, գործունեութեամբ և տեսութեան մարդում մղված իր անդուլ պայքարով և այդ պայքարի արգասավոր արդյունքներով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք . . . . .	42
Առաջին գրոհը . . . . .	5
Բուրժուական իրականության քննադատությունը—Քատրոնի տեսու- թյան ստեղծման հիմք . . . . .	11
«Հայ Քատրոնի դադափարը» . . . . .	18
Սեւալիզմի տեսությունը և սեւալիզմի պաշտպանությունը. Սունդուկյան	24
Բեմական սեւալիզմի պրոբլեմները . . . . .	35
Քատրոնի հրապարակախոսը . . . . .	53
Արևելք և Արևմուտք . . . . .	72
Ամփոփում . . . . .	83
	99



ՍՈՒՐԵՆ ՍՈՂՈՄՈՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ  
«ԳԵՎՈՐԳ ՉՄՇԿՅԱՆ»  
(Տեսաբան և հրատարակիչ)



Խմբագիր՝ Ս. ՍԱՐԳՍՅԱՆ  
Տեխ. խմբագիր՝ Ա. ՄԱՐՈՒԹՅԱՆ  
Վերատպագրող սրբագրիչ՝ Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ



ՀԱՅԿԱԿԱԿԱՆ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Յ ՈՒ Ն  
Երևան, Ստալինի պող. 48

ՎՖ 02203

Գատիեր 1513

Տիրաժ 1000

Հանձնված է արտադրության 5 V 1960 թ.:

Ստորագրված է տպագրության 15 VI 1960 թ.:

Թուղթ՝ 84×108<sup>1/2</sup>, տպագր. 0,5 մամ., հրատ. 4,1 մամ., +1 ներդիր՝  
Գինը՝ 3 ս. 80 կ.:

Հայկական ՍՍՌ Կուլտուրայի մինիստրության հրատարակչություններ  
և պոլիգրաֆարդյունարկության Գլխավոր վարչության  
№ 6 տպարան, Երևան, Լենինի պողոտա, № 51:

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0026516

ԳԻՆԸ 3 Ռ. 80 Կ.

A  $\frac{11}{3752}$